Թողարկման 20-րդ տարի

ՀՀ կենտրոնական բանկի տեղեկագիր

2013

Մայիս

թիվ 5 (177)

Բովանդակություն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ

4 «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին» ՀՕ-23-Ն ՀՀ օրենքը

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ
ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

6 ՀՀ ԿԲ խորհրդի որոշումները վերաֆինանսավորման տոկոսադրույքի, «Արարատբանկին», «Մոբի Դրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող ՓԲԸ-ին և մի շարք բանկերի «Քուինսթար Մանի Տրանսֆեր», «Յունիստրիմ» և «Ավերս» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն տրամադրելու, ինչպես նաև «Թել-Սել» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող ՓԲԸ-ի «Դավթաշեն» մասնաճյուղը հաշվառելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ խորհրդի և նախագահի որոշումները «Բասենի գովք» ՍՊԸ-ին արտարժույթի առուվաճառքի լիցենզիա տրամադրելու, «ՎՏԲ-Հայաստան բանկի» «Տաշիր» մասնաճյուղի գործունեության դադարեցումը գրանցելու, ինչպես նաև մի շարք ՈՒՎԿ ՓԲԸ-ների մասնաճյուղեր գրանցելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումը «Սեֆ Ինտերնեյշնլ» ՈՒՎԿ ՍՊԸ-ի «Վայոց ձոր» ներկայացուցչությունը գրանցումից հանելու և «Վայոց ձոր» և «Մասիս» մասնաճյուղերը գրանցելու վերաբերյալ

6 ՀՀ ԿԲ նախագահի որոշումները 6 գրավատների նկատմամբ տուգանք կիրառելու և 4 արտարժույթի փոխանակման կետերի, 1 ՓԲԸ-ի նախազգուշացում հայտարարելու վերաբերյալ

7 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 101-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

8 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 102-Ն որոշումը «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

41 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 103-Ն որոշումը «Ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 163-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

69 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 104-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

70 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 105-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 119-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին»

71 ՀՀ ԿԲ խորհրդի թիվ 106-Ն որոշումը «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2002 թվականի նոյեմբերի 5-ի թիվ 347-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին»

73 ԴՐԱՄԱՎԱՐԿԱՅԻՆ ԱՄՓՈՓԱԳԻՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՕՐԵՆՔԸ

«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին»[*] Հայաստանի Հանրապետության օրենքում լրացում կատարելու մասին[**]

Հոդված 1. «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության 2007 թվականի ապրիլի 9-ի ՀՕ-177-Ն օրենքի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ 3-րդ մասով:

«3. Հայաստանի Հանրապետությունը կարող է հիմնադրել արտահանման ապահովագրությամբ զբաղվող ապահովագրական ընկերություն և (կամ) լինել այդ ընկերության մասնակից: Այդ ընկերությունն իրավասու է իրականացնելու արտահանման ապահովագրություն՝ վարկի ապահովագրության դասով, երաշխիքի տրամադրման դասով և ֆինանսական վնասների դասով (ներառյալ՝ այդ դասերի ներքո ընդգրկված ենթադասերով)՝ «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված համապատասխան լիցենզիայի հիման վրա: Այդ ընկերության ընդհանուր կապիտալի չափը ստեղծման պահին պետք է լինի Հայաստանի Հանրապետության տարածքում նոր ստեղծվող ապահովագրական ընկերությունների համար սահմանված ընդհանուր կապիտալի չափից ոչ պակաս: Այդ ընկերության գործունեության ընթացքում ընկերության ընդհանուր կապիտալի չափը Հայաստանի Հանրապետության տարածքում ապահովագրական ընկերությունների համար սահմանված ընդհանուր կապիտալի չափից նվազման դեպքում այդ կապիտալի համալրումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:»:

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ս. Սարգսյան
20 մայիսի 2013 թ., Երևան, ՀՕ-23-Ն

[*] *ՀՀՊՏ 2007 N 27 (551), 30.05.07:*
[**] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է 2013 թվականի ապրիլի 30-ին (ՀՀՊՏ N 28 (968), 29.05.13):

ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ
ԽՈՐՀՐԴԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ԿԲ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԸ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԲԱՆԿԻ ԽՈՐՀՐԴԻ ԵՎ ՆԱԽԱԳԱՀԻ ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՎ

- ***Անփոփոխ է թողնվել*** վերաֆինանսավորման տոկոսադրույքը՝ 8% (որոշում թիվ 130Ա):
- ***«Քունսթար Մանի Տրանսֆեր» և «Յունիսթրիմ» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգերում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Արարատբանկ» բաց բաժնետիրական և «Մոբի Դրամ» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 126Ա, 127Ա):
- ***Դադարեցվել է*** «Թել-Սել» դրամական (փողային) փոխանցումներ իրականացնող փակ բաժնետիրական ընկերության «Դավթաշեն» մասնաճյուղը (որոշում թիվ 128Ա):
- ***Արտարժույթի առուվաճառքի լիցենզիա է տրամադրվել*** «Բասենի գովք» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը (որոշում թիվ 129Ա):
- ***«Ավերս» արտասահմանյան վճարահաշվարկային համակարգում մասնակցության թույլտվություն է տրամադրվել*** «Ինեկոբանկ», «Կոնվերս բանկ», «Հայբիզնեսբանկ» և «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերություններին (որոշումներ թիվ 136Ա, 137Ա, 139Ա, 140Ա):
- ***Գրանցվել է*** «ՎՏԲ-Հայաստան բանկ» փակ բաժնետիրական ընկերության «Տաշիր» մասնաճյուղի գործունեության դադարեցումը (որոշում թիվ 1/370Ա):
- ***Գրանցվել են*** «Ֆինքա» և «Ֆասթ Կրեդիտ Կապիտալ» ունիվերսալ վարկային կազմակերպություն փակ բաժնետիրական ընկերությունների համապատասխանաբար «Վանաձոր-1» և «Մասիս» մասնաճյուղերը (որոշումներ թիվ 1/376Ա, 1/427Ա):
- ***Գրանցումից հանվել է*** «Սեֆ Ինտերնեյշնլ» ունիվերսալ վարկային կազմակերպություն սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության «Վայոց ձոր» ներկայացուցչությունը և ***գրանցվել են*** «Վայոց ձոր» և «Մասիս» մասնաճյուղերը (որոշում թիվ 1/423Ա):
- Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջները խախտելու համար 6 գրավատների նկատմամբ ***կիրառվել է տուգանք***՝ 2455000 դրամ գումարի չափով (որոշումներ թիվ 1/391Ա-1/395Ա, 1/414Ա) և 4 արտարժույթի փոխանակման կետերի, 1 փակ բաժնետիրական ընկերության ***հայտարարվել է նախազգուշացում***՝ հետագայում նման խախտումները բացառելու հանձնարարականով (որոշումներ թիվ 1/406Ա-1/408Ա, 1/411Ա, 1/420Ա):

Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին[*]

Նպատակ ունենալով նվազեցնել բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների ծախսատարությունը և խթանել Հայաստանի Հանրապետության դրամով միջոցների հասանելիությունը,

հիմք ընդունելով «Բանկերի և բանկային գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 51-րդ հոդվածը, «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ժթ» կետը, 37-րդ հոդվածի 1-ին և 3-րդ մասերը,

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը **որոշում է**.

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի ««Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ը հաստատելու մասին» թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի 24-րդ կետում «8» թիվը փոխարինել «4» թվով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2013 թվականի հունիսի 1-ից և տարածվում է 2013 թվականի մայիսի 15-ից 2013 թվականի հունիսի 11-ն ընկած և դրան հաջորդող հաշվետու ժամանակահատվածների համար (ըստ պահուստավորման օրացույցի) բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկում իրականացման ենթակա պարտադիր պահուստավորման հետ կապված հարաբերությունների վրա: 2013 թվականի ապրիլի 10-ից 2013 թվականի մայիսի 14-ն ընկած հաշվետու ժամանակահատվածի համար բանկերի կողմից Հայաստանի Հանրապետության դրամով ներգրավված միջոցների դիմաց 2013 թվականի մայիսի 15-ից 2013 թվականի հունիսի 11-ն ընկած ժամանակահատվածում տեղաբաշխման ենթակա պարտադիր պահուստների նվազագույն չափը սահմանվում է ներգրավված միջոցների 8 տոկոսի չափով:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 ապրիլի 2013 թ., N 101-Ն

[*] *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. ապրիլի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.05.2013 թ. (ՀՀՊՏ N18 (462), 17.06.2013):

*«Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի թիվ 71-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով բարձրացնել բանկերում ներքին հսկողության համակարգի արդյունավետությունը, ինչպես նաև համապատասխանեցնել բանկերի ներքին հսկողության համակարգին ներկայացվող պահանջները Բանկային վերահսկողության Բազելյան կոմիտեի (BCBS) կողմից սահմանված սկզբունքներին,

հիմք ընդունելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» և «իբ» կետերը, ղեկավարվելով «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները» կանոնակարգ 4-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):

2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2008 թվականի մարտի 11-ի «Բանկերի ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները հաստատելու, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2004 թվականի հոկտեմբերի 12-ի թիվ 250-Ն և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 1999 թվականի մարտի 16-ի թիվ 40 որոշումներն ուժը կորցրած ճանաչելու մասին» թիվ 71-Ն որոշումը:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 ապրիլի 2013 թ., N 102-Ն

Հավելված

Հաստատված է

Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 102-Ն որոշմամբ

ԲԱՆԿԵՐԻ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Կ Ա Ն Ո Ն Ա Կ Ա Ր Գ 4

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգով սահմանվում են բանկերում ներքին հսկողության իրականացման նվազագույն պայմանները:
2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող բանկերի, ինչպես նաև օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի վրա այնքանով, որքանով կիրառելի է:

---

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. ապրիլի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.05.2013 թ. (ՀՀԳՏ N18 (462), 17.06.2013):

ԲԱԺԻՆ 2. ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գլուխ 2. Ներքին հսկողության համակարգ

3. Ներքին հսկողության համակարգը բանկի ներքին կազմակերպական կառուցվածքի, գործարար գործընթացների, ռիսկերի կառավարման համակարգի, հաշվետվողականության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման միջոցառումների համալիր է: Ներքին հսկողության համակարգն ուղղված է բանկի ակտիվների պահպանմանը, բանկի գործունեության անընդհատության ապահովմանը, բանկի գործունեությանը ներհատուկ ռիսկերի ժամանակին բացահայտմանը, գնահատմանն ու շարունակական կառավարմանը, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների՝ գործող ստանդարտներին համապատասխանության ապահովմանը, իրականացվող գործառնությունների արդյունավետության բարձրացմանը, բանկի գործունեության համապատասխանության ապահովմանը գործող օրենսդրությանը և բանկի ներքին իրավական ակտերին:
4. Ներքին հսկողության հիմնական նպատակներն են.
   1) բանկային գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտումը և կառավարումը, բանկի աշխատանքների արդյունավետ կազմակերպումը և անձնակազմի արդյունավետ կառավարումը (գործառնական նպատակ),
   2) բանկում որոշում կայացնելու համար անհրաժեշտ հաշվապահական, ֆինանսական և այլ հաշվետվությունների հուսալիության, ամբողջականության և ժամանակին ներկայացման, բանկի ներսում տեղեկատվության անհրաժեշտ հոսքերի ապահովումը (տեղեկատվական նպատակ),
   3) բանկի գործունեության համապատասխանության ապահովումը Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի, բանկի կառավարման իրավասու մարմինների կողմից հաստատված ներքին իրավական ակտերի (կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի, հրահանգների, ուղեցույցների և այլն) պահանջներին (իրավական համապատասխանության նպատակ):
5. Ներքին հսկողության համակարգը ներառում է բանկի գլխամասի և մասնաճյուղերի ներքին հսկողության համակարգերը, որոնք կազմում են տրամաբանական ամբողջություն և հիմնվում են միևնույն չափանիշների և սկզբունքների վրա:
6. Բանկի ու բանկի դուստր և/կամ կախյալ և/կամ հսկվող ընկերությունների (առկայության դեպքում) ներքին հսկողության առանձին համակարգերը կազմում են տրամաբանական ամբողջություն և հիմնվում են միևնույն չափանիշների և սկզբունքների վրա այն դեպքում, երբ.
   1) բանկի ու բանկի դուստր և/կամ կախյալ և/կամ հսկվող ընկերությունների գործունեությունը կամ գործառնությունները փոխկապակցված են, կամ
   2) բանկի դուստր և/կամ կախյալ և/կամ հսկվող ընկերություններն ունեն էական ազդեցություն բանկի ֆինանսական արդյունքների, ֆինանսական վիճակի կամ համբավի վրա:
7. Գործարար գործընթացների իրականացումը ամբողջությամբ կամ դրանց մի մասը բանկի դուստր, կախյալ կամ հսկվող ընկերությունների կողմից կարող է ապահովվել այնքանով, որքանով չի հակասում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը:
8. Բանկն ապահովում է, որպեսզի իր ներքին հսկողության համակարգը բավարարի առնվազն սույն կանոնակարգով սահմանված պահանջները: Եթե բանկի կողմից իրականացվող առանձին գործառնությունների բնույթը, ծավալը կամ այդ գործառնություններից ստացվող բանկի ֆինանսական արդյունքներն էական չեն բանկի համար կամ չեն առաջացնում էական ռիսկեր, ապա բանկը կարող է չպահպանել այդ գործառնությունների գծով սույն կանոնակարգով սահմանված ներքին հսկողության պահանջները՝ բանկի խորհրդի որոշմամբ հաստատված հիմնավորմամբ:
9. Բանկում պատշաճ ներքին հսկողության համակարգի ձևավորման, կենսագործունեության և արդյունավետության շարունակական մոնիթորինգի իրականացման համար պատասխանատու են բանկի խորհուրդը (այսուհետ՝ նաև խորհուրդ), գործադիր մարմինը, հսկողական գործառույթ իրականացնող անձինք, բանկի բոլոր աշխատակիցները՝ օրենքով և/կամ այլ իրավական ակտերով սահմանված իրենց պարտականությունների շրջանակներում: Սույն կանոնակարգի համաձայն՝ բանկի խորհրդի իրավասությանը վերապահվելիք պարտականությունները վերջինիս կողմից իրականացվում են բանկում ներքին հսկողության ստանդարտների սահմանման ներքո:
10. Բանկերի ներքին հսկողության համակարգը նկարագրվում է բանկի ներքին իրավական ակտերում, որոնք հանդես են գալիս կարգերի, ընթացակարգերի, կանոնակարգերի, հրահանգների, ուղեցույցների և այլ ակտերի տեսքով:

11. Ներքին հսկողության համակարգը, դրա առանձին տարրերը բանկի խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իսկ միջավայրի փոփոխությունների, ինչպես նաև նոր կամ նախկինում հսկողությունից դուրս մնացած էական ռիսկերի, առկա համակարգի էական թերությունների ու բացթողումների հայտնաբերման դեպքում՝ ողջամիտ ժամկետում, գնահատվում և անհրաժեշտության դեպքում վերանայվում են: Կատարված էական փոփոխությունները և փոփոխման հիմնավորումները, ինչպես նաև փոփոխության անհրաժեշտության բացակայության հիմնավորումները պատշաճ կարգով փաստաթղթավորվում են:
12. Միջավայրի փոփոխություններ են.
    1) բանկի բիզնես ռազմավարության փոփոխությունը,
    2) գործառնական միջավայրի էական նշանակություն ունեցող փոփոխությունները,
    3) անձնակազմի էական նշանակություն ունեցող փոփոխությունը,
    4) նոր կամ վերափոխված տեղեկատվական համակարգերը,
    5) նոր կամ վերափոխված տեխնոլոգիաները,
    6) նոր ծառայությունները, գործունեության տեսակները,
    7) կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը,
    8) բանկի վերակազմակերպումը,
    9) բանկի կողմից դուստր և/կամ կախյալ և/կամ հսկվող ընկերությունների ստեղծումը, դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը,
    10) միջազգային գործառնությունների ընդլայնումը,
    11) էական նշանակություն ունեցող փոփոխությունները տնտեսական, ֆինանսական և/կամ բանկային գործունեության կարգավորման բնագավառում,
    12) բանկի գործունեության, ռիսկայնության մակարդակի վրա էական ազդեցություն ունեցող ներքին և արտաքին այլ հանգամանքների ի հայտ գալը և այլն:
13. Բանկերի ներքին հսկողության համակարգն ապահովում է հուսալի և բնականոն բանկային գործունեության իրականացումը՝ հաշվի առնելով տվյալ բանկի գործունեության բնույթը, առկա ու հնարավոր ռիսկերը, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, գործարար շրջանառության սովորույթները ու բանկի գործունեության միջավայրը:
14. Բանկի գործադիր մարմնի, ներքին հսկողական գործառույթներ իրականացնող անձանց, բանկի աշխատակիցների կողմից հայտնաբերված ներքին հսկողության համակարգի թերությունները և բացթողումները բանկի ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվում են խորհրդին:
15. Բանկն ապահովում է ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերի հասանելիությունը բանկի անձնակազմին: Բանկն ապահովում է բանկի անձնակազմի տեղեկացվածությունը բանկի ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերի դրույթներին՝ իրենց կողմից իրականացվող գործառույթների մասով:
16. Բանկի յուրաքանչյուր էական գործարար գործընթացի համար բանկում պետք է ներդրվեն համապատասխան հսկողական մեխանիզմներ: Հսկողական մեխանիզմները կարող են լինել կանխարգելող (ուղղված անցանկալի արդյունքների կանխարգելմանը), բացահայտող (ուղղված անցանկալի գործառնությունների բացահայտմանը), ինչպես նաև անցանկալի հետևանքները վերացնող (ուղղված անցանկալի հետևանքների վերացմանը): Անցանկալի արդյունքների/գործառնությունների բացահայտման, կանխարգելման և վերացման հսկողական մեխանիզմներն են.
    1) բանկի գործունեության պարբերական ուսումնասիրությունը և գնահատումը բանկի կառավարման մարմինների կողմից (աշխատակիցներից կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների պահանջի, իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ աշխատակիցներին հարցերի տրման և նրանցից պատասխանների, պարզաբանումների և բացատրությունների ստացման և այլ միջոցներով),
    2) բանկին պատկանող գույքի և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային, ավանդային պայմանագրեր) ֆիզիկական պաշտպանվածության ապահովումը, ինչը ենթադրում է, որ բանկին պատկանող գույքը և առավել կարևոր փաստաթղթերը պաշտպանված են կորստից, չթույլատրված դուրսհանումից կամ օգտագործումից,
    3) ներքին սահմանաչափերի, դրանցից թույլատրելի շեղումների սահմանումը և պահպանումը (օրինակ՝ առանձին գործարքների, գործունեության ցուցանիշների նկատմամբ և այլն),
    4) որոշակի սահմանաչափերը գերազանցելու դեպքում որոշումների կայացումը, գործարքների հաստատումը և (կամ) թույլատրումը վերադաս իրավասու անձանց կողմից,

5) աշխատանքային պարտականությունների պատշաճ տարանջատումը և աշխատակիցներին շահերի բախում չպարունակող պարտականությունների հանձնարարումը,
6) գույքի և գրառումների համատեղ պահպանումը, երբ որոշակի գործընթացների համար հավասարապես հաշվետու են երկու կամ ավելի անձինք (օրինակ, երբ երկու կամ ավելի բանալիներից կամ գաղտնաբառերից յուրաքանչյուրը, որոնք պետք է օգտագործվեն դրամապահոց, արխիվ կամ այլ պահուստարան մուտքի իրավունք ստանալու համար, վստահվում են առանձին անհատների),
7) կրկնակի ստուգումը,
8) տվյալների և գրառումների համադրումը,
9) պարբերական գույքագրումը,
10) կրկնակի կամ բազմակի ստորագրությունների պահանջումը,
11) հայտնաբերված խախտումների, թերությունների, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած անցանկալի երևույթների վերացման կապակցությամբ հանձնարարականներ տալը և դրանց պատշաճ ու ժամանակին կատարման նկատմամբ հսկողության իրականացումը, անհրաժեշտության դեպքում համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառումը,
12) բանկի հայեցողությամբ՝ հսկողության այլ մեխանիզմներ:

ԲԱԺԻՆ 3. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԳՈՐԾԱՐԱՐ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ, ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գլուխ 3. Կազմակերպական կառուցվածք, գործարար գործընթացներ, անձնակազմի կառավարում

17. Ներքին հսկողության համակարգը բանկի կազմակերպական կառուցվածքի առումով նվազագույնը նախատեսում է.
1) բանկի կազմակերպական կառուցվածքի մանրամասն նկարագիրը՝ սխեմատիկ և/կամ տեքստային ձևով,
2) բանկի ստորաբաժանումների ու աշխատակիցների պատշաճ տարանջատված պարտականությունները ու լիազորությունները: Պարտականությունների ու լիազորությունների տարանջատման ընթացքում նվազագույնը բացահայտվում ու վերահսկվում են շահերի բախման հնարավոր դեպքերն ու ոլորտները:
18. Բանկի ներքին հսկողության համակարգը բանկի գործարար գործընթացների առումով նվազագույնը ներառում է.
1) բանկի կողմից իրականացվող գործարար գործընթացների նկարագիրը, որը ներառում է բանկի կողմից իրականացվող բոլոր առևտրային գործառնությունների և կառավարչական ընթացակարգերի մանրամասն նկարագիրը՝ սխեմատիկ և/կամ տեքստային ձևով, այդ թվում՝
ա. նկարագրվող գործարար գործընթացի իրականացման քայլերի հերթականությունը,
բ. գործարար գործընթացի վերջնական արդյունքը՝ փաստաթղթի, գործարքի, տեղեկատվության կամ այլ տեսքով,
գ. գործարար գործընթացի իրականացման ժամկետները՝ ըստ քայլերի,
դ. կապը բանկի առանձին գործարար գործընթացների միջև,
ե. անհրաժեշտ հղումներ գործընթացը կանոնակարգող օրենքներին, այլ իրավական ակտերին կամ այլ ներքին ակտերին,
2) գործարար գործընթացի մեջ ներգրավված աշխատակիցների՝ սահմանված և տարանջատված պարտականություններն ու լիազորությունները,
3) գործարար գործընթացների առանձին քայլերի իրականացմանն առնչվող ռիսկերի կանխարգելմանը կամ նվազեցմանն ուղղված ներքին հսկողության մեխանիզմները,
4) գործարար գործընթացի անխափան և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովման եղանակները և այդ տեղեկատվության հոսքերը բանկում (ստորաբաժանումների, ղեկավարների, աշխատակիցների միջև):
19. Բանկի առանձին գործընթացների և գործառնության իրականացումը և հաշվառումը (ներառյալ՝ հետագա հսկողության (post control-ի) ձևով) սկզբից մինչև վերջ չի դրվում միայն մեկ կամ փոխկապակցված անձանց վրա:

20. Ներքին հսկողության համակարգը անձնակազմի կառավարման քաղաքականության (կադրային քաղաքականության) առումով նվազագույնը նախատեսում է.
    1) աշխատակիցներին աշխատանքի ընդունելու և ազատելու կարգը,
    2) աշխատակիցների վերապատրաստման սկզբունքները,
    3) աշխատակիցների վարձատրության, պարգևատրման կամ այլ ձևի նյութական խրախուսման (այսուհետ՝ վարձատրության քաղաքականություն) և կարգապահական պատասխանատվության ենթարկելու քաղաքականությունն ու կարգը,
    4) աշխատակիցների առաջխաղացման, ռոտացիաների իրականացման կարգը,
    5) արձակուրդային քաղաքականության սկզբունքները,
    6) աշխատակիցների կատարած աշխատանքների գնահատման կարգը,
    7) մասնագիտական աշխատանք կատարող աշխատակիցների աշխատատեղերի նկարագրությունը,
    8) աշխատանքային էթիկայի կանոնները:
21. Բանկի բոլոր աշխատակիցները գրավոր ձևով տեղեկացվում են իրենց աշխատանքային պարտականությունների կատարման հետ առնչվող ռիսկերի, ներքին հսկողության համակարգում իրենց դերի, աշխատանքի վայրում և դրանից դուրս իրենց վարքագծին ներկայացվող պահանջների, իրենց կողմից թույլ տրված չարաշահումների, բացթողումների հետևանքների մասին:
22. Բանկի խորհրդի կողմից հաստատված վարձատրության քաղաքականությունն առնվազն բավարարում է հետևյալ պահանջները.
    1) չի խթանում բանկի աշխատակիցների կողմից չհիմնավորված ռիսկերի ստանձնումը, ինչպես նաև հաճախորդների նկատմամբ ոչ արդարացի վերաբերմունքի ցուցաբերումը,
    2) համահունչ է բանկի խորհրդի կողմից հաստատված ռիսկի ախորժակին, բանկի երկարաժամկետ նպատակներին,
    3) առնվազն վերաբերում է բանկի ղեկավարներին, ինչպես նաև բոլոր այն աշխատակիցներին, որոնց գործունեությունը կարող է էական ազդեցություն ունենալ բանկի ռիսկերի մակարդակի վրա,
    4) վարձատրության քաղաքականության մշակման, կիրառման և մոնիթորինգի ժամանակ առնվազն բացահայտվում և վերահսկվում են շահերի բախման հնարավոր դեպքերն ու ոլորտները: Ընդ որում, հսկողական գործառույթներում ընդգրկված աշխատակիցների արդյունավետ աշխատանքին խոչընդոտող շահերի բախման հնարավոր դեպքերը բացառելու նպատակով հսկողական գործառույթներում ընդգրկված աշխատակիցների վարձատրությունը սահմանելիս կարող են կիրառվել գործունեության արդյունքների վրա հիմնված փոփոխուն վարձատրության մեխանիզմներ: Հսկողական գործառույթներում ընդգրկված աշխատակիցների վարձատրությունը կարող է ածանցվել համապատասխան հսկողական գործառույթի նպատակներին հասնելու արդյունքներից:
    5) վարձատրության փոփոխուն բաղադրիչների կիրառման դեպքում ապահովվում է վարձատրության հաստատուն և փոփոխուն բաղադրիչների արդյունավետ համադրությունը:
23. Գործունեության արդյունքների վրա հիմնված վարձատրության փոփոխուն բաղադրիչի սահմանման դեպքում.
    1) ապահովվում է, որպեսզի գործունեության արդյունքների գնահատման չափանիշները լինեն հստակ և օբյեկտիվորեն գնահատելի,
    2) գործունեության արդյունքների գնահատումը կարող է հիմնվել ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական չափանիշների վրա,
    3) հաշվի են առնվում ոչ միայն անհատի գործունեության արդյունքները, այլ նաև համապատասխան բիզնես միավորի գործունեության արդյունքները, ինչպես նաև բանկի գործունեության ընդհանուր արդյունքները (կիրառելիության դեպքում),
    4) գործունեության արդյունքների հիման վրա վարձատրության աճ իրականացնելիս հաշվի են առնվում նաև գործունեության հետ կապված ներկա և ապագա ռիսկերը: Հաշվի առնելով ժամանակի ընթացքում գործունեության արդյունքների և դրանց հետ կապված ռիսկերի փոփոխման հավանականությունը՝ գործունեության արդյունքների գնահատումը, կիրառելիության դեպքում, իրականացվում է երկարաժամկետ կտրվածքով,
    5) սահմանվում են վարձատրության փոփոխուն բաղադրիչի սահմանաչափեր, որոնք համահունչ են բանկի կապիտալի կառավարման ռազմավարությանը և կապիտալի արդյունավետ մակարդակը պահպանելու բանկի ունակությանը՝ հաշվի առնելով կապիտալի ներքին թիրախները և օրենսդրական պահանջները:

ԲԱԺԻՆ 4. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գլուխ 4. Ռիսկերի կառավարման համակարգ

24. Ռիսկերը, որոնց ենթարկված է կամ կարող է ենթարկվել բանկը, ներառում են ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են սպառնալ բանկի գործունեության անընդհատությանը կամ բացասական ազդեցություն ունենալ բանկի կապիտալի և/կամ շահույթի, ինչպես նաև գործարար համբավի վրա:
25. Բանկն ապահովում է խորհրդի կողմից հաստատված ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի առկայություն, որը համահունչ է բանկի գործունեությանը բնորոշ ռիսկերի բնույթին, իրականացվող գործարար գործընթացների ծավալին և բարդությանը:
26. Բանկի ռիսկերի կառավարման համակարգն առնվազն ներառում է.
    1) ռիսկերի կառավարման ռազմավարությունը, որով սահմանվում են ռիսկերի կառավարման առումով բանկի ընդհանուր մոտեցումները/նպատակները: Ընդ որում, ռիսկերի կառավարման ռազմավարության մշակման ժամանակ առնվազն հաշվի են առնվում բանկի խորհրդի կողմից հաստատված գործարար ծրագիրն ու բանկի կողմից իրականացվող գործարար գործընթացները՝ ներառյալ բանկի կողմից պատվիրակված գործընթացները,
    2) խորհրդի կողմից հաստատված բանկի ռիսկի ախորժակը, այսինքն՝ ռիսկերի այն մասը, որը բանկը կարող է և ցանկանում է ստանձնել՝ չխաթարելով իր ֆինանսական կայունությունը և բնականոն գործունեությունը,
    3) առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, որոնցով առնվազն սահմանվում են.
        ա. բանկի գործունեությանը ներհատուկ խելամտորեն կանխատեսելի և էական ռիսկերը՝ ըստ տեսակների: Ընդ որում, բանկի կողմից առնվազն դիտարկվում են սույն կանոնակարգի 27-րդ կետով սահմանված ռիսկերը, ինչպես նաև խմբի անդամ լինելու հետևանքով առաջացող լրացուցիչ ռիսկերը (կիրառելիության դեպքում),
        բ. ռիսկի յուրաքանչյուր տեսակի համար ռիսկի ընդունելի սահմանաչափերը, սահմանված սահմանաչափերից թույլատրելի շեղումների դեպքերն ու չափերը,
        գ. ռիսկերի նվազեցմանն ուղղված մեխանիզմների կիրառումը (օրինակ՝ ապահովագրություն, հեջավորում և այլն),
    4) առանձին ռիսկերի ճանաչման, գնահատման, զսպման, դրանց մոնիթորինգի և հաշվետվողականության գործընթացները և գործիքները (ներառյալ՝ մոդելները (կիրառելիության դեպքում),
    5) ռիսկերի կառավարման գործընթացում բանկի առանձին կազմակերպական միավորների, ինչպես նաև աշխատակիցների պարտականություններն ու լիազորությունները,
    6) բանկի կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացների քաղաքականությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 5-րդ գլխի:
27. Բանկը մշակում է ռիսկերի գնահատման գործող համակարգ՝ ուղղված առնվազն հետևյալ ռիսկերի գնահատմանը.
    1) Վարկային ռիսկ
    2) Շուկայական ռիսկ
    3) Իրացվելիության ռիսկ
    4) Գործառնական ռիսկ
    5) Համբավի ռիսկ
    6) Ռազմավարական (բիզնես մոդելի) ռիսկ:
28. ***Վարկային ռիսկը*** հավանականություն է, որ գործարքի մյուս կողմը կխախտի բանկի հետ կնքած պայմանագրի պայմանները, ինչը բացասաբար կազդի բանկի շահույթի և (կամ) կապիտալի վրա՝ անկախ այն հանգամանքից՝ գործարքներն արտացոլվում են բանկի հաշվեկշռում, թե հանդես են գալիս որպես արտահաշվեկշռային հոդված: Ընդ որում, վարկային ռիսկն առաջանում է ցանկացած ժամանակ, երբ միջոցները տրամադրվում են, ներդրվում են կամ այլ կերպ հասանելի են դառնում փոխառուին (գործընկերոջը) և (կամ) պահանջի իրավունք է առաջանում բանկի համար և (կամ) բանկը ստանձնում է միջոցների տրամադրման պարտավորություն:
29. Բանկը պետք է ունենա մշակված մեթոդաբանություն, որը թույլ կտա գնահատել վարկային ռիսկը ինչպես առանձին փոխառուի/գործընկերոջ մակարդակով, այնպես էլ վարկային պորտֆելների կտրվածքով:
30. Որպես վարկային ռիսկի գնահատման գործիք բանկի կողմից ներքին վարկանշման համակարգեր կիրառվելու դեպքում վերջիններս պետք է հնարավորություն տան բացահայտելու և չափելու առանձին

գործիքների/փոխառուների վարկային ռիսկը: Ներքին վարկանիշները պետք է կիրառվեն ոչ միայն խնդրահարույց, այլ բոլոր ակտիվների նկատմամբ:

31. Բանկը պետք է իրականացնի վարկային ռիսկի վերլուծություն առանձին պորտֆելների գծով՝ բացահայտելով պորտֆելին բնորոշ խնդիրները՝ ներառյալ ռիսկի կենտրոնացումները: Հատուկ ուշադրություն պետք է հատկացվի խոշոր փոխառություններին: Կատարված վերլուծությունները պետք է փաստաթղթավորվեն:
32. Բանկը պետք է ունենա մեթոդաբանություն վարկային ռիսկի կենտրոնացումները բացահայտելու, չափելու, մոնիթորինգի ենթարկելու և կառավարելու համար: Նշված մեթոդաբանությունը պետք է անդրադառնա վարկային ռիսկի կենտրոնացումների տարբեր դրսևորումներին, ներառյալ՝
    1) վարկային ռիսկի կենտրոնացումները միևնույն տնտեսական ոլորտում,
    2) վարկային ռիսկի կենտրոնացումները միևնույն աշխարհագրական վայրում,
    3) վարկային ռիսկի կենտրոնացումներն այն անձանց շրջանում, որոնց ֆինանսական դրությունը կախված է միևնույն ապրանքի/ծառայության գնից, կամ որոնք զբաղվում են նմանատիպ գործունեությամբ/գործում են միևնույն շուկայում/որդեգրել են նմանատիպ ներդրումային ռազմավարություն,
    4) կոնկրետ անձին կամ փոխկապակցված անձանց խմբին տրամադրված խոշոր փոխառությունները,
    5) վարկային ռիսկի անուղղակի կենտրոնացումները, օրինակ՝ միատեսակ գրավի գծով, մեկ երաշխավորի գծով կենտրոնացումները և այլն:
33. Վարկային ռիսկի կենտրոնացումների կառավարման մոտեցումները պետք է հստակ փաստաթղթավորվեն, և այդ փաստաթղթերում պետք է տրվեն վարկային ռիսկի կենտրոնացումների սահմանումը, դրանց նկատմամբ կիրառվող սահմանաչափերը և դրանց հաշվարկման կարգը: Սահմանաչափերը կարող են կիրառվել բանկի կապիտալի, ընդհանուր ակտիվների կամ վարկային պորտֆելի նկատմամբ:
34. Բանկն օրական կտրվածքով ուսումնասիրում է իր կողմից տրամադրված վարկային գծերի օգտագործման ծավալները: Դրա հիման վրա բանկը պարբերաբար գնահատում է իր առկա համախառն և զուտ ռիսկը (հաշվի առած գրավի և երաշխիքների առկայությունը):
35. Բանկը մշակում է վարկային ռիսկի զսպման մեխանիզմներ (ֆինանսական գրավ (համաձայն Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի փետրվարի 9-ի թիվ 39-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի գործունեության կարգավորումը, բանկային գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները» կանոնակարգ 2-ի անբաժանելի մաս կազմող «Վարկային ռիսկի հաշվարկը» հավելված 3-ի 26-րդ կետի), երաշխիք/երաշխավորություն) օգտագործելու պարագայում առաջացող այլ ռիսկերի (մասնավորապես՝ գրավը ժամանակին իրացնելու անհնարինություն, երաշխավորի կողմից իր պարտականությունները կատարելուց խուսափում/հետաձգում, ապահովվածությունը հավաստող փաստաթղթերի անկատարություն կամ իրավական խնդիրներ պարունակող փաստաթղթերի առկայություն) կառավարմանն ուղղված մեթոդաբանություն և գործընթացներ, որոնց արդյունավետությունը պետք է պարբերաբար գնահատվի:
36. ***Շուկայական ռիսկը*** հավանականություն է, որ շուկայական գների (տոկոսադրույքներ, արտարժույթի փոխարժեքներ, բաժնային գործիքների գներ և այլն) տատանումը բացասական ազդեցություն կունենա բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա:
37. Կախված շուկայական ռիսկին բանկի հակվածության աստիճանից՝ ռիսկի գնահատման ներքին գործընթացը կարող է հիմնված լինել «Վեյու ըթ ռիսկ» (Value at Risk) կամ այլ մոդելների և/կամ սթրես-թեստերի արդյունքների վրա՝ ներառյալ ռիսկի կենտրոնացումների գնահատումը և սթրեսային շուկայական պայմաններում իրացվելիության խնդիրների առաջացման ռիսկը: Ներդրված մոդելները պետք է հնարավորություն տան բացահայտելու և չափելու բոլոր առևտրային գործառնություններից առաջացող ռիսկերը: Բանկի կողմից կիրառվող առևտրային գործիքների, ինչպես նաև առևտրային գործառնությունների իրականացման ռազմավարության փոփոխության դեպքում ռիսկերի գնահատման մոդելների և/կամ սթրես-թեստերի հիմքում ընկած մեթոդաբանությունները ևս պետք է կրեն համապատասխան փոփոխություններ:
38. ***Տոկոսադրույքի ռիսկը*** հավանականություն է, որ շուկայական տոկոսադրույքների անցանկալի տեղաշարժերը բացասական ազդեցություն կունենան բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա: Կարող է հանդես գալ ընդհանուր ռիսկի և/կամ հատուկ ռիսկի միջոցով: Ընդհանուր ռիսկը վերաբերում է տոկոսադրույքի նկատմամբ զգայուն գործիքի արժեքի այնպիսի տատանումներին, որոնք կապված են շուկայում տեղի ունեցող ընդհանուր տեղաշարժերի հետ, օրինակ՝ եկամտաբերության կորի փոփոխությունների հետ: Հատուկ ռիսկը վերաբերում է կոնկրետ գործիքին, որի գծով տոկոսադրույքի տատանումները շեղվում են շուկայական մակարդակից՝ պայմանավորված անհատական գործոններով, օրինակ՝ արժեթուղթ թողարկողի վարկունակությամբ:

39. Բանկը ապահովում է մինչև մարման ժամկետը պահվող ֆինանսական գործիքների տոկոսադրույքի ռիսկի գնահատման և կառավարման, ինչպես նաև այդ ռիսկի գծով անհրաժեշտ կապիտալի պահանջի գնահատման և ապահովման համար մշակված մեթոդաբանության առկայություն:
40. Բանկի առևտրային պորտֆելում առկա կենտրոնացումները պետք է գնահատվեն և ակտիվորեն կառավարվեն, իսկ կենտրոնացվածություն առաջացնող դիրքերի մասին տեղեկատվությունը պետք է պարբերաբար ներկայացվի գործադիր մարմնին և բանկի խորհրդին: Հատուկ ուշադրության պետք է արժանանան չդիվերսիֆիկացված և ցածր իրացվելիություն ունեցող գործիքներից բաղկացած պորտֆելները:
41. ***Արտարժութային ռիսկը*** հավանականություն է, որ արժույթի փոխարժեքի տատանումները բացասական ազդեցություն կունենան բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա: Վերաբերում է ինչպես առևտրային, այնպես էլ վարկային գործառնություններին:
42. Հաշվի առնելով արտարժութային ռիսկի ցածր կանխատեսելիությունը՝ բանկը պետք է ունենա արտարժութային ռիսկը գնահատելու և կառավարելու համար անհրաժեշտ ռեսուրսներ (համապատասխան մասնագիտացում ունեցող աշխատակիցներ, տվյալների բազաներ, տվյալների մշակման համակարգեր և այլն), որոնց բավարարությունը և արդյունավետությունը պետք է պարբերաբար գնահատվեն:
43. Արտարժութային գործառնությունների բնույթից ու բարդությունից կախված՝ բանկում պետք է ներդրվեն համապատասխան գործընթացներ, որոնք պետք է ուղղված լինեն ինչպես բանկի ընդհանուր արտարժութային ռիսկի կառավարմանը, այնպես էլ կոնկրետ գործիքների կամ որոշակի հաճախորդների գծով արտարժութային ռիսկի կառավարմանը:
44. Բանկը պետք է ունենա համապատասխան գործընթացներ նոր գործիքների ներդրման կամ նոր շուկաներում գործառնությունների իրականացման հետ կապված արտարժութային ռիսկի բացահայտման և կառավարման համար (նոր գործիքներ ներդնելու կամ նոր շուկաներում գործառնություններ իրականացնելու ծրագրեր ունենալու դեպքում): Արտարժութային ռիսկերի կառավարման/հեջավորման գործիքակազմը պետք է նախապես՝ մինչև նոր գործիքների ներդրումը/նոր շուկաներում գործառնությունների իրականացումը, հաստատվի բանկի խորհրդի կամ համապատասխան կոմիտեի կողմից:
45. Բանկի արտարժութային ռիսկի կառավարմանը վերաբերող փաստաթղթերով առնվազն սահմանվում են արտարժութային ռիսկի առաջացման բոլոր հնարավոր հիմնական աղբյուրները և արտարժույթի փոխարժեքի տատանումների ազդեցության գնահատումը բանկի կողմից իրականացվող գործառնությունների, ինչպես նաև բանկի գործունեության արդյունքների վրա: Ռիսկի գնահատման համակարգի հիմքում ընկած ենթադրությունները պետք է պարզ և հասկանալի լինեն ռիսկի կառավարիչների և բանկի ղեկավարության համար:
46. Բանկի արտարժութային ռիսկի կառավարմանը վերաբերող փաստաթղթերով նկարագրվում են արտարժութային ռիսկի կառավարման գործընթացի ներքին հսկողության համակարգը և այդ համակարգի համապատասխանության ու արդյունավետության գնահատման պարբերականությունը, ներքին հսկողության գործընթացների գնահատման համար պատասխանատու անձանց կամ ստորաբաժանման պարտականությունները և լիազորությունները:
47. ***Իրացվելիության ռիսկը*** հավանականություն է, որ բանկը բավարար իրացվելի միջոցներ չի ունենա պարտավորությունները ժամանակին մարելու համար: Կարող է հանդես գալ երկու եղանակով՝ ***միջոցների ներգրավման անհնարինություն*** և ***ակտիվների իրացվելիության*** ռիսկ: Առաջինը ենթադրում է, որ բանկը հնարավորություն չի ունենա համապատասխան ժամկետում միջոցներ ներգրավել շուկայից այնպիսի արժեքով, որը հասանելի է շուկայի այլ մասնակիցներին (օրինակ՝ բանկի վարկանիշի կամ հեղինակության անկման արդյունքում): Երկրորդ դեպքում բանկն ի վիճակի չէ շուկայում իրացնել իր ակտիվներն առանց գնային կորուստների (ոչ տարողունակ կամ ոչ իրացվելի շուկայական պայմաններում, երբ առկա են գնային զգալի տատանումներ կամ կոնկրետ բանկի ակտիվների նկատմամբ շուկայում անբավարար պահանջարկի դեպքում):
48. Բանկը գնահատում է այն շուկաների իրացվելիությունը, որտեղ գործունեություն է ծավալում, ինչպես նաև նախատեսում և ապահովում է իր իրացվելիության մակարդակին համարժեք կապիտալի առկայություն՝ հաշվի առնելով, որ բանկի կապիտալի մեծությունը կարող է ազդել ճգնաժամային իրավիճակներում բանկի՝ իրացվելիություն ներգրավելու հնարավորության վրա:
49. Բանկում ներդրվում է ակտիվների-պասիվների կառավարման արդյունավետ գործող համակարգ:
50. Բանկի կողմից գնահատվում է դրամական միջոցների ներհոսքը և արտահոսքը ամսական կտրվածքով, այդ թվում՝ այն ժամկետային պարտավորությունների տեսակարար կշիռը, որոնց գծով ցանկացած պահի կարող է ներկայացվել մարման պահանջ:

51. ***Գործառնական ռիսկը*** անբավարար կամ ձախողված ներքին գործընթացների, համակարգերի և մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների արդյունքում կորստի առաջացման հավանականություն է, ինչը բացասական ազդեցություն կունենա բանկի կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկը ներառում է նաև իրավական ռիսկը:
52. ***Իրավական ռիսկը*** հավանականություն է, որ պայմանագրերի դրույթները, դատական գործերը, դատարանի որոշումները, վճիռները կամ այլ իրավական գործընթացները կընդհատեն կամ բացասական ազդեցություն կունենան բանկի գործառնությունների վրա:
53. Բանկի քաղաքականությամբ սահմանվում է գործառնական ռիսկի նկատմամբ կազմակերպության զգայունությունը՝ ներառյալ գործառնական ռիսկը բանկից դուրս փոխանցելու (օրինակ՝ պատվիրակման, ապահովագրության միջոցով) հնարավորությունը և մակարդակը:
54. ***Համբավի ռիսկը*** հավանականություն է, որ բանկի վերաբերյալ հանրության բացասական կարծիքը (իրականությանը համապատասխանող կամ չհամապատասխանող) կհանգեցնի հաճախորդների թվաքանակի նվազման, կոնտրագենտների/հաճախորդների հետ իրականացվող գործառնությունների ծավալի կրճատման, ծախսատար դատական գործընթացների և եկամտաբերության անկման: Համբավի ռիսկը կարող է առաջացնել նաև իրացվելիության խնդիրներ, բաժնետոմսերի գների անկում և այլն:
55. ***Ռազմավարական (բիզնես մոդելի) ռիսկը*** առաջանում է անհամապատասխան բիզնես ռազմավարության ընտրության դեպքում կամ ռազմավարության հիմքում ընկած ենթադրություններում, ցուցանիշներում, նպատակներում կամ այլ գործոններում բացասական տեղաշարժերի արդյունքում:
56. Յուրաքանչյուր գործառնություն, որը կարող է հանգեցնել բանկի խորհրդի կողմից հաստատված ռիսկերի կառավարման ռազմավարությունից, ռիսկի ախորժակից և (կամ) ռիսկի սահմանաչափերից չթույլատրված շեղման, հանգամանորեն քննարկվում և ներկայացվում է խորհրդի հաստատմանը:
57. Բանկի կողմից նոր գործառնությունների կամ գործիքների ներդրման դեպքում բանկը գնահատում է դրանց հավանական ազդեցությունը բանկի գործունեության ռիսկայնության մակարդակի վրա՝ անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելով ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգում:
58. Բանկի խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ դիտարկվում և անհրաժեշտության դեպքում վերանայվում է ռիսկերի կառավարման գործընթացը, որպեսզի ապահովվի գործընթացի արդիականությունը և հիմնավորվածությունը: Ռիսկերի կառավարման գործընթացի վերանայման անհրաժեշտության բացակայության հիմնավորումները պատշաճ կարգով փաստաթղթավորվում են: Դիտարկման/վերանայման ենթակա հիմնական ոլորտներն առնվազն ընդգրկում են.
    1) բանկի կապիտալի գնահատման ներքին գործընթացների համարժեքությունը բանկի կողմից իրականացվող գործառնությունների բնույթին, ծավալին և բարդությանը,
    2) խոշոր ռիսկերի և ռիսկերի կենտրոնացումների բացահայտումը,
    3) բանկի ռիսկայնության մակարդակի գնահատման ընթացքում օգտագործվող մուտքային տվյալների ճշգրտությունն ու ամբողջականությունը,
    4) բանկի ռիսկայնության մակարդակի գնահատման ընթացքում օգտագործվող մեթոդների, սցենարների հիմնավորվածությունն ու արդյունավետությունը,
    5) ենթադրությունների և օգտագործվող մուտքային տվյալների թեստավորումն ու վերլուծությունը:
59. Բանկի խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման, կենսագործունեության և արդյունավետության շարունակական մոնիթորինգի ապահովման համար, իսկ գործադիր մարմինը՝ ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ կիրառման, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված ընթացակարգերի և այլ ներքին իրավական ակտերի՝ ամբողջ բանկում արդյունավետ շրջանառության ապահովման համար:

Գլուխ 5. Կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթաց (ICAAP)

60. Բանկն ապահովում է իր կողմից ստանձնած ռիսկերին համարժեք կապիտալի առկայություն, ինչպես նաև մշակում և օգտագործում է ռիսկերի մոնիթորինգի և կառավարման արդյունավետ մեխանիզմներ:
61. Բանկի գործադիր մարմինը պատասխանատվություն է կրում կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացների (այսուհետ նաև՝ ԿՀԳՆԳ) մշակման, բանկի ռիսկայնության նկարագրին և ռիսկերի կառավարման միջավայրին համարժեք կապիտալի նպատակային մակարդակ սահմանելու, ինչպես նաև կապիտալի մակարդակը ստանձնած ռիսկերին համապատասխանեցնելու համակարգ ներդնելու համար:

62. Բանկի գործադիր մարմինը և խորհուրդը դիտարկում են կապիտալի պլանավորումը՝ որպես բանկի ռազմավարական նպատակներին հասնելու համար անհրաժեշտ տարր: Բանկի զարգացման ծրագրերը հստակ սահմանում են բանկի կապիտալի պահանջը, նախատեսվող կապիտալ ներդրումները, կապիտալի ցանկալի մակարդակը, ինչպես նաև կապիտալի համալրման հնարավոր աղբյուրները:
63. Որպես բանկի ռիսկերի կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս՝ բանկն առնվազն եռամսյակային պարբերականությամբ իրականացնում է կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթաց, որը պետք է համահունչ լինի բանկի գործունեությանը բնորոշ ռիսկերի բնույթին, ծավալին և բարդությանը:
64. Կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացի հիմնական տարրերն են.
    1) համապատասխան քաղաքականություններն ու ընթացակարգերը, որոնք սահմանում են ռիսկերն էական համարելու չափանիշները, ապահովում են բանկի կողմից բոլոր էական ռիսկերի ճանաչումը, չափումը և դրանց վերաբերյալ տեղեկատվության շրջանառությունը (կապիտալի մակարդակի բավարարության գնահատման ժամանակ հաշվի են առնվում բանկի կողմից ստանձնված բոլոր էական ռիսկերը: Արտաքին գործոնների, ինչպես, օրինակ, բիզնես ցիկլերի և մակրոտնտեսական միջավայրի ազդեցությունը կապիտալի պահանջի վրա նույնպես գնահատվում է),
    2) կապիտալի մեծությունը ստանձնած ռիսկերի մակարդակին հարաբերակցելու/համապատասխանեցնելու գործընթացը,
    3) բանկի ռազմավարության և գործարար ծրագրի հիման վրա առկա և պոտենցիալ ռիսկերին կապիտալի համարժեքության գնահատման գործընթացը,
    4) կապիտալի կառավարման գործընթացի ներքին հսկողության և ներքին աուդիտի դիտարկումների իրականացումը:
65. Բանկի խորհուրդը հաստատում է ԿՀԳՆԳ քաղաքականությունը, որն առնվազն ներառում է.
    1) ԿՀԳՆԳ-ի իրականացման համար անհրաժեշտ ընթացակարգերի նկարագրությունը: Ընդ որում, ԿՀԳՆԳ-ի իրականացման ընթացակարգերը պետք է համահունչ լինեն բանկի կազմակերպական կառուցվածքին և ռիսկերի կառավարման համակարգին:
    2) ԿՀԳՆԳ-ի ընթացքում իրականացվող հաշվարկների ժամանակ օգտագործվող տեղեկատվության հավաքագրման, պահպանման, արժանահավատության ստուգման ընթացակարգերը, ինչպես նաև կիրառվող տվյալների որակի (ամբողջականություն, արժանահավատություն և այլն) նկատմամբ բանկի պահանջները,
    3) այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում պետք է արտահերթ ԿՀԳՆԳ իրականացվի,
    4) ԿՀԳՆԳ-ի իրականացման հիմնական պատասխանատուները,
    5) կառավարչական որոշումների կայացման, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործընթացներում ԿՀԳՆԳ-ի արդյունքների կիրառման եղանակները,
    6) ԿՀԳՆԳ-ի արդյունքները շահագրգիռ ստորաբաժանումներին հասանելի դարձնելու ընթացակարգերը:
66. Բանկը ձևավորում է ռիսկերի մոնիթորինգի և հաշվետվողականության համապատասխան համակարգ, որը թույլ կտա գնահատել, թե ինչպես է բանկի ռիսկայնության մակարդակի փոփոխությունն ազդում կապիտալի պահանջարկի վրա: Բանկի գործադիր մարմինը և խորհուրդը սահմանված պարբերականությամբ ստանում են հաշվետվություն ռիսկերի կառավարման համար պատասխանատու անձանցից բանկի ռիսկայնության մակարդակի և դրան համարժեք կապիտալի պահանջի վերաբերյալ: Հաշվետվության բովանդակությունը պետք է հնարավորություն տա կառավարման մարմիններին.
    1) գնահատելու էական ռիսկերի մակարդակը և փոփոխման տենդենցները ու դրանց ազդեցությունը կապիտալի մակարդակի վրա,
    2) գնահատելու կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացների հիմքում ընկած ենթադրությունների հիմնավորվածությունը,
    3) որոշելու արդյոք բանկն ապահովում է ռիսկերին դիմակայելու համար անհրաժեշտ կապիտալի բավարար մակարդակ և արդյոք դա համապատասխանում է բանկի կողմից սահմանված կապիտալի համարժեքության նպատակներին,
    4) հիմնվելով ստացված հաշվետվությունների վրա գնահատելու կապիտալի ապագա պահանջը և անհրաժեշտության դեպքում համապատասխան փոփոխություններ կատարելու բանկի ռազմավարական գործունեության ծրագրում:
67. Բանկն օգտագործում է ԿՀԳՆԳ-ի արդյունքները բացահայտելու համար, թե արդյոք բանկի առկա կապիտալը բավարար է բանկի ստանձնած ռիսկերին դիմակայելու համար: Եթե առկա կապիտալի մեծությունը բավարար չէ, ապա բանկը նվազեցնում է ստանձնած ռիսկի մակարդակը կամ ավելացնում կապիտալի/պահուստների մեծությունը, որպեսզի ապահովի ինչպես կապիտալի նորմատիվային պահանջը, այնպես էլ ԿՀԳՆԳ-ի արդյունքում գնահատված կապիտալի լրացուցիչ պահանջը:

68. Բանկն ապահովում է նորմատիվային նվազագույն պահանջը գերազանցող կապիտալի համարժեքության ցուցանիշ՝ հիմք ընդունելով հետևյալ հանգամանքները.
    1) բանկի բնականոն գործունեության ընթացքում բանկի կողմից իրականացվող գործառնությունների ծավալը և տեսակները փոփոխվում են, ինչը հանգեցնում է նոր ռիսկերի առաջացման կամ առկա ռիսկերի ավելացման՝ առաջացնելով կապիտալի համալրման անհրաժեշտություն,
    2) եթե բանկը ստիպված լինի կապիտալ համալրել կարճ ժամանակահատվածում կամ շուկայական անբարենպաստ պայմաններում, ապա կապիտալի համալրումը բանկի համար կլինի ծախսատար,
    3) բանկի գործունեության ընթացքում առաջանում են ռիսկեր (տվյալ բանկի գործունեությանը հատուկ կամ մակրոտնտեսական նշանակության), որոնք ընդգրկված չեն կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջներում,
    4) բանկի կողմից կապիտալի համարժեքության նորմատիվային պահանջի խախտումը կարող է հանգեցնել վերահսկողի կողմից համապատասխան պատժամիջոցների կիրառման,
    5) եթե բանկն ակնկալում է ստանալ բարձր վարկանիշ միջազգային վարկանշային կազմակերպությունների կողմից, ապա այն պետք է ունենա կապիտալի համարժեքության նվազագույն պահանջից ավելի կապիտալ:
69. Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական ակտերով սահմանված կապիտալի նվազագույն մակարդակից ավելի կապիտալի ապահովումը չպետք է դիտվի որպես բանկի աճող ռիսկերին դիմակայման միակ միջոց: Ոչ համարժեք ներքին հսկողության համակարգի կամ անարդյունավետ ռիսկերի կառավարման գործընթացների խնդիրները չպետք է լուծվեն ավելցուկային կապիտալի ձևավորմամբ:

Գլուխ 6. Սթրես-թեստավորում

70. Բանկն իրականացնում է սթրես-թեստավորում առնվազն հետևյալ ռիսկերի գծով.
    1) վարկային ռիսկ,
    2) արտարժութային ռիսկ,
    3) տոկոսադրույքի ռիսկ,
    4) գնային ռիսկ,
    5) իրացվելիության ռիսկ,
    6) վարակի ռիսկ (այլ բանկի/ֆինանսական կազմակերպության ֆինանսական խնդիրների հնարավոր բացասական ազդեցությունը տվյալ բանկի կապիտալի և (կամ) շահույթի վրա):
71. Վարկային, տոկոսադրույքի, գնային և վարակի ռիսկերի գծով սթրես-թեստավորումն իրականացվում է առնվազն եռամսյակային կտրվածքով, իսկ արտարժութային և իրացվելիության ռիսկերի գծով սթրես-թեստավորումն իրականացվում է առնվազն ամսական կտրվածքով (առաջիկա մեկ տարվա ժամանակային հորիզոնով): Ընդ որում, յուրաքանչյուր ռիսկի գծով սթրես-թեստավորումն իրականացվում է՝ հիմք ընդունելով բանկի կանխատեսումների վրա հիմնված հիմնական սցենարը, որը ենթարկվում է շոկային ցնցումների՝ արտացոլելով ծայրահեղ, բայց հավանական իրավիճակների առնվազն երկու մակարդակներ (միջին և խիստ):
72. Սթրես-թեստերը կարող են լինել պարզ՝ զգայունության վերլուծություն՝ կախված կոնկրետ ռիսկի գործոնի փոփոխությունից, և առավել բարդ, որոնք հաշվի են առնում տարբեր ռիսկային գործոնների, այդ թվում՝ համակարգային, փոխազդեցության արդյունքները: Եթե բանկի կողմից որոշակի ռիսկի գծով սթրես-թեստավորման գործընթացում դիտարկվող իրավիճակը կարող է ազդեցություն ունենալ բանկի գործունեությանն առնչվող այլ ռիսկերի վրա, ապա բանկը պետք է գնահատի ինչպես յուրաքանչյուր ռիսկի գծով ազդեցություններն առանձին-առանձին, այնպես էլ համընդհանուր ազդեցությունը:
73. Բացի որոշակի պարբերականությամբ իրականացվող սթրես-թեստերի, բանկերն անհրաժեշտության դեպքում իրականացնում են նաև միանգամյա սթրես-թեստեր:
74. Սթրես-թեստավորման համակարգը կազմում է բանկի ռիսկերի կառավարման գործընթացի մի մասը, նպաստում է ռիսկերի կառավարման որակի բարելավմանը, ապահովում է ռիսկերի կառավարման լրացուցիչ գործիքներ: Սթրես-թեստերի համար օգտագործվող սցենարներն ապագային միտված են, ծայրահեղ, բայց հավանական և թույլ են տալիս գնահատել բանկի զգայունությունը շոկային իրավիճակների նկատմամբ:
75. Բանկի խորհուրդը պատասխանատու է սթրես-թեստավորման արդյունավետ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման համար, իսկ գործադիր մարմինը՝ սթրես-թեստերի հետևողական իրականացման համար:

76. Սթրես-թեստերի օգտագործումը պարտադիր է այն առկա կամ պոտենցիալ ռիսկերը բացահայտելու համար, որոնք չեն բացահայտվի միայն պատմական շարքերի վրա հիմնված ռիսկերի կառավարման վիճակագրական գործիքների օգտագործման դեպքում, երբ պատմական տվյալները չեն ընդգրկում սթրեսային ժամանակահատվածներ: Մասնավորապես, համապատասխան սթրես-թեստավորման պետք է ենթարկվի նոր ներդրվող գործիքների կամ գործառնությունների ռիսկայնությունը:
77. Սթրես-թեստերի հիմքում ընկած հիմնական ենթադրությունները, հիմնական սցենարները, սթրես-թեստերի ազդեցության գնահատման համար օգտագործվող հիմնական դատողությունները, ինչպես նաև երևույթների տեղի ունենալու հավանականությունը գնահատելու մեթոդաբանությունը պետք է փաստաթղթավորվեն և շրջանառվեն գործընթացի համար պատասխանատու անձանց միջև:
78. Բանկի ներքին իրավական ակտերում նկարագրվում են սթրես-թեստերի իրականացման սկզբունքները, սթրես-սցենարների որոշման ընթացակարգը, գործընթացի հիմնական պատասխանատուները, սթրես-թեստերի արդյունքների կիրառման եղանակները կառավարչական որոշումների կայացման, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործընթացներում: Բանկի ներքին իրավական ակտերով պետք է նաև սահմանվեն սթրես-թեստերի արդյունքները շահագրգիռ ստորաբաժանումներին հասանելի դարձնելու և Կենտրոնական բանկին տրամադրելու ընթացակարգերը:
79. Սթրես-թեստավորման արդյունքները ունեն կիրառական նշանակություն, այսինքն՝ ազդում են բանկի ղեկավարների և կառավարման մարմինների որոշումների, ներառյալ բանկի խորհրդի և գործադիր մարմնի կողմից կայացվող ռազմավարական որոշումների կայացման վրա: Մասնավորապես՝ սթրես-թեստերն օգտագործվում են բանկի ռիսկի ախորժակը որոշելու կամ առանձին ռիսկերի գծով սահմանաչափեր սահմանելու համար: Սթրես-թեստերի արդյունքները կիրառվում են նաև երկարաժամկետ գործարար ծրագրերի կազմման, ինչպես նաև կապիտալի և իրացվելիության պլանավորման ժամանակ:
80. Իրականացված սթրես-թեստերի արդյունքների (ազդեցությունը տնտեսական նորմատիվների մեծության վրա և (կամ) գնահատված վնասի մեծությունը) հիման վրա բանկը մշակում է սթրեսային (արտակարգ) իրավիճակների ի հայտ գալու դեպքում բանկի կողմից իրականացվելիք միջոցառումների ծրագրեր: Արտակարգ իրավիճակներում գործունեության ծրագրերը նվազագույնը ներառում են բանկում գործող առանցքային նշանակություն ունեցող ոլորտների, համակարգերի, ստորաբաժանումների աշխատանքի նկարագրությունն արտակարգ իրավիճակի դեպքում, ինչպես նաև աշխատանքի անընդհատության ապահովման արարողակարգերի նկարագրությունը: Սթրեսային (արտակարգ) իրավիճակների ծրագրերը տարեկան կտրվածքով փորձարկվում են՝ պարզելու համար դրանց արդյունավետությունը և անհրաժեշտության դեպքում թարմացվում են: Սթրեսային (արտակարգ) իրավիճակների ծրագրերում բանկն արտացոլում է, թե որքան ժամանակ կպահանջվի սթրեսային իրավիճակներում դիրքերը հեջավորելու կամ այլ կերպ ռիսկերը կառավարելու համար:
81. Բանկն իրականացնում է ներքին միջավայրում հնարավոր (արտակարգ) սթրեսային իրավիճակների կանխարգելմանն ուղղված ընթացակարգեր և միջոցառումներ:

ԲԱԺԻՆ 5. ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ՏԱՐՐԵՐ

Գլուխ 7. Դրամարկղային գործառնություններ, ներդրումային գործունեություն, վարկերի կառավարում

82. Բանկի ներքին հսկողության համակարգը դրամարկղային գործառնությունների առումով նվազագույնը ներառում է.
    1) գանձապահների տնօրինության տակ գտնվող կանխիկ միջոցների առավելագույն սահմանաչափերը,
    2) կանխիկ միջոցների գույքագրման պարբերականությունը,
    3) կանխիկ միջոցներով գործառնությունների իրականացման ներքին ընթացակարգերը, հսկողության մեխանիզմները,
    4) կանխիկ միջոցների պահպանման և տեղափոխման անվտանգությունն ապահովող մեխանիզմները:
83. Բանկի ներքին հսկողության համակարգը ներդրումային գործունեության առումով նվազագույնը ներառում է.
    1) ներդրումային քաղաքականությունը,
    2) ներդրումային պորտֆելի (ներդրումային գործիքների առանձին խմբերի) նպատակային (բենչմարք) կառուցվածքը, եկամտաբերությունը և ժամկետայնությունը,
    3) ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման ներքին ընթացակարգերը, ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման համար անհրաժեշտ նվազագույն տեղեկատվությունը,

4) ներդրումային հանձնաժողովի կամ այլ պատասխանատու ստորաբաժանման կազմը, պարտականությունները և լիազորությունները, իսկ նման ստորաբաժանման բացակայության դեպքում՝ ներդրումների համար պատասխանատու անձի պարտականությունները և լիազորությունները,
5) ներդրումային սահմանափակումները (օրինակ՝ ըստ փոխառուների կամ ֆինանսական գործիքների վարկանիշների),
6) թույլատրելի կենտրոնացումների սահմանաչափերը (օրինակ՝ ըստ ներդրումային գործիքների, ըստ գործընկերների/արժեթուղթ թողարկողների/փոխառուների, ըստ տնտեսության ճյուղերի, ըստ բանկի հետ կապված անձանց և այլն),
7) ներդրումների բազմազանեցման (դիվերսիֆիկացման) սկզբունքները,
8) բանկի թղթակցային հաշիվների բացման և փակման սկզբունքները, այլ բանկերում հաշիվների մնացորդների մոնիթորինգի և համադրման իրականացման պարբերականությունը,
9) փոխառության ապահովվածության ընդունելի տեսակները,
10) ձեռք բերված արժեթղթերի թողարկողների և փոխառուների վարկունակության գնահատման պահանջը, այդ գնահատումներն իրականացնելու կարգը, ժամկետներն ու պարբերականությունը, դրանց համար պատասխանատու անձանց և նրանց պարտականությունները,
11) դիլերների (ներդրումային գործարքներ կնքելու իրավասություն ունեցող աշխատակիցների) կողմից առանց համապատասխան ղեկավարի վավերացման կնքվող գործարքի (կամ գործարքների) տեսակները և թույլատրելի առավելագույն չափերը/սահմանաչափերը,
12) ներդրումների դասակարգման, չաշխատող ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստի ձևավորման սկզբունքները, ընթացակարգերը, դրանց հաշվարկման և պարբերական մոնիթորինգի իրականացման համար պատասխանատու անձանց, նրանց պարտականությունների շրջանակները, ինչպես նաև բանկի ժամկետանց ակտիվների հետստացման ընթացակարգերը,
13) այլ բանկերում հաշիվների մնացորդների մոնիթորինգի և համադրման իրականացման համար պատասխանատու (անձանց) պաշտոնները, իրականացման պարբերականությունը,
14) բանկի պարտավորությունների կառուցվածքին և բնույթին բանկի ներդրումային գործունեության համապատասխանությունն ապահովելու, ինչպես նաև առկա անհամապատասխանությունների արդյունքում առաջացող ռիսկերը կառավարելու ընթացակարգերը,
15) ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման քաղաքականությունը, դրա իրականացման ներքին ընթացակարգերը, այդ թվում՝
    ա. ածանցյալ գործիքներով գործառնություններից բխող ռիսկերի ճանաչման, գնահատման և կառավարման արդյունավետ համակարգի առկայությունը,
    բ. արտաբորսայական ածանցյալ գործիքներով գործառնություններ իրականացնելու դեպքում ածանցյալների արժեքի գնահատման մեթոդները:

84. Բանկի ներդրումային գործունեության վերաբերյալ բանկի խորհրդին և գործադիր մարմնին ներկայացվող հաշվետվություններն առնվազն ներառում են.
1) ներդրումների կառուցվածքը,
2) մարումների ժամանակացույցը,
3) ներդրումների եկամտաբերությունը,
4) ներդրումների որակի վերլուծությունը,
5) խնդրահարույց ներդրումները և դրանց հետստացման ուղղությամբ իրականացված միջոցառումները,
6) գրավադրված արժեթղթերն ինչպես գումարային արտահայտությամբ, այնպես էլ որպես տոկոս ներդրումային պորտֆելից,
7) իրականացված ածանցյալ գործառնությունները:

85. Բանկի ներքին հսկողության համակարգը վարկավորման գործընթացի (վարկերի, փոխառությունների, օվերդրաֆտների, վարկային գծերի, վարկային քարտերի, երաշխիքների, ֆակտորինգային և ֆինանսական վարձակալության (լիզինգային) գործառնությունների տրամադրման, այսուհետ՝ վարկ) առումով, նվազագույնը ներառում է.
1) բանկի նպատակային շուկաները, վարկավորման ընդունելի տեսակները (լիզինգային գործառնությունների իրականացման դեպքում՝ նաև այն գույքի տեսակները, որոնց լիզինգը բանկը մտադիր է իրականացնել),
2) վարկային պորտֆելի նպատակային (բենչմարք) կառուցվածքը, եկամտաբերությունը և ժամկետայնությունը,
3) վարկային կոմիտեի անդամների կազմը, վարկային կոմիտեի իրավասությունները և պարտականությունները, գործունեության և որոշումների ընդունման կարգը,

4) վարկային կենտրոնացումների սահմանաչափերը, այդ թվում՝ ըստ այն երկրների, որոնց կամ որոնց ռեզիդենտների հետ բանկը գործառնություններ է իրականացնում,
5) վարկային պորտֆելի բազմազանեցման (դիվերսիֆիկացիայի) սկզբունքները,
6) վարկերի տրամադրման, մոնիթորինգի և դրանց վերադարձման, այդ թվում՝ դատական և արտադատական, ընթացակարգը,
7) բանկում գնագոյացման (վարկավորման տոկոսադրույքների, ֆակտորինգային զեղչատոկոսների ձևավորման) սկզբունքները,
8) ապահովման միջոցների (գրավի, երաշխավորության) ընդունելի տեսակները,
9) «վարկի գումար»/«ապահովում» հարաբերակցությունները տարբեր վարկային գործիքների (վարկերի տեսակների) համար՝ արտահայտված տոկոսով,
10) գրավի առարկայի վերաբերյալ հսկողության ձևերը (մասնավորապես՝ հիփոթեքային վարկավորման դեպքում) և այլ պահանջները (օրինակ՝ գրավադրված շենքի ապահովագրում),
11) հաստատված քաղաքականություններից և (կամ) սահմանաչափերից հնարավոր բացառությունների դեպքերը կամ հիմքերը,
12) վարկավորման սահմանաչափերը՝ ըստ վարկի գումարի, ժամկետի, այն երկրների, որոնց կամ որոնց ռեզիդենտների հետ բանկը գործառնություններ է իրականացնում, տոկոսի և տեսակի,
13) վարկերի տրամադրման համար պահանջվող, ինչպես նաև վարկային գործերում պահպանվող նվազագույն փաստաթղթերը և տեղեկատվությունը,
14) բանկի հետ կապված անձանց վարկավորման սկզբունքները,
15) բանկի կողմից մերժված հայտերի վերաբերյալ տեղեկատվության պահպանման և մերժումների հիմնավորվածության ուսումնասիրության կարգը,
16) վարկերի և դեբիտորական պարտքերի դասակարգման և հնարավոր կորուստների պահուստների ձևավորման կարգը, ապահովվածություն չունեցող վարկերի տրամադրման հիմքերը, դեպքերը,
17) փոխկապակցված անձանց վարկերի տրամադրման կարգը, սահմանաչափերը:

86. Գրավի առարկայի գնահատման և վերահսկման ներքին հսկողության համակարգը նվազագույնը ներառում է.
1) գրավի գնահատումն իրականացնող աշխատակիցների ընտրության և վերջիններիս աշխատանքի վերահսկման սկզբունքները,
2) անկախ գնահատող հանդիսացող անձանց ընտրության սկզբունքները,
3) գրավի վերագնահատումն իրականացնելու գործընթացը և հաճախականությունը,
4) գրավի առարկայի և դրա ապահովագրվածության վերահսկման գործընթացը և հաճախականությունը, հատկապես ֆիզիկապես բանկի հսկողությունից դուրս (գրավատուի օգտագործման ներքո) գտնվող գրավների գծով,
5) պահանջ առ այն, որ գրավը գնահատող անձինք չպետք է շահագրգիռ լինեն վարկը տրամադրելու հարցում:

87. Ոսկյա իրերի գրավադրման պարագայում (եթե ոսկյա իրերը պահվում են գրավառուի մոտ) գրավի առարկայի գնահատման և պահպանման ներքին հսկողության համակարգը ներառում է.
1) պահանջ, որպեսզի գրավի առարկայի պահպանումը բանկի պահոցում իրականացվի փակ թափանցիկ պարկի մեջ, որը կնքված է (ստորագրության կամ իդենտիֆիկացման այլ միջոցներով) բանկի աշխատակցի ու գրավատուի կողմից,
2) պահանջ, որը կապահովվի թափանցիկ պարկի բացումը միայն գրավատուի ու պարկը կնքած բանկի աշխատակցի ներկայությամբ. գրավատուի ներկայությունը պարկի բացման ժամանակ անհնար լինելու դեպքում, գրավատուի համաձայնության առկայության դեպքում պարկը բացվում է հատուկ ընթացակարգով (ուղղված գրավատուի շահերի պաշտպանությանը) առանց վերջինիս ներկայության,
3) պահանջ, որպեսզի բանկում պահվի յուրաքանչյուր գրավի առարկայի նկարագրությունը, որը ստորագրված կլինի բանկի աշխատակցի ու գրավատուի կողմից,
4) թափանցիկ պարկի բացման ժամը և օրը հավաստող անդորրագիրը հաճախորդի կողմից ստորագրելու պահանջ:

88. Բանկի վարկավորման գործունեությունը կարգավորող ներքին իրավական ակտերից շեղումները պատշաճ հիմնավորվում, փաստաթղթավորվում և պահվում են վարկային գործերում:

89. Վարկային գործերը նվազագույնը ներառում են հետևյալ փաստաթղթերը.
1) վարկային հայտ/դիմում,
2) վարկային կոմիտեի կամ իրավասու այլ մարմնի կամ անձի որոշումը,
3) վարկային պայմանագիր,

4) վարկառուի վարկանիշը (առկայության դեպքում),
5) վարկառուի իրավունակությունը կամ գործունակությունը հաստատող փաստաթղթեր,
6) վարկային ռեգիստրից կամ բյուրոներից ստացված հարցումները հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
7) գրավի կամ վարկի ապահովման այլ միջոցի պայմանագիր (ապահովվածության առկայության դեպքում),
8) գրավի կամ վարկի ապահովման այլ միջոցի վերաբերյալ այլ փաստաթղթեր (կիրառելիության դեպքում),
9) վարկառուի գործարար ծրագիր կամ վարկի վերադարձելիությունը հիմնավորող այլ տեղեկատվություն,
10) վարկառուի ֆինանսական հաշվետվությունները (կիրառելիության դեպքում),
11) վարկառուի ֆինանսական հաշվետվությունների վերլուծությունները (կիրառելիության դեպքում),
12) վարկառուի հետ նամակագրությունը (կիրառելիության դեպքում),
13) պատասխանատու անձի կողմից վավերացված գրառումներ վարկառուի հետ հեռախոսազրույցների և հանդիպումների մասին (կիրառելիության դեպքում),
14) վարկի մոնիթորինգի հաշվետվությունը/մոնիթորինգի հետ կապված բոլոր այլ փաստաթղթերը (առկայության դեպքում):

90. Վարկային գործերում առկա փաստաթղթերը պետք է նվազագույնը ներառեն հետևյալ տեղեկությունները (կամ էլեկտրոնային, կամ թղթային տեսքով).
1) վարկառուի անունը, ազգանունը և զբաղմունքը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և գործունեության տեսակը), գրավատուները, երաշխավորները, այլ ապահովվածություն տրամադրած անձինք (առկայության դեպքում),
2) վարկի տրամադրման ամսաթիվը և մարման ժամկետը,
3) վարկի գումարը (սկզբնական գումարն ու ընթացիկ մնացորդը),
4) վարկի տրամադրման նպատակը՝ սպառողական, թե ձեռնարկատիրական, իսկ խոշոր վարկերի համար՝ վարկի օգտագործման նպատակայնությունը հիմնավորող փաստաթղթերը,
5) վարկի տոկոսադրույքը և վճարումների ժամանակացույցը,
6) գրավի տեսակը և գնահատված արժեքը (գրավի առկայության դեպքում),
7) վարկի կարգավիճակը՝ ընթացիկ կամ ժամկետանց (որքան ժամանակ),
8) վարկի վերածևակերպումները կամ երկարաձգումները, վարկային պայմանագրի վերանայման պատճառների նկարագրությունը,
9) վարկի առնչությամբ կատարված ներքին և արտաքին ստուգումների արդյունքները,
10) վարկի դասակարգումը, դասակարգման պատճառները (դասակարգված լինելու դեպքում),
11) չաշխատող վարկերի վերադարձման համար ձեռնարկված քայլերի մասին տեղեկատվություն,
12) վարկառուի կամ նրա հետ փոխկապակցված անձանց կողմից բանկից ստացված ցանկացած այլ փոխառությունների մասին տեղեկատվություն:

91. Վարկի մոնիթորինգի գործընթացը նվազագույնը ներառում է.
1) վարկի յուրաքանչյուր մասնաբաժնի տրամադրումից առաջ (բացառությամբ առաջինի)՝ վարկի օգտագործման նպատակայնության ուսումնասիրություն (խոշոր գումարների դեպքում)՝ բացառությամբ վարկային գծերի վարկային սահմանաչափերի,
2) վճարումների և վարկի մարումների գրանցում,
3) գրավի առարկայի պարբերական վերագնահատում,
4) վարկառուի վերաբերյալ ֆինանսական և գործառնական տեղեկատվության կանոնավոր ստացում, վերլուծություն ու, անհրաժեշտության դեպքում, վարկառուի հետ դրանց քննարկում,
5) վարկառուի հետ հեռախոսազրույցների միջոցով լրացուցիչ կապի պահպանում,
6) անհրաժեշտության դեպքում՝ զրույցներ վարկառուի մատակարարների, այլ կոնտրագենտների և հաճախորդների հետ,
7) վարկի գծով ստացված բոլոր տվյալների գրանցում,
8) անհրաժեշտության դեպքում՝ վարկառուին աջակցելու (վարկի վերադարձելիությունը ապահովելու) համար քայլերի ձեռնարկում,
9) հատուկ ուշադրություն այն վարկային գծերի նկատմամբ՝
ա. որոնք գերազանցում են բանկի ներքին իրավական ակտերով որոշված սահմանաչափերը (բացառություններ),
բ. որոնցում շարժ չկա,
գ. որոնցով մարումներն իրականացվում են հաճախորդի հաշվին մուտքագրվող վարկի նոր մասնաբաժնի հաշվին:

92. Բանկի խորհրդին ու գործադիր մարմնին խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ ներկայացվող բանկի վարկավորման գործունեությանը վերաբերող հաշվետվություններն առնվազն ներառում են.
    1) վարկային պորտֆելի կառուցվածքը,
    2) վարկային պորտֆելի որակը,
    3) վարկերի հիմնական ուղղությունները,
    4) վարկերի կենտրոնացումները,
    5) խոշոր վարկերը,
    6) բանկի հետ կապված անձանց տրված վարկերը,
    7) խնդրահարույց (ժամկետանց) վարկերը, այդ վարկերի դասակարգումը հիմնավորող տեղեկատվությունը, ժամկետանց վարկերի հետստացման (մարման) ուղղությամբ իրականացված միջոցառումները:

Գլուխ 8. Բանկի հիմնական միջոցների կառավարում

93. Բանկի ներքին հսկողության համակարգը հիմնական միջոցների կառավարման առումով նվազագույնը ներառում է.
    1) բանկի հիմնական միջոցների ձեռքբերման, օտարման և դուրսգրման կանոնները,
    2) հիմնական միջոցների ձեռքբերման/օտարման նպատակահարմարության որոշման չափանիշները,
    3) բռնագանձման արդյունքում կամ այլ հիմքով բանկի սեփականությունը դարձած հիմնական միջոցների օտարման կամ օգտագործման սկզբունքները, ժամկետներն ու ընթացակարգերը,
    4) հիմնական միջոցների պահպանման, հաշվառման ներքին ընթացակարգերը,
    5) գույքագրման պարբերականությունը և ներքին ընթացակարգերը,
    6) դուրսգրված հիմնական միջոցների տնօրինման սկզբունքներն ու ձևերը,
    7) հիմնական միջոցների վերագնահատման պարբերականությունը, կարգը, վերագնահատման անհրաժեշտության որոշման սկզբունքները:

Գլուխ 9. Բանկի ավանդների և իրացվելիության կառավարում

94. Բանկի ներքին հսկողության համակարգը, բանկում առկա ավանդների (ավանդային բազայի) և բանկային հաշիվների կառավարման առումով, նվազագույնը ներառում է.
    1) ավանդային բազայի նպատակային (բենչմարք) կառուցվածքը (ցպահանջ, ժամկետային ավանդների տեսակարար կշիռը՝ հաշվի առնելով սեզոնայնության և այլ հնարավոր գործոնները),
    2) ավանդներ ներգրավելու սկզբունքները,
    3) բանկի հաճախորդների (առանձին նաև բանկի հետ կապված անձանց) հաշիվների բացման, վարման, հսկման և փակման սկզբունքները, կարգը, գործընթացները: Ընդ որում, փակման գործընթացները պետք է նվազագույնը ներառեն փակման պատճառների մասին տեղեկատվությունը,
    4) հաշիվների մնացորդների նկատմամբ հաշվարկվող տոկոսադրույքների որոշման սկզբունքները:
95. Բանկի ներքին հսկողության համակարգն իրացվելիության (ակտիվների և պարտավորությունների) կառավարման առումով նվազագույնը ներառում է.
    1) բանկի իրացվելիության պահանջների բավարարման աղբյուրներն ու դրանց օգտագործման ուղիները,
    2) բանկի ակտիվների գնահատման (տոկոսադրույքի որոշման) մեխանիզմը (հաշվի առնելով բանկի ֆոնդերի արժեքը, վերադիր ծախսերը, վարկային ռիսկը և վճարվող շահաբաժինները),
    3) բանկի պարտավորությունների ցանկալի կամ նպատակային կառուցվածքը և ժամկետայնության սահմանները (օրինակ՝ բանկը կարող է սահմանել, որ բանկի կողմից թողարկված ավանդային սերտիֆիկատները չպետք է գերազանցեն բանկի համախառն պարտավորությունների որոշակի տոկոսը, իսկ այդ ավանդային սերտիֆիկատների ժամկետայնությունը որոշակի ժամկետից պակաս չպետք է լինի),
    4) բանկին տրամադրված փոխառությունների գումարների սահմանաչափերը (ընդհանուր և ըստ տեսակների), ինչպես նաև համախառն տոկոսային ծախսերի սահմանաչափերը,
    5) բանկի իրացվելիության պահանջները բավարարելու համար օգտագործվող ֆինանսավորման աղբյուրների կենտրոնացումների սահմանաչափերը (օրինակ՝ բանկը, որի պարտավորությունների մեծ մասը կազմում են մեկ անձի (ֆիզիկական կամ իրավաբանական) ավանդները, կախվածության մեջ է ընկնում այդ անձի գործողություններից),

6) փոխառություններն ըստ մարման ժամկետների բազմազանեցնելու (դիվերսիֆիկացնելու) պահանջը,
7) իրացվելիության պահանջները բավարարելու համար բանկի հետ կապված անձանցից (կազմակերպություններից) փոխառու միջոցների ներգրավման սահմանափակումները,
8) իրացվելի միջոցների առաջնային աղբյուրների սպառման դեպքում այլընտրանքային աղբյուրների ընտրության չափանիշները, դրանց հայթայթման ուղիները,
9) տոկոսադրույքի ռիսկը սահմանափակելու սկզբունքներն ու մեթոդները՝ ներառյալ հետհաշվեկշռային հոդվածների հետ առնչվող տոկոսադրույքի ռիսկը,
10) տոկոսային մարժայի նպատակային մակարդակը,
11) տոկոսադրույքների փոփոխության նկատմամբ զգայուն հետհաշվեկշռային հոդվածների սահմանաչափերը,
12) ակտիվների և պարտավորությունների կառավարման կոմիտեի (առկայության դեպքում) անդամների կազմը, նրանց նշանակման կարգը, պարտականությունները և լիազորությունները, ինչպես նաև ակտիվների և պարտավորությունների կառավարման համար պատասխանատու ստորաբաժանումը, դրա պարտականությունները և լիազորությունները,
13) միջոցների ներգրավման և տեղաբաշխման տոկոսադրույքի վերաբերյալ որոշումների կայացման մեխանիզմներն ու ընթացակարգերը,
14) բանկի ակտիվների և պարտավորությունների ժամկետայնության ճեղքվածքի թույլատրելի սահմանաչափերը,
15) բանկի անունից փոխառության գործարքներ կնքելու իրավասություն ունեցող աշխատակիցների համար առանց համապատասխան ղեկավարի վավերացման կնքվող գործարքի (կամ գործարքների) թույլատրելի առավելագույն չափերը/սահմանաչափերը,
16) բանկի այն ստորաբաժանումների աշխատանքների կոորդինացման եղանակները, որոնք կարող են իրենց կողմից իրականացվող գործառնություններով ազդել բանկի իրացվելիության մակարդակի վրա,
17) իրացվելիության արտահերթ պահանջները (ինչը կարող է ծագել եկամուտների նվազման, չաշխատող ակտիվների աճի, ավանդների կենտրոնացման հետևանքով) բավարարելու ծրագիրը,
18) ներգրավվող և տրամադրվող միջոցների դիվերսիֆիկացման մոտեցումները՝ ըստ առանձին արժույթների,
19) իրացվելիության ռիսկը նվազեցնելու նպատակով գրավի գների զգայունության ընթացիկ վերլուծություն իրականացնելու պահանջը,
20) պարբերաբար իրացվելիության ռիսկի սթրես-թեստեր իրականացնելու պահանջը՝ կարճաժամկետ և տևական, բանկին հատուկ և լայն շուկայական սթրեսային սցենարների գծով: Թեստավորման հաճախականությունը պետք է համահունչ լինի բանկի ակտիվների կառուցվածքին և իրացվելիության ռիսկերին ենթարկվածությանը:
21) իրացվելիության ճգնաժամի (չնախատեսված իրավիճակների) պայմաններում գործողությունների ծրագրի առկայության և այն պարբերաբար վերանայելու պահանջը՝ ներառյալ արտակարգ իրավիճակներում ֆինանսավորման ծրագրի առկայության պահանջ:

96. Բանկի խորհրդին ու գործադիր մարմնին նվազագույնը երկու ամիսը մեկ անգամ ներկայացվող հաշվետվությունները ներառում են հետևյալ տեղեկատվությունը.
1) բանկի՝ հաշվետու ժամանակաշրջանի ընթացքում ձևավորված իրացվելի միջոցների պահանջը,
2) ընթացիկ իրացվելիությունը,
3) միջոցների ակնկալվող/կանխատեսվող պահանջը,
4) միջոցների ներգրավման աղբյուրները,
5) ակտիվների ընթացիկ և ակնկալվող որակը,
6) ընթացիկ և ակնկալվող դրամական հոսքերը,
7) կապիտալի ընթացիկ և ակնկալվող մակարդակը,
8) միջոցների ներգրավման և իրացման «արժեքը» (օրինակ՝ ավանդների տոկոսադրույք, հնարավոր կորուստներ ակտիվների վաճառքից և այլն),
9) բանկի ակտիվների և պարտավորությունների կառավարման որակը,
10) տվյալներ բանկի ակտիվների եկամտաբերության մասին,
11) տոկոսային մարժան, տոկոսային մարժայի փոփոխության/տատանումների պատճառների վերլուծությունները,
12) տոկոսադրույքի նկատմամբ զգայուն գործիքների կենտրոնացումները,

13) տվյալ ժամանակաշրջանի դրությամբ ավանդային բազայի կառուցվածքը և դրա փոփոխման միտումները,
14) ակտիվների, պարտավորությունների և հետհաշվեկշռի կառուցվածքի փոփոխման միտումները,
15) շուկայական կանխատեսումները,
16) բանկի տրամադրած փոխառությունների նպատակը, դրանց ֆինանսավորման աղբյուրները, գումարները, ժամկետները, ստացվելիք ու ստացված տոկոսավճարները:

Գլուխ 10. Գործարար գործընթացների անընդհատության կառավարում

97. Բանկը բացահայտում, գնահատում, կառավարում և նվազեցնում է գործարար գործընթացների անընդհատությունը (շարունակականությունը) վտանգող ռիսկերը:
98. Գործարար գործընթացների անընդհատության կառավարման նպատակն է նվազեցնել կամ կանխարգելել արտակարգ իրավիճակ տեղի ունենալու դեպքում հնարավոր բացասական ազդեցությունը բանկի գործառնությունների, համբավի, շահութաբերության, ավանդատուների և այլ պարտատերերի, ֆինանսական համակարգի և (կամ) այլ շահագրգիռ անձանց վրա:
99. Այն գործառնությունները, որոնք անմիջականորեն չեն իրականացվում բանկի կողմից և պատվիրակվել են այլ անձանց, նույնպես ընդգրկվում են գործարար գործընթացների անընդհատության կառավարման համակարգում:
100. Գործարար գործընթացների անընդհատության կառավարումը (այսուհետ՝ նաև ԳԳԱԿ) իրենից ներկայացնում է համալիր և ամբողջական գործընթաց, որը ներառում է այն բոլոր միջոցառումները և գործողությունները, որոնք ուղղված են արտակարգ իրավիճակի դեպքում կարևոր նշանակություն ունեցող գործարար գործընթացների անընդհատության ապահովմանը և (կամ) վերականգնմանը նախապես սահմանված ժամկետներում և ծավալով:
101. Սույն գլխի իմաստով ***արտակարգ իրավիճակն*** այն իրավիճակն է, որի առաջացումը հնարավոր է, սակայն դժվար կանխատեսելի (ցածր հավանականություն ունեցող), և որն առաջացնում է կամ կարող է առաջացնել զգալի նյութական վնասներ կամ այլ բացասական հետևանքներ բանկի, նրա ավանդատուների կամ այլ պարտատերերի համար: Արտակարգ իրավիճակները ներառում են ինչպես արտաքին աղետները (օրինակ՝ բնական աղետներ, տեխնիկական վթարներ, պատերազմ (ռազմական գործողություններ), ավազակային հարձակումներ, զանգվածային անկարգություններ, համաճարակներ, դիվերսիաներ, զանգվածային գործադուլ), այնպես էլ ներքին աղետները, որոնք առաջանում են բանկի աշխատակիցների դիտավորյալ (չարամիտ) կամ անզգույշ (անփույթ, չմտածված) գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ անվտանգության ապահովման համակարգերի ստեղծման և շահագործման ընթացքում ոչ մասնագիտական կամ սխալ որոշումների ընդունման հետևանքով:
102. Սույն գլխի իմաստով կարևոր նշանակություն ունեցող գործընթացները բանկի այն գործառնությունները, գործընթացները, ռեսուրսները և ենթակառուցվածքներն են, որոնց խափանումը, ընդհատումը կամ բացակայությունը (այսուհետ՝ խափանում) էական բացասական ազդեցություն կունենան բանկի գործառնությունների, համբավի, շահութաբերության, ավանդատուների և այլ պարտատերերի վրա և/կամ որոնք այդպիսին են ճանաչվել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից:
103. Բանկի գործարար գործընթացների անընդհատության կառավարման համակարգը նվազագույնը ներառում է.
    1) բանկի գործարար գործընթացների անընդհատության կառավարման քաղաքականությունը՝ հաստատված բանկի խորհրդի կողմից,
    2) բանկի գործարար գործընթացների վերլուծությունը, այդ թվում՝ ռիսկերի գնահատումը,
    3) գործարար գործընթացների վերականգնման նպատակները և ռազմավարությունը,
    4) գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագիրը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների կառավարման և վերականգնման ծրագիրը,
    5) բանկի աշխատակիցների համար սեմինարների անցկացման և իրազեկվածության մակարդակի բարձրացման ծրագիրը,
    6) գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի պարբերական թեստավորման և վերանայման ծրագիրը:
104. Բանկի գործարար գործընթացների անընդհատության կառավարման համակարգը հարմարեցվում է բանկի գործունեության բնույթին, չափին և բարդությանը:

105. Բանկի գործարար գործընթացների անընդհատության կառավարման քաղաքականությունն այն հիմնական փաստաթուղթն է, որով սահմանվում են ԳԳԱԿ համակարգի ներդրման սկզբունքները և ուղղությունը: Քաղաքականությունը պետք է առնվազն պարունակի.
    1) ԳԳԱԿ նպատակները, խնդիրները և ԳԳԱԿ համակարգի ներդրման՝ բանկի որդեգրած մոտեցումը,
    2) ԳԳԱԿ ներդրման համար պատասխանատու անձանց, թիմերի և (կամ) կոմիտեների ցանկը, նրանց հստակ իրավունքները, պարտականությունները և լիազորությունները:
106. Բանկի գործարար գործընթացների վերլուծության նպատակն է՝ բացահայտել այն բոլոր գործարար գործընթացները, որոնք ունեն կարևոր նշանակություն, գնահատել դրանց խափանման ազդեցությունը բանկի վրա և որոշել վերականգնման առաջնահերթությունները:
107. Գործարար գործընթացների վերլուծության ժամանակ հաշվի են առնվում հետևյալը.
    1) հավանական արտակարգ իրավիճակները (սցենարները),
    2) գործարար գործընթացի խափանման հնարավոր բացասական ազդեցությունը բանկի ավանդատուների կամ այլ պարտատերերի վրա, ինչպես նաև ազդեցության գնահատումը ֆինանսական, իրավական կամ համբավի տեսանկյունից,
    3) գործարար գործընթացների խափանման առավելագույն թույլատրելի ժամանակը:
108. Ռիսկերի գնահատման ժամանակ բացահայտվում են այն հնարավոր ռիսկերը (պատճառները), որոնք կարող են հանգեցնել կարևոր նշանակություն ունեցող գործարար գործընթացների խափանմանը: Այդ ռիսկերի գծով հաշվի են առնվում տեղի ունենալու հավանականությունը և տեղի ունենալու դեպքում հնարավոր ազդեցությունը:
109. Վերականգնման նպատակները բանկի կարևոր գործարար գործընթացների իրականացման նախապես սահմանված մակարդակները (ծավալներն) են, ըստ որի պետք է վերականգնվեն այդ գործարար գործընթացներն արտակարգ իրավիճակ տեղի ունենալուց հետո՝ նախապես սահմանված վերականգնման ժամկետում:
110. Բանկը սահմանում և փաստաթղթավորում է գործարար գործընթացների վերականգնման նպատակները և դրանց հասնելու ռազմավարությունը՝ հիմք ընդունելով բանկի գործարար գործընթացների վերլուծության արդյունքները, բանկի գործունեության բնույթը, չափը և բարդությունը:
111. Բանկն ապահովում է գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի համապատասխանությունը բանկի գործարար գործընթացների անընդհատության կառավարման քաղաքականությանը:
112. Գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրում նշվում են բոլոր այն միջոցառումները և պահանջվող տեղեկատվությունը, որոնք հնարավորություն կտան բանկին արդյունավետ կերպով կառավարել արտակարգ իրավիճակը սկզբնական փուլում, ինչպես նաև հետագայում վերականգնել կարևոր նշանակություն ունեցող գործարար գործընթացները:
113. Գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագիրն առնվազն պարունակում է.
    1) կարևոր նշանակություն ունեցող գործարար գործընթացների ցանկը,
    2) յուրաքանչյուր կարևոր գործարար գործընթացի վերականգնման մակարդակը և վերականգնման ժամկետը,
    3) յուրաքանչյուր կարևոր գործարար գործընթացի վերականգնման ռազմավարությունը և պահանջվող միջոցառումներն ու դրանց հաջորդականությունը,
    4) գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների համար պահանջվող ռեսուրսների և ենթակառուցվածքների նկարագրությունը,
    5) արտակարգ իրավիճակի պայմաններում և դրանից հետո բանկի աշխատակիցների և թիմերի իրավունքները, պարտականությունները և լիազորությունները,
    6) հաղորդակցման ծրագրերը:
114. Բանկի գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագիրը թեստավորվում է առնվազն տարին մեկ անգամ, կամ ավելի հաճախ՝ գործարար գործընթացների կազմի, կառուցվածքի կամ բնույթի հետ կապված էական փոփոխությունների դեպքում: Գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի թեստավորման արդյունքները փաստաթղթավորվում և ներկայացվում են բանկի խորհրդին:
115. Բանկերի տեղեկատվական համակարգերի անընդհատության ապահովման և կառավարման հետ կապված առանձնահատկությունները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ այլ իրավական ակտով:

Գլուխ 11. Վճարային համակարգեր, հետհաշվեկշռային գործառնություններ, մասնաճյուղերի կառավարում, տեղեկատվություն բանկի հետ կապված անձանց մասին, ՓԼ/ԱՖ

116. Բանկերի կողմից վճարահաշվարկային ծառայություններ մատուցելու ժամանակ ներքին հսկողություն իրականացնելու նպատակներն են՝ վճարահաշվարկային ծառայություններին բնորոշ ռիսկերի բացահայտումը, վերլուծությունը և կառավարումը, ինչպես նաև աշխատանքի արդյունավետության բարձրացման նպատակով միջոցառումների իրականացումը:
117. Ներքին հսկողության համակարգը վճարահաշվարկային համակարգերի առումով նվազագույնը ներառում է.
    1) օպերատորի կամ գործակալի հետ պայմանագիր կնքելիս գործունեության համառոտ նկարագրության տրամադրում,
    2) համակարգում հնարավոր խափանումների և դրանց վերացմանն ուղղված միջոցառումների նկարագրություն:
118. Բանկի ներքին հսկողության համակարգը վճարային գործիքների (վճարման հանձնարարական, վճարման պահանջագիր, պարբերաբար վճարումների հանձնարարական, ուղղակի դեբետագրում (այսուհետև՝ կարգադրություն)) մասով նվազագույնը ներառում է.
    1) գործարքների իրականացման, մասնավորապես՝ կարգադրությունների ընդունման, մշակման, կատարման և մերժման ընթացակարգերի սահմանում,
    2) գործարքների իրականացման ընթացքում հնարավոր ռիսկերի կանխարգելման համար կիրառվող ընթացակարգերի սահմանում,
    3) բանկային հաշիվների և կանխիկ եղանակով իրականացված գործարքների ծավալների վերաբերյալ տեղեկատվության տրամադրման ընթացակարգերի սահմանում,
    4) փաստաթղթերի պահպանման (արխիվացման) ընթացակարգերի սահմանում,
    5) չպարզաբանված, մերժված և ուշացված գործարքների մասին տեղեկությունների տրամադրման, չպարզաբանված գործարքների բացահայտմանն ուղղված միջոցառումների ընթացակարգերի սահմանում:
119. Բանկի ներքին հսկողության համակարգը փաստաթղթային ակրեդիտիվի, փաստաթղթային ինկասոյի, երաշխիքների և այլ փաստաթղթային գործարքների գծով նվազագույնը ներառում է.
    1) գործարքների իրականացման ընթացակարգեր,
    2) յուրաքանչյուր գործիքի նկարագրություն,
    3) ռիսկերի կառավարման մեխանիզմներ:
120. Բանկի ներքին հսկողության համակարգը չեկերով իրականացվող գործառնությունների մասով նվազագույնը ներառում է.
    1) բանկի կողմից չեկերի թողարկման, սպասարկման և վճարման իրականացման ընթացակարգեր,
    2) չեկային գրքույկի տրամադրման ժամանակ հաճախորդին նույնականացնող տվյալների մուտքագրում և պահպանում տվյալների բազայում,
    3) այլ բանկերի վրա դուրսգրված չեկերի (ներառյալ՝ ըստ տեսակների) սպասարկման վերաբերյալ ընթացակարգերի սահմանում,
    4) չեկով վճարում կատարելու մերժման պայմանների սահմանում,
    5) կեղծ չեկերի հայտնաբերման և համապատասխան միջոցառումների ձեռնարկման ընթացակարգերի սահմանում:
121. Ներքին հսկողության համակարգն էքվայրինգի վերաբերյալ առնվազն ներառում է հետևյալ պահանջները.
    1) առևտրային կետերի հետ պայմանագրերի կնքման ընթացակարգերի սահմանում,
    2) բանկի կողմից առևտրի և/կամ ծառայություններ մատուցող կետերին սպասարկման ծառայության (էքվայրինգ) մատուցման ընթացակարգերի սահմանում,
    3) քարտային գործունեության իրականացման մոնիթորինգի, այդ թվում՝ հսկողության ընթացակարգերի սահմանում,
    4) տեղադրված բանկոմատների և այլ ինքնասպասարկման սարքավորումների ֆիզիկական և տեխնիկական անվտանգության ապահովման վերաբերյալ ընթացակարգերը (տեղակայման վայրի ընտրությունը, անվտանգության միջոցառումները, համապատասխան պայմանագրերը և այլն), ինչպես նաև բանկոմատների և այլ ինքնասպասարկման սարքավորումների միջոցով կատարված խարդախությունների և խափանումների պատճառների բացահայտմանն ու վերացմանն ուղղված ընթացակարգեր,

5) աշխատանքային և ոչ աշխատանքային օրերին բանկոմատների և այլ ինքնասպասարկման սարքավորումների աշխատանքը բնականոն կերպով ապահովելու ընթացակարգերը, այդ թվում՝
   ա. բանկոմատների և այլ ինքնասպասարկման սարքավորումների տեղադրման և սպասարկման հետ առնչվող ռիսկերի (օրինակ՝ լիցքավորման ժամկետների խախտում, կապի խափանում, գործարքը հավաստող թղթի վերջանալ, անսարքություն, անսարքության հետևանքով հաճախորդների շահերի ոտնահարում և այլն) կառավարման և զսպման մեխանիզմները,
   բ. բանկոմատների և այլ ինքնասպասարկման սարքավորումների լիցքավորման չափանիշները (հաշվի առնելով նախկինում կատարված գործարքների մոնիթորինգի արդյունքները, աշխատավարձերի վճարման օրերը, առաջիկա ոչ աշխատանքային և տոնական օրերի համար կանխիկ դրամի պահանջարկը և այլ հանգամանքներ),
   գ. բանկոմատների և այլ ինքնասպասարկման սարքավորումների ընթացիկ աշխատանքի ժամանակ տեխնիկական խնդիրների (թղթադրամը «կուլ տալու», վճարային քարտը հետ չվերադարձնելու և այլն) վերացման ընթացակարգերը,
   դ. բանկոմատներում մնացած քարտերը քարտապաններին վերադարձնելու (տեղեկացնելը, տրամադրելու առավելագույն ժամկետները և այլն) ընթացակարգերը,
   ե. բանկոմատների և այլ ինքնասպասարկման սարքավորումների աշխատանքի դադարեցման դեպքերը և առավելագույն ժամկետները,
   զ. ինքնասպասարկման սարքավորումների ընթացիկ աշխատանքային վիճակի մոնիթորինգի իրականացման ընթացակարգերը:

122. Ներքին հսկողության համակարգը վճարային քարտերի մասով նվազագույնը ներառում է հետևյալ պահանջները.
   1) ֆինանսական կազմակերպության վճարային քարտերի թողարկման, տրամադրման և սպասարկման ընթացակարգերը, այդ թվում՝ հետևյալ ընթացակարգերը՝
      ա. նույնականացման,
      բ. գործառնությունների տեսակների և համապատասխան միջնորդավճարների,
      գ. գործարքների սահմանափակումների,
      դ. քարտապանի կողմից քարտային գործառնության բողոքարկման ժամանակահատվածի սահմանման,
      ե. արտարժույթով արտահայտված գործառնությունների կատարման պայմանների,
      զ. վճարային քարտի կորստի/գողանալու դեպքում իրականացվող միջոցառումների,
   2) տվյալների գրանցամատյանների արխիվացման և արխիվների պահպանման կանոնները:

123. Բանկի ներքին հսկողության համակարգը բանկային և դեպո հաշիվների սպասարկման վերաբերյալ առնվազն ներառում է հետևյալ պահանջները.
   1) բանկում հաշիվների բացման, սպասարկման և դրանցով գործարքների կատարման վերաբերյալ ընթացակարգերի սահմանում,
   2) հաճախորդների սպասարկման ժամանակ ֆիզիկական և իրավաբանական անձանց տվյալների նույնականացման ընթացակարգերի սահմանում:

124. Բանկի ներքին հսկողության համակարգը հետհաշվեկշռային գործառնությունների մասով նվազագույնը ներառում է.
   1) վարկային գծերի, օվերդրաֆտների, վարկային քարտերի, ակրեդիտիվների և երաշխիքների դիմումների տրամադրման պայմանները, տրամադրման համար պահանջվող նվազագույն փաստաթղթերի ցանկը, դրանց մշակման և ուսումնասիրման գործընթացը,
   2) անհատական պահատեղի վարձակալման պայմանները, ինչպես նաև անհատական պահատեղի համար պայմանագիր կնքելու պահանջը, որն առնվազն կնախատեսի հետևյալ դրույթները.
      ա. միևնույն պահատեղից փոխկապակցված անձանց օգտվելու դեպքերն ու կարգը,
      բ. այն արժեքների ցանկը (թմրանյութ, զենք և այլն), որոնք արգելված է պահել անհատական պահատեղերում,
      գ. յուրաքանչյուր անգամ բանկի աշխատակցի ներկայությամբ անհատական պահատեղը բացելուց հետո հաճախորդին առանձին (անհատական պահատեղերի գտնվելու վայրից տարբեր) սենյակ տրամադրելու պահանջը,
      դ. անհատական պահատեղի սենյակ մուտքի ժամը և օրը հավաստող անդորրագիրը հաճախորդի կողմից ստորագրվելու պահանջը,
   3) հավատարմագրային կառավարման գծով բանկի կողմից տրամադրվող ծառայությունները:

125. Վարկային ռիսկ պարունակող հետհաշվեկշռային գործառնությունները կարգավորող ներքին իրավական ակտերի դրույթները/պահանջները պետք է համահունչ լինեն վարկային գործառնությունները կարգավորող ներքին ակտերի պահանջներին:
126. Բանկի մասնաճյուղերի կառավարմանը վերաբերող ներքին հսկողության համակարգը նվազագույնը ներառում է.

1) մասնաճյուղի աշխատակիցների նվազագույն/առավելագույն քանակը և նրանց ներկայացվող պահանջները,

2) մասնաճյուղի աշխատակիցների մասնագիտական մակարդակի գնահատումը, վերապատրաստումը,

3) բանկի գլխամաս տեղեկատվություն ներկայացնելու պարտականությունների բաշխումը,

4) բանկի բոլոր մասնաճյուղերում հաշվապահական հաշվառման և ներքին հաշվետվական միասնական համակարգի կիրառման սկզբունքները,

5) մասնաճյուղում առկա կանխիկ միջոցների սահմանաչափը, մասնաճյուղի աշխատակիցների կողմից իրականացվող վարկավորման սահմանաչափերը (ըստ վարկերի տեսակների): Փոխառության գործարքներ կնքելու իրավասություն ունեցող աշխատակիցների համար առանց համապատասխան ղեկավարի վավերացման կնքվող գործարքի (կամ գործարքների) թույլատրելի առավելագույն չափերը/սահմանաչափերը,

6) մասնաճյուղի կողմից խոշոր միջոցների շարժի ու խոշոր գործարքների իրականացման դեպքում բանկի կողմից իրականացվող միջոցառումները:

127. Ներքին հսկողության համակարգը նախատեսում է բանկի հետ կապված անձանց մասին տեղեկատվության հավաքագրման, պահպանման (արխիվացման) և մշտապես թարմացման արդյունավետ ընթացակարգերի, ինչպես նաև բանկի հետ կապված անձանց հետ գործարքների կնքման արդյունավետ ընթացակարգերի առկայություն:
128. Բանկի հետ կապված անձանց հետ գործարքների կնքման ընթացակարգերը նվազագույնը բացահայտում և վերահսկում են շահերի բախման հնարավոր դեպքերն ու ոլորտները:
129. Բանկն ապահովում է բանկում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց, բանկի հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև բանկի հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2005 թվականի ապրիլի 12-ի 145-Ն որոշմամբ հաստատված «Բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, բանկերի մասնաճյուղերի և ներկայացուցչությունների գրանցումը, բանկերի և օտարերկրյա բանկերի մասնաճյուղերի ղեկավարների որակավորումը և գրանցումը» կանոնակարգ 1-ի համաձայն Կենտրոնական բանկ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների (տեղեկությունների) ստացումն ու ուսումնասիրությունը:
130. Բանկի հետ կապված անձանց մասին տեղեկատվությունը նվազագույնը ներառում է.

1) անձի անունը և բնակության վայրը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և գտնվելու վայրը),

2) զբաղմունքը (իրավաբանական անձի դեպքում՝ գործունեության տեսակը),

3) կապվածության ձևը,

4) բանկից (իսկ հնարավորության դեպքում՝ նաև այլ բանկերից) ստացված բոլոր տեսակի վարկերը, փոխառությունները, կատարված ներդրումները, գրավը, պայմանական և այլ պարտավորությունները, ավանդները, բանկին տրված փոխառությունները և այլն:

131. Բանկի ներքին հսկողության համակարգը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի առումով նվազագույնը ներառում է.

1) այն պարտադիր ընթացակարգերը, որոնք բանկի կողմից պետք է պահպանվեն հաճախորդների, պարտատերերի և այլ անձանց հետ ֆինանսական և (կամ) այլ գործառնություններ կատարելիս,

2) ֆինանսական կամ այլ գործառնությունների կատարման ընթացքում ներկայացման համար անհրաժեշտ տեղեկությունները,

3) բանկի հաճախորդների ռիսկայնության չափանիշները (բարձր ռիսկի հաճախորդների), յուրաքանչյուր ռիսկի խմբում ընդգրկված հաճախորդների նկատմամբ սահմանված պահանջները,

4) իրական շահառուի վերաբերյալ նվազագույն տեղեկությունների հավաքագրումը և հաճախորդների նույնականացման համար անհրաժեշտ նվազագույն ընթացակարգերը,

5) հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների գրանցման և պահպանման, ինչպես նաև կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, հաշվառման և պահպանման կարգը:

132. Բանկի ներքին դիտարկումների մարմինը նվազագույնն ուսումնասիրում է բանկի իրականացրած ֆինանսական գործառնությունների, բանկի կառուցվածքային և տարածքային ստորաբաժանումների և աշխատակիցների գործողությունների համապատասխանությունը «Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և դրա հիման վրա ընդունված նորմատիվ իրավական այլ ակտերի և բանկի ներքին իրավական ակտերի պահանջներին:
133. Բանկի ներքին իրավական ակտերը նվազագույնը ներառում են ներքին իրավական ակտերով նախատեսված ընթացակարգերի և պահանջների պահպանման նկատմամբ հսկողության իրականացման կարգը և պայմանները և դրանց չպահպանման համար բանկի ղեկավարների, աշխատակիցների և փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմամբ զբաղվող կառուցվածքային առանձին ստորաբաժանման կամ աշխատակցի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված պատասխանատվության կիրառման կարգն ու պայմանները և պատասխանատվության միջոցները:

ԲԱԺԻՆ 6. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Գլուխ 12. Տեղեկատվական և հաշվետվողականության համակարգեր

134. Ներքին հսկողության համակարգը նախատեսում է հուսալի և արդյունավետ տեղեկատվական և հաշվետվողականության համակարգերի առկայություն:
135. Բանկի հաշվապահական և այլ գրառումները, բանկում օգտագործվող տեղեկատվությունը պետք է լինեն արժանահավատ, ամբողջական, ներկայացվեն ժամանակին և պաշտպանված լինեն չարտոնված առնչություններից:
136. Ներբանկային տեղեկատվական հոսքերը և փաստաթղթաշրջանառության համակարգը օգտագործվում են կառավարման բոլոր մակարդակներում բանկային տարբեր գործառույթների/գործընթացների իրականացման և դրանց նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու համար:
137. Բանկի ներքին իրավական ակտերով սահմանվում են բանկի խորհրդին ու գործադիր մարմնին ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը և պարբերականությունը, հաշվետվությունների ներկայացման համար պատասխանատու ստորաբաժանումը/անձը: Բանկի խորհրդին և գործադիր մարմնին առնվազն ներկայացվում են սույն կանոնակարգի 4-րդ և 5-րդ բաժիններում նշված ոլորտների վերաբերյալ հաշվետվություններ, որոնք պետք է բավարարեն սույն կանոնակարգով սահմանված նվազագույն պայմաններին և հնարավորություն տան բանկի խորհրդին և գործադիր մարմնին.
    1) գնահատելու համապատասխան ոլորտի առկա վիճակը, փոփոխման միտումները, դրանց ազդեցությունը բանկի գործունեության, ռիսկայնության մակարդակի վրա,
    2) ժամանակին և համարժեքորեն արձագանքելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու տվյալ ոլորտում բացահայտված խնդիրների լուծման ուղղությամբ,
    3) գնահատելու տվյալ ոլորտների համար պատասխանատու ստորաբաժանումների/անձանց կողմից կատարված աշխատանքի որակը, նրանց գործունեության արդյունավետությունը,
    4) բարձրացնելու խորհրդի և գործադիր մարմնի կողմից որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունը՝ խորհրդին և գործադիր մարմնին որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման միջոցով:
138. Բանկի ներքին ակտերով սահմանվում են որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (հաշվետվություն, տեղեկանք, այլ), այդ տեղեկատվության տրամադրման կարգը և պարբերականությունը:
139. Բանկն ապահովում է տեղեկատվության պահպանման և մշակման էլեկտրոնային համակարգերի անվտանգությունը և դրանց աշխատանքի անընդհատությունը:
140. Բանկում հստակ կանոնակարգվում են բանկի համապատասխան ստորաբաժանումներից, բանկի մասնաճյուղերից տեղեկատվության ստացման, հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների կազմման և Կենտրոնական բանկ ներկայացման ընթացակարգերը:
141. Բանկի յուրաքանչյուր մասնաճյուղի վերաբերյալ բանկի խորհրդին և գործադիր մարմնին խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ ներկայացվող տեղեկատվությունը նվազագույնը ներառում է.
    1) մասնաճյուղի գործունեության վերլուծությունը, այդ թվում՝ մասնաճյուղի վարկային պորտֆելի, ավանդային բազայի կառուցվածքը, կենտրոնացումները, փոփոխման միտումները,

2) մասնաճյուղի կողմից սպասարկվող տարածաշրջանի տնտեսական վերլուծությունը,
3) հաճախորդների կողմից ներկայացված դիմում-բողոքները,
4) հաճախորդների թվաքանակի փոփոխությունների դինամիկան:

142. Բանկը նախատեսում է այնպիսի ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան ապահովելու Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատությունը: Նման ընթացակարգերը առնվազն ներառում են.
1) նախքան բանկի գործարքների հաշվապահական ձևակերպումների կատարումը առկա տվյալների ստուգումն այն անձի կողմից, ով չի կնքել այդ գործարքները, որոշում չի կայացրել դրանք կնքելու վերաբերյալ և որևէ այլ ձևով չի մասնակցել գործարքների կնքման գործընթացին,
2) մինչև Կենտրոնական բանկ ներկայացնելը հաշվետվությունների ստուգումն այն անձի կողմից, ով չի կազմել այդ հաշվետվությունները, ինչպես նաև չի կնքել այդ գործարքները, որոշում չի կայացրել դրանք կնքելու վերաբերյալ և որևէ այլ ձևով չի մասնակցել գործարքների կնքման գործընթացին,
3) նման ստուգման արդյունքում հայտնաբերված տարբերությունների գրանցումն ու դրանց առաջացման պատճառների ուսումնասիրումը և ապագայում նման դեպքերը բացառելուն ուղղված միջոցառումների առաջարկումն ու իրականացումը:

143. Ներքին հաշվետվողական համակարգի մաս կազմող հաշվետվական փաստաթղթերում արտացոլված տեղեկատվության ճշտությունը հաստատվում, իսկ հնարավորության դեպքում՝ նաև ստուգվում է հաշվետվություն տրամադրող ստորաբաժանման ղեկավարի կողմից, իսկ նման ստորաբաժանման բացակայության դեպքում՝ հաշվետվության ներկայացման համար պատասխանատու աշխատակցի կողմից:

144. Բանկն ապահովում է բանկի առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ վարկային, ավանդային պայմանագրեր և այլն) պահպանության արդյունավետ համակարգի առկայություն, որը հնարավորություն է տալիս ապահովելու այդ փաստաթղթերի պաշտպանությունը կորստից, չթույլատրված դուրսհանումից կամ օգտագործումից: Բանկի ներքին իրավական ակտերով սահմանվում են նաև բանկի առավել կարևոր փաստաթղթերի պահպանման (արխիվացման) ձևը, ժամկետները և ընթացակարգերը:

ԲԱԺԻՆ 7. ՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 13. Ընդհանուր դրույթներ

145. Որպես ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգի տարր՝ բանկը պետք է ունենա առնվազն հետևյալ հսկողական գործառույթները.
1) ռիսկերի կառավարման գործառույթ,
2) համապատասխանության ապահովման գործառույթ,
3) ներքին աուդիտի գործառույթ:

146. Հսկողական գործառույթների (բացառությամբ՝ ներքին աուդիտի գործառույթի) իրականացման համար պատասխանատու անձանց նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը, գործունեության պարբերական գնահատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումն իրականացվում է բանկի գործադիր մարմնի կողմից՝ խորհրդի համաձայնությամբ:

147. Հսկողական գործառույթների առկայությունը չի ազատում բանկի խորհրդին կամ գործադիր մարմնին իրենց պարտականությունների կատարումից:

148. Բանկը հսկողական գործառույթները և դրանց հետ առնչվող հաշվետվողականության համակարգը ներդնում է բանկի կազմակերպական կառուցվածքում այնպես, որ հնարավորություն տրվի նշված գործառույթներն իրականացնելու արդյունավետորեն:

149. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի/անձանց լիազորություններն ու պարտականությունները սահմանվում են խորհրդի կողմից: Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը պարբերաբար ուսումնասիրում է այդ փաստաթղթերը և անհրաժեշտության դեպքում գործադիր մարմնին և խորհրդին է ներկայացնում դրանք փոփոխելու հետ կապված իր առաջարկությունները:

150. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի համար պետք է նվազագույնի հասցվեն շահերի բախման հնարավոր դեպքերը: Եթե, այնուամենայնիվ, առկա է շահերի բախման որևէ դեպք, որը չի կարող

կարգավորվել բանկի գործադիր մարմնի կողմից, ապա խնդիրը պետք է ներկայացվի բանկի խորհրդի քննարկմանն ու լուծմանը:

151. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի համար բանկն ապահովում է բավարար լիազորություններ, անկախություն և ռեսուրսներ՝ տվյալ գործառույթի համար սահմանված պարտականություններն արդյունավետորեն կատարելու և նպատակներին հասնելու համար:

152. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը պետք է.
   1) հնարավորություն ունենա անկախ և օբյեկտիվ կարծիք հայտնելու պատասխանատվության իր ոլորտի խնդիրների, փաստացի ու հնարավոր խախտումների վերաբերյալ,
   2) հնարավորություն ունենա անհրաժեշտության դեպքում հսկողություն իրականացնելու ձեռնարկված ուղղիչ միջոցառումների և տրված առաջարկությունների իրականացման նկատմամբ,
   3) հնարավորություն ունենա իր նախաձեռնությամբ խոսելու յուրաքանչյուր աշխատակցի հետ, ստանալու իր պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները,
   4) հնարավորություն ունենա անմիջապես խոսելու և պարբերաբար հանդիպելու (առանց գործադիր տնօրենի ներկայության) խորհրդի նախագահի հետ,
   5) հնարավորություն ունենա ներգրավելու իր գործառույթը պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ որակավորում և գիտելիքներ ունեցող աշխատակիցներ,
   6) հնարավորություն ունենա արդյունավետորեն օգտագործելու համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաներ, ինչպես նաև կառավարչական տեղեկատվական համակարգերը (MIS):

153. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը բանկի գործադիր տնօրենի հետ պարբերաբար քննարկում է տվյալ գործառույթի ռեսուրսների համարժեքությունը և անհրաժեշտության դեպքում պահանջում ճշգրտումներ: Եթե գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ համաձայնության չի գալիս գործադիր տնօրենի հետ, ապա այդ հարցը ներկայացվում է խորհրդի քննարկմանն ու լուծմանը:

154. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը պարբերաբար գնահատում է տվյալ գործառույթի արդյունավետությունը, անհրաժեշտության դեպքում նախաձեռնում անհրաժեշտ բարեփոխումներ և դրանց նկատմամբ մոնիթորինգ իրականացնում: Նշված գնահատման արդյունքները խորհրդի կողմից սահմանված կարգով ներկայացվում են խորհրդին:

155. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է բանկի խորհրդի կողմից՝ խորհրդի կողմից սահմանված չափանիշներին համապատասխան: Գնահատման իրականացման նպատակով բանկի խորհուրդը սահմանում է հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց կողմից խորհրդին ներկայացվող հաշվետվությունների բովանդակությունը, ֆորմատը, հաճախականությունը: Հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց կողմից խորհուրդ ներկայացվող հաշվետվություններն առնվազն հնարավորություն են տալիս խորհրդին.
   1) գնահատելու հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց պատասխանատվության ոլորտների առկա վիճակը, փոփոխման միտումները, դրանց ազդեցությունը բանկի գործունեության, ռիսկայնության մակարդակի վրա,
   2) ժամանակին և համարժեքորեն արձագանքելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց կողմից բացահայտված խնդիրների լուծման ուղղությամբ,
   3) գնահատելու հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց կողմից կատարված աշխատանքի որակը, նրանց գործունեության արդյունավետությունը՝ հսկողական գործառույթների համար սահմանված նպատակներին հասնելու տեսանկյունից,
   4) բարձրացնելու խորհրդի կողմից որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունը՝ խորհրդին որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման միջոցով:

Գլուխ 14. Ռիսկերի կառավարման գործառույթ

156. Բանկը պետք է ունենա ռիսկերի կառավարման արդյունավետ գործառույթ, որը պետք է օժանդակի բանկին իր ռիսկերի ժամանակին բացահայտման, չափման, հսկողության, մոնիթորինգի և հաղորդակցման գործընթացում:

157. Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը/անձինք.
1) մասնագիտական վերլուծությունների, ռիսկերի դիտարկումների իրականացման և այլ միջոցներով օժանդակում են բանկի խորհրդին և գործադիր մարմնին իրենց պարտականությունների կատարման գործընթացում,
2) բացահայտում են բանկի գործունեությանը ներհատուկ ռիսկերը,
3) գնահատում, մոնիթորինգ են իրականացնում, օգնում են արդյունավետորեն կառավարելու բացահայտված ռիսկերը: Վերջինս ներառում է ռիսկերը կլանելու բանկի ունակության գնահատումը՝ հաշվի առնելով ռիսկերի բնույթը, տեղի ունենալու հավանականությունը, կոռելյացիան և հնարավոր բացասական ազդեցության աստիճանը,
4) տալիս են բանկի ռիսկի ընդհանուր նկարագիրը ինչպես միայն բանկի, այնպես էլ խմբային մակարդակով, եթե բանկը ֆինանսական խմբի անդամ է հանդիսանում,
5) պոտենցիալ ռիսկերի վաղ բացահայտման և գնահատման նպատակով պարբերաբար գնահատում են ներքին և արտաքին միջավայրը,
6) դիտարկում են բանկի վարձատրության քաղաքականության արդյունքում առաջացող ռիսկերը, խորհրդին պարբերաբար ազդակներ են փոխանցում բանկի վարձատրության քաղաքականության արդյունքում ստեղծված խթանների, ինչպես նաև ռիսկերի ստանձնման վարքագծի վրա վարձատրության քաղաքականության ազդեցության վերաբերյալ,
7) մշակում են բանկի խորհրդի կողմից հաստատվող ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ախորժակը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները,
8) խորհրդի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն իրենց գործառույթների մասով մասնակցում են բանկի կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացին, պարբերաբար իրականացնում են սթրես-թեստեր,
9) պարբերաբար խորհրդին, գործադիր մարմնին, անհրաժեշտության դեպքում նաև հսկողական գործառույթներ իրականացնող անձանց հաշվետվություններ են ներկայացնում բանկի ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ,
10) փաստաթղթավորում և խորհրդին են ներկայացնում էական փոփոխությունները, որոնք ազդել են կամ կարող են ազդել բանկի ռիսկերի կառավարման համակարգի վրա՝ ներկայացնելով ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության պահպանմանն ու բարելավմանն ուղղված առաջարկություններ:

158. Առնվազն եռամսյակային պարբերականությամբ ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը խորհրդին է ներկայացնում հաշվետվություններ նվազագույնը հետևյալի վերաբերյալ.
1) բանկի ռիսկերի գնահատումը և ռիսկերի կառավարման նպատակով ձեռնարկված քայլերը,
2) բանկի ռիսկերի նկարագրի փոփոխությունների գնահատումը,
3) նախապես սահմանված ռիսկի սահմանաչափերի գնահատումը (կիրառելիության դեպքում),
4) ռիսկերի կառավարման հետ կապված խնդիրները՝ կապված խոշոր ծրագրերի և ներդրումների հետ (կիրառելիության դեպքում),
5) ռիսկային իրադարձությունների գնահատումը և անհրաժեշտ կանխարգելիչ/ուղղիչ միջոցառումների ձեռնարկումը:

159. Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանող անձը ժամանակին պատշաճ կարգով խորհրդին, գործադիր մարմնին տեղեկացնում է այն բոլոր հանգամանքների մասին, որոնք կարող են էական բացասական ազդեցություն ունենալ բանկի ռիսկերի կառավարման համակարգի վրա:

Գլուխ 15. Համապատասխանության ապահովման գործառույթ

160. Բանկն ապահովում է համապատասխանության ապահովման արդյունավետ գործառույթի առկայություն, որը պետք է օժանդակի բանկին գործել օրենսդրության պահանջներին համապատասխան, ինչպես նաև խրախուսի և պահպանի համապատասխանության ապահովման կորպորատիվ մշակույթը:

161. Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը/անձինք առնվազն իրականացնում են.
1) բանկում էթիկական կորպորատիվ մշակույթի ձևավորման խրախուսումն ու աջակցումը, որն արժեքավորում է պատասխանատու վարվելակերպը և աշխատակիցների գործունեության համապատասխանությունն օրենքների և այլ իրավական ակտերի, ներառյալ՝ բանկի ներքին իրավական ակ-

տերի պահանջներին: Այն ներառում է բանկի կորպորատիվ արժեքները ներկայացնող վարքագծի կանոնների վերաբերյալ սեմինարների և քննարկումների պարբերաբար կազմակերպումը՝ նպատակ ունենալով խրախուսելու բարձր պրոֆեսիոնալիզմը և սահմանելու աշխատակիցներից սպասվող վարքագիծը,

2) հիմնական իրավական և վերահսկողական պահանջների և դրանց՝ բանկի գործունեության համապատասխանության ապահովման հետ կապված ռիսկերի բացահայտում, գնահատում, կառավարում և համապատասխան շրջանառության ապահովում,
3) բանկի գործունեության վրա իրավական համակարգի հնարավոր փոփոխությունների ազդեցության և դրա հետ կապված հնարավոր ռիսկերի գնահատում,
4) իրավական, վերահսկողական և էթիկական պարտավորությունների հիմնական ոլորտներում պատշաճ քաղաքականության, գործընթացների ու հսկողության մեխանիզմների առկայության ապահովում և պատշաճ մոնիթորինգի իրականացում,
5) մեծ պատասխանատվություն կրող, ինչպես նաև բարձր ռիսկային գործունեությամբ զբաղվող աշխատակիցների համար հիմնական իրավական և վերահսկողական պարտավորությունների վերաբերյալ սեմինարների պարբերաբար կազմակերպում,
6) բանկի գործունեության համապատասխանության առումով թերությունների ու խախտումների բացահայտում, անհրաժեշտության դեպքում կանխարգելիչ միջոցառումների կիրառում:

162. Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը/անձինք առնվազն եռամսյակային պարբերականությամբ խորհրդին են ներկայացնում հաշվետվություններ, որոնք նվազագույնը ներառում են.

1) բանկի համապատասխանության գործառույթի հետ կապված ռիսկերի գնահատումը և ռիսկերի կառավարման նպատակով ձեռնարկված քայլերը,
2) բանկի տարբեր միավորների (բաժիններ, բիզնես միավորներ և այլն) գործունեության համապատասխանության գնահատումը ներքին ստանդարտներին և նպատակներին հետևելու տեսանկյունից,
3) ղեկավարների և բանկում այլ պատասխանատու աշխատանք իրականացնող անձանց հետ առնչվող համապատասխանության հետ կապված ցանկացած խնդիր, դրա հետ կապված հետազոտությունների արդյունքները և նախաձեռնված քայլերը,
4) բանկի այլ աշխատակիցների կամ կազմակերպական միավորների հետ առնչվող համապատասխանության հետ կապված էական խախտումներն ու խնդիրները, դրանց հետ կապված հետազոտությունների արդյունքները և նախաձեռնված քայլերը,
5) բանկի կամ ցանկացած աշխատակցի նկատմամբ որևէ կարգավորող կամ վերահսկող մարմնի կողմից կիրառված տուգանքները կամ այլ պատասխանատվության միջոցները:

163. Համապատասխանության գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը պետք է ունենա լիազորություն և պարտականություն պատշաճ կարգով անմիջապես խորհրդի նախագահին տեղեկացնել բանկի ղեկավարների կողմից էական անհամապատասխանության դեպքերի, ինչպես նաև բանկի պարտավորությունների մասով բանկի էական անհամապատասխանության դեպքերի վերաբերյալ:

Գլուխ 16. Ներքին աուդիտի գործառույթ

164. Բանկը պետք է ունենա ներքին աուդիտի արդյունավետ գործառույթ, որն առնվազն ենթադրում է անկախ և անկողմնակալ հավաստման (assurance) գործունեության իրականացում՝ ուղղված բանկի կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի և գործընթացների արդյունավետության բարձրացմանը և նպատակայնության ապահովմանը:

165. Բանկի ներքին հսկողության համակարգը, ներքին աուդիտի գործունեության առումով, նվազագույնը ներառում է.

1) ներքին աուդիտի նպատակը, դերը, լիազորություններն ու պարտականությունները, գործունեության սկզբունքները,
2) ներքին աուդիտի ստորաբաժանման կողմից իրականացման ենթակա նվազագույն աշխատանքները,
3) ներքին աուդիտի գործունեության շրջանակները, ներքին աուդիտի կողմից մատուցվող հավաստման ծառայությունների բնույթը,
4) ներքին աուդիտի իրականացման և աուդիտորական հաշվետվությունների պատրաստման ու ներկայացման կարգը և ժամկետները,

5) ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարի և աշխատակիցների ընտրության և նշանակման կարգը,
6) ներքին աուդիտի ստորաբաժանման աշխատանքների երկարաժամկետ պլանավորման գործընթացը, տարեկան աշխատանքային ծրագրի մշակման ժամկետները, պլանավորման ժամանակ իրականացվող ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը:

166. Բանկն ապահովում է, որ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները իրենց գործառույթների իրականացման ընթացքում առաջնորդվեն հետևյալ սկզբունքներով.
1) Անկախության սկզբունք, որն ապահովելու համար, ի թիվս օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների, ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները՝
   ա. աուդիտորական աշխատանքի պլանավորման, իրականացման, արդյունքների ամփոփման և շրջանառության հարցերում զերծ են երրորդ անձանց միջամտությունից,
   բ. զերծ են մնում այնպիսի գործառույթների գնահատումից, որոնց իրականացման համար հանդիսացել են պատասխանատու անձ աուդիտորական դիտարկմանը նախորդող տարվա ընթացքում,
   գ. իրենց աշխատանքների իրականացման ընթացքում բացառում են շահերի բախման այլ դեպքերը (շահերի բախում կարող է առաջանալ, օրինակ, բանկի խոշոր հաճախորդ լինելու կամ աուդիտի ենթակա ոլորտի վերաբերյալ խորհրդատվական ծառայություն մատուցելու արդյունքում):
2) Ազնվության սկզբունք, որն ապահովելու համար ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները՝
   ա. իրականացնում են իրենց գործառույթները՝ ցուցաբերելով ազնվություն, հոգատարություն և բարձր պատասխանատվություն աշխատանքի նկատմամբ,
   բ. չեն ներգրավվում անօրինական գործունեության մեջ կամ չեն դառնում այնպիսի գործողությունների մասնակից, որոնք վարկաբեկում են աուդիտորի մասնագիտությունը կամ բանկին:
3) Օբյեկտիվության սկզբունք, որը ենթադրում է, որ ուսումնասիրվող գործունեության կամ գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելիս, գնահատելիս և շրջանառելիս ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները կիրառում են բարձր մասնագիտական օբյեկտիվություն (անկողմնակալություն): Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները իրականացնում են բոլոր էական հանգամանքների հավասարակշռված գնահատում և դատողություններ իրականացնելիս չեն առաջնորդվում սեփական կամ այլ անձանց շահերով: Օբյեկտիվության սկզբունքն ապահովելու համար ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները՝
   ա. չեն ներգրավվում ցանկացած գործունեության, գործողության կամ հարաբերության մեջ, որը կարող է վտանգել նրանց անկողմնակալ գնահատումները՝ հանգեցնելով բանկի շահերի ոտնահարմանը և (կամ) աուդիտորների մասնագիտական դատողությունների որակի նվազմանը,
   բ. բացահայտում են իրենց հայտնի դարձած բոլոր էական փաստերը, որոնք չբացահայտվելու դեպքում կաղավաղեն աուդիտի ենթակա գործունեությանն առնչվող հաշվետվությունները:
4) Գաղտնիության սկզբունք, որը ենթադրում է, որ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները ապահովում են իրենց կողմից ստացված տեղեկատվության գաղտնիությունը և չեն բացահայտում առանց համապատասխան իրավասության առկայության՝ պայմանավորված բացահայտում կատարելու իրավական կամ մասնագիտական պարտավորությամբ (եթե առկա չէ գաղտնիք համարվող տեղեկատվության տրամադրման օրենսդրական արգելք): Գաղտնիության սկզբունքն ապահովելու համար ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները՝
   ա. զգուշավորություն են ցուցաբերում իրենց պարտականությունների իրականացման ընթացքում ձեռքբերված տեղեկատվության օգտագործման և պահպանման հարցում,
   բ. չեն օգտագործում տեղեկատվությունը անձնական շահի համար կամ ցանկացած այլ կերպ, որը կհակասի օրենքներին կամ բանկի սահմանված նպատակներին և էթիկայի նորմերին (եթե առկա չէ գաղտնիք համարվող տեղեկատվության տրամադրման օրենսդրական պահանջ):
5) Կոմպետենտության սկզբունք, որը ենթադրում է, որ ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները տիրապետում են համապատասխան գիտելիքների, հմտությունների և փորձառության, որոնք անհրաժեշտ են ներքին աուդիտի գործառույթն արդյունավետորեն իրականացնելու համար: Կոմպետենտության սկզբունքն ապահովելու համար ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը և անդամները՝
   ա. ներգրավվում են միայն այնպիսի ոլորտներում, որոնց համար ունեն անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և փորձառություն,
   բ. շարունակաբար կատարելագործում են իրենց ունակությունները և իրենց կատարած աշխատանքի արդյունավետությունն ու որակը:

167. Ներքին աուդիտի աշխատանքների պլանավորումը կատարվում է ռիսկերի գնահատման հիման վրա, որոնց արդյունքները պատշաճ կարգով փաստաթղթավորվում են: Ներքին աուդիտի ստորաբաժանման ղեկավարը պատասխանատու է ռիսկերի վրա հիմնված աուդիտորական աշխատանքների երկարաժամկետ պլանավորման, ինչպես նաև ռիսկերի վրա հիմնված տարեկան աշխատանքային ծրագրի մշակման համար: Ներքին աուդիտի ղեկավարը պարբերաբար գնահատում և անհրաժեշտության դեպքում վերանայում է աշխատանքների երկարաժամկետ պլանավորման արդյունքները, ինչպես նաև տարեկան աշխատանքային ծրագիրը: Յուրաքանչյուր վերանայում (այդ թվում՝ վերանայման հիմնավորումները) պատշաճ կարգով փաստաթղթավորվում են:

168. Ներքին աուդիտի աշխատանքների պլանավորման ժամանակ աշխատանքների առաջնահերթությունները որոշելիս նվազագույնը հաշվի են առնվում.
   1) բանկի ռիսկերի կառավարման համակարգը, այդ թվում՝ ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ախորժակը, ռիսկերի առանձին տեսակների կառավարման քաղաքականությունները,
   2) բանկի գործառնությունների և գործընթացների ռիսկայնության գնահատման արդյունքները,
   3) բանկի գործառնությունների և գործընթացների կարևորությունը բանկի նպատակներին հասնելու տեսանկյունից, բարդությունը, ծավալները, այդ ոլորտի աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության (կոմպետենտության) աստիճանը,
   4) նախկինում իրականացված համանման աուդիտի արդյունքները:

169. Յուրաքանչյուր տարի խորհուրդը հաստատում է ներքին աուդիտի ստորաբաժանման տարեկան աշխատանքային ծրագիրը, որը նվազագույնը ներառում է.
   1) այն ոլորտները, որոնք ենթակա են աուդիտի,
   2) յուրաքանչյուր ոլորտում աուդիտորական աշխատանքների նկարագրությունը,
   3) ծրագրի գործողության շրջանակները (ներառյալ՝ աուդիտի իրականացման ժամանակացույցը):

170. Ներքին աուդիտի աշխատանքները նվազագույնը ներառում են.
   1) բանկի քաղաքականության, գործընթացների, դրանց փաստաթղթավորման և հսկողական մեխանիզմների կիրառման համարժեքության և արդյունավետության դիտարկումը և գնահատումը՝ բանկի, խմբի (եթե բանկը խմբի անդամ է հանդիսանում), բանկի մասնաճյուղերի (առկայության դեպքում), բիզնես միավորի, բիզնես ոլորտի, ինչպես նաև բաժնի կամ այլ կազմակերպական միավորի կտրվածքով,
   2) ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման գործառույթների արդյունավետության պարբերական գնահատումը,
   3) բանկի կառավարման և տարբեր մակարդակներում որոշումների կայացման գործընթացների գնահատումը, որոշումների կայացման գործընթացում օգտագործվող տեղեկատվության արժանահավատության գնահատումը,
   4) ռիսկերի բացահայտման և այդ ռիսկերի կառավարմանն ուղղված արդյունավետ և ժամանակին քայլերի ձեռնարկման գնահատումը,
   5) աշխատանքային փաստաթղթերի և գրանցումների ամբողջականության և համարժեքության, ինչպես նաև գործարքների համապատասխան և պատշաճ հաշվառման գնահատումը,
   6) բանկի ֆինանսական հաշվետվություններում ակտիվների պատշաճ ներկայացման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ակտիվների ֆիզիկապես առկայության և ակտիվների պահպանման եղանակների գնահատումը (օրինակ՝ կանխիկ դրամ) և պարտավորությունների լիովին բացահայտված և պատճառաբանված լինելու գնահատումը,
   7) գրավի և այլ հետհաշվեկշռային միջոցների պատշաճ գնահատման, հաշվառման և պաշտպանվածության գնահատումը, այդ թվում՝ տեղերում ուսումնասիրությունների միջոցով,
   8) բանկի և բանկի ղեկավարների կողմից իրականացվող գործունեության համապատասխանության գնահատումը գործող օրենքների, նորմատիվ և այլ իրավական ակտերի պահանջներին, այդ թվում՝ բանկի կարգերին (կանոնակարգերին, ընթացակարգերին, հրահանգներին, ուղեցույցներին և այլն),
   9) բանկի աշխատակիցների և կազմակերպական միավորների կողմից բանկի ներքին քաղաքականություններին և կարգերին (կանոնակարգերին, ընթացակարգերին, հրահանգներին, ուղեցույցներին) համապատասխան գործելու գնահատումը,
   10) եկամուտների հաշվառման և իրականացված ծախսերի հիմնավորվածության գնահատումը՝ օրենսդրության և բանկի ներքին կանոնակարգերի համապատասխանության տեսանկյունից (օրինակ՝ վարկերի զեղչերի, ավանդների տոկոսների, մարումների ուշացումների համար տույժերի, ծառայությունների դիմաց վճարումների և ժամկետանց վարկերի ընտրանքային ստուգումները՝ դրանց ճշտությունը գնահատելու համար),

11) բանկի ներքին հսկողության համակարգի արդյունավետության և բանկի ռիսկերին համարժեք լինելու գնահատումը,
12) յուրաքանչյուր աշխատակցի կողմից իր իրավասությունների շրջանակներում ներքին հսկողության համակարգում իր գործառույթների իրականացման գնահատումը,
13) ներքին տեղեկատվական և հաշվետվողական համակարգի գնահատումը,
14) բանկի կապիտալի համարժեքության գնահատման ներքին գործընթացի իրականացման ուսումնասիրումը և արդյունավետության գնահատումը,
15) բանկի աշխատակիցներին տրված լիազորությունների (օրինակ՝ վարկերի տրամադրում, լիազորագրերի, պայմանագրերի, փոխանցումների և այլ տիպի իրավական կամ հաշվապահական փաստաթղթերի ստորագրում) գնահատումը՝ հնարավոր չարաշահումները բացառելու նպատակով,
16) վարկավորման գործընթացի, վարկերի դասակարգման, վարկերից կորուստների, վարկերի դուրսգրումների և հետվերադարձի գործընթացի ուսումնասիրությունը,
17) բանկում ներդրված ԳԳԱԿ համակարգի արդյունավետության և համարժեքության գնահատումը, գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի համապատասխանության գնահատումը բանկի գործարար գործընթացների անընդհատության կառավարման քաղաքականությանը, գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի թեստավորման և վերանայման արդյունավետության գնահատումը,
18) բանկի կողմից պատվիրակված գործառույթների արդյունավետության գնահատումը:

171. Ներքին աուդիտի գործառույթն ապահովում է, որ բանկի բոլոր էական ռիսկային ոլորտները և պարտավորությունները ողջամիտ ժամանակահատվածում և պարբերականությամբ ենթարկվեն աուդիտի:
172. Յուրաքանչյուր աուդիտի համար ներքին աուդիտորները մշակում են ծրագիր, որով սահմանվում են տվյալ աուդիտի նպատակը, շրջանակը, տևողությունը, ռեսուրսների բաշխումը, ինչպես նաև անհրաժեշտ այլ մանրամասներ:
173. Աուդիտի պլանավորման ժամանակ ներքին աուդիտորները հաշվի են առնում.
1) աուդիտի ենթակա գործառույթների նպատակները, այդ գործառույթների իրականացման հսկողական մեխանիզմները,
2) աուդիտի ենթակա գործառույթների, նպատակների, ռեսուրսների, գործառնությունների հետ կապված էական ռիսկերը և այն միջոցները, որոնք օգտագործվում են ռիսկերի հնարավոր ազդեցությունը թույլատրելի մակարդակի վրա պահելու համար,
3) աուդիտի ենթակա գործառույթների կառավարման, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համարժեքությունն ու արդյունավետությունը,
4) աուդիտի ենթակա գործառույթների կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողության համակարգերի էական բարելավման հնարավորությունները:
174. Աուդիտի պլանավորման ժամանակ ներքին աուդիտորներն իրականացնում են աուդիտի ենթակա գործառույթին բնորոշ ռիսկերի նախնական գնահատում, ինչպես նաև տվյալ գործառույթի գծով էական սխալների, խարդախությունների, անհամապատասխանությունների և այլ ռիսկային գործոնների ի հայտ գալու հավանականությունների գնահատում: Աուդիտի նպատակները պետք է համահունչ լինեն այդ գնահատման արդյունքներին:
175. Աուդիտի շրջանակները պետք է լինեն բավարար՝ աուդիտի նպատակներին հասնելու համար:
176. Ներքին աուդիտորները պետք է իրականացնեն ռեսուրսների արդյունավետ բաշխում՝ աուդիտի սահմանված նպատակներին հասնելու համար՝ հաշվի առնելով աուդիտի ենթակա գործառույթների բնույթը, բարդությունը, ժամանակային սահմանափակումները, առկա ռեսուրսները:
177. Ներքին աուդիտը մերժում է բանկի գործադիր մարմնի կողմից աուդիտի կամ այլ գործողությունների իրականացման պահանջը, եթե այն չի համապատասխանում բանկի խորհրդի կողմից հաստատված ներքին աուդիտի գործառույթի նպատակներին կամ կարող է խոչընդոտել աուդիտի տարեկան ծրագրի արդյունավետ իրականացմանը:
178. Աուդիտի պլանավորման ժամանակ ներքին աուդիտորները մշակում են նաև աշխատանքների իրականացման ծրագիր՝ սահմանելով տեղեկատվության բացահայտման, վերլուծության, գնահատման և փաստաթղթավորման ընթացակարգերը: Աշխատանքային ծրագիրը հաստատվում է նախքան աուդիտի սկիզբը, իսկ դրանում կատարվող ցանկացած փոփոխություն հաստատվում է ողջամիտ ժամկետում:
179. Ներքին աուդիտորները բացահայտում, վերլուծում, գնահատում և փաստաթղթավորում են բավարար տեղեկատվություն աուդիտի նպատակներին հասնելու համար:

180. Ներքին աուդիտի աշխատակիցներին տրվում են բավարար լիազորություններ իրենց պարտականությունները կատարելու համար: Նրանք պետք է իրավասու լինեն ստանալու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկությունները) և մուտք գործելու ստուգվող ստորաբաժանում ու այլ տարածքներ, որտեղ պահվում են փաստաթղթեր (արխիվներ), կանխիկ դրամ, այլ արժեքներ (դրամապահոցներ), տվյալների համակարգչային մշակումներ՝ ստուգվող ստորաբաժանման ղեկավարի կամ նրա կողմից լիազորված աշխատակցի պարտադիր ներգրավմամբ:
181. Ներքին աուդիտորները բանկում իրականացված յուրաքանչյուր աուդիտի արդյունքներն ամփոփում են հաշվետվությամբ, որն առնվազն պետք է ներառի.
    1) կատարված աուդիտորական աշխատանքների նկարագրությունը,
    2) աուդիտի արդյունքում բացահայտված խախտումներն ու թերությունները և դրանց վերացման վերաբերյալ առաջարկված միջոցառումները,
    3) հայտնաբերված խախտումների և թերությունների վերացման մասին ներքին աուդիտի եզրակացությունը:
182. Սույն կանոնակարգի 181-րդ կետում նշված հաշվետվությունը տրամադրվում է աուդիտի ենթարկված միավորի ղեկավարին: Վերջինս հաշվետվության վերաբերյալ տալիս է գրավոր կարծիք՝ արտահայտելով իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը համապատասխան հիմնավորումներով, որը ստորագրվում է աուդիտի ենթարկված միավորի ղեկավարի կողմից ու կազմում է հաշվետվության անբաժան մասը:
183. Ներքին աուդիտը նվազագույնը կատարում է հետստուգումային հսկողություն բանկի ստորաբաժանումների կողմից այն միջոցառումների իրականացման նկատմամբ, որոնք առաջարկվել են ներքին և արտաքին աուդիտի արդյունքում և հաստատվել են խորհրդի կողմից կամ առաջարկվել են Կենտրոնական բանկի կողմից իրականացվող ստուգումների արդյունքում:
184. Հետստուգումային հսկողության արդյունքների հիման վրա, սահմանված ժամկետում, իսկ այդպիսին սահմանված չլինելու դեպքում՝ առնվազն եռամսյակը մեկ, համապատասխան պատասխանատու անձանց կողմից կազմվում և բանկի խորհրդին են ներկայացվում հաշվետվություններ՝ ներքին և արտաքին աուդիտի, ինչպես նաև Կենտրոնական բանկի ստուգումների արդյունքներով կատարված առաջարկությունների և/կամ հանձնարարականների իրականացման վերաբերյալ: Խորհրդին ներկայացվող հաշվետվությունները նկարագրում են բանկում առկա նշանակալից ռիսկերը, հսկողության միջոցառումները, կորպորատիվ կառավարման խնդիրները (եթե այդպիսիք կան):
185. Ներքին աուդիտը պատշաճ կարգով փաստաթղթավորում և պահպանում է իր կողմից իրականացված աուդիտի հետ կապված բոլոր հիմնական փաստաթղթերը, այդ թվում՝ ներքին աուդիտի եզրահանգումները հիմնավորող դիտարկումների, վերլուծությունների արդյունքները, աուդիտի ընտրանքի մեթոդաբանությունը, տվյալ մեթոդաբանության ընտրության հիմնավորումը: Ներքին աուդիտի աշխատանքային փաստաթղթերը պարունակում են տեղեկատվություն ներքին աուդիտի բոլոր փուլերի և գործընթացների վերաբերյալ՝ ներառյալ աուդիտի աշխատանքների պլանավորում, իրականացում, արդյունքների ամփոփում, հետագա հսկողության իրականացում:

ԲԱԺԻՆ 7. ԳՈՐԾԱՐԱՐ ՎԱՐՎԵԼԱԿԵՐՊ, ՍՊԱՌՈՂՆԵՐԻ ՇԱՀԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

Գլուխ 17. Գործարար վարվելակերպ, սպառողների շահերի պաշտպանություն

186. Գործարար վարվելակերպի գծով բանկում պատշաճ գործընթացներ ապահովելը նպատակ ունի ապահովելու բանկի հաճախորդների (սպառողների) շահերի պաշտպանության բավարար մակարդակ:
187. Գործարար վարվելակերպի և սպառողների շահերի պաշտպանության առումով բանկի ներքին հսկողության համակարգը նվազագույնը ներառում է.
    1) բանկի կողմից մատուցվող ծառայությունների, դրանց մատուցման քաղաքականությունը նկարագրող ներքին իրավական ակտերի առումով՝
        ա. մատուցվող յուրաքանչյուր ծառայության մանրամասն նկարագրությունը, այդ թվում՝
            1. ծառայությունների մատուցման պայմանները (կանոնները), ծառայությունների պայմանագրերի օրինակելի ձևերը,
            2. մատուցվող ծառայությունների սակագները (այդ թվում՝ միջնորդավճարներն ու այլ վճարները, դրանց ցանկը), դրանք փոփոխելու պայմաններն ու կարգը,
            3. ծառայություններ մատուցելու համար սպառողներից պահանջվող փաստաթղթերի ցանկը (տեղեկությունները),

բ. մատուցվող ծառայությունների սակագների (այդ թվում՝ միջնորդավճարների ու այլ վճարների) սահմանման գործընթացը նկարագրող ընթացակարգերը,
գ. հիմնական ծառայությունների հետ լրացուցիչ ծառայություններ մատուցելու քաղաքականությունը,
դ. հաճախորդի համար բանկի կողմից մատուցվող ծառայության հասանելիությունը սահմանափակող բոլոր պայմանները,
ե. բանկի կողմից գործարքները մերժելու (ծառայությունը մատուցելուց հրաժարվելու) չափանիշները և ընթացակարգերը,
զ. ծառայություն մատուցելու ընթացքում թույլ տրված սխալները շտկելու ընթացակարգերը,
է. բանկի նախաձեռնությամբ ինչպես կոնկրետ հաճախորդին, այնպես էլ ընդհանրապես բանկի կողմից ծառայությունների մատուցումն ընդհատելու ընթացակարգերը,
ը. հաճախորդի կողմից պայմանագրով ունեցած պարտավորությունները ժամկետից շուտ կատարելու դեպքում բանկի կողմից իրականացվող գործընթացները (այդ թվում նաև՝ տուժանքների կամ հաճախորդի վիճակը վատթարացնող ցանկացած այլ միջոցների նկարագրությունը),
թ. սահմանված ընդհանուր պայմաններից տարբերվող պայմաններով ծառայություններ մատուցելու (առավել/նվազ բարենպաստ պայմաններով պայմանագրեր կնքելու) ընթացակարգերը, այդ թվում այն չափանիշները, որոնց հիման վրա բանկի իրավասու մարմնի կողմից կընդունվեն նմանատիպ որոշումներ:

2) շահերի բախումների կանխարգելումն ու կարգավորումը նկարագրող ներքին իրավական ակտերի առումով՝
ա. բանկի, բանկի ղեկավարների և աշխատակիցների մոտ շահերի բախումների կանխարգելման միջոցները և կարգավորման ընթացակարգերը,
բ. հաճախորդների սպասարկման ընթացքում շահերի հնարավոր բախման դեպքերի բացահայտմանն ու բացառմանն ուղղված ընթացակարգերը,

3) բողոքների քննման գործընթացները նկարագրող ներքին իրավական ակտերի առումով՝
ա. հաճախորդների բողոքների ընդունման, քննարկման, դրանց արդյունքում որոշումների ընդունման, պատասխանելու, այդ գործընթացի նկատմամբ մոնիթորինգի իրականացման ընթացակարգերը,
բ. հաճախորդների բանավոր բողոքների քննության գործընթացը, այդ գործընթացի նկատմամբ մոնիթորինգի իրականացման ընթացակարգերը (ընդ որում, հաճախորդների գրավոր կամ բանավոր բողոքների ընդունման և քննման գործառույթը չի կարող իրականացվել այն աշխատակցի կողմից, ով անմիջականորեն ներգրավված է եղել հաճախորդներին ծառայությունների մատուցման գործում),

4) Բանկի կողմից տեղեկությունների հրապարակման քաղաքականությունը սահմանող ներքին իրավական ակտերի առումով՝
ա. բանկի կողմից իր և իր կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը,
բ. բանկի կողմից իր վերաբերյալ տեղեկությունների հրապարակման ձևերի, միջոցների, ընթացակարգերի (մամուլ, ինտերնետ, ցուցատախտակ, տեղեկատվական ամփոփագիր և այլն) նկարագրությունը,
գ. բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տեղեկությունները հաճախորդների համար հասանելի դարձնելու ձևերի, միջոցների, ընթացակարգերի (մամուլ, ինտերնետ, ցուցատախտակ, տեղեկատվական ամփոփագիր և այլն) նկարագրությունը,
դ. բանկի կողմից գովազդի իրականացման գործընթացը նկարագրող ընթացակարգերը, գովազդային և այլ հրապարակվող նյութերը սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից գնահատելու կարգը,
ե. բանկի և բանկի կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ տարբեր ձևերով, միջոցներով (մամուլ, ինտերնետ, տեղեկատվական ամփոփաթերթեր. թերթոններ, բրոշյուրներ, գրքույկներ և այլն) հրապարակվող տեղեկատվության ժամանակին թարմացումը, արժանահավատությունը և համահունչությունը ապահովող ներքին ընթացակարգերը,

5) Բանկի կողմից հաճախորդների սպասարկման քաղաքականությունը սահմանող ներքին իրավական ակտերի առումով՝
ա. բանկի և հաճախորդի միջև հաղորդակցման սկզբունքները, կարգը, ձևերը,
բ. պայմանագիրը կնքելուց առաջ, պայմանագրի կնքման ընթացքում և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության ցանկը (այդ թվում՝ բանա-

վոր տեղեկատվության մասով նվազագույն տեղեկատվության ցանկը), այդ տեղեկատվության տրամադրման ձևերն ու կարգը,

գ. բանկի՝ հաճախորդներին սպասարկող անձնակազմի, հաճախորդներին անմիջական խորհրդատվություն տվող աշխատակիցների համապատասխան հմտությունները, որակների չափանիշներն ու վարվելակերպի նորմերը սահմանող քաղաքականությունը:

188. Սույն կանոնակարգի 187-րդ կետի 1-ին ենթակետով նախատեսված ընթացակարգերը նկարագրող իրավական ակտերի ընդունումը պարտադիր չէ, եթե տվյալ ընթացակարգն իր էությամբ կիրառելի չի լինի մատուցվող ծառայության նկատմամբ:

189. Գործարար վարվելակերպի և սպառողների շահերի պաշտպանության առումով բանկի կողմից մշակված գործընթացներն ու ընթացակարգերը ապահովում են հաճախորդների նկատմամբ արդարացի վերաբերմունքը, որն առնվազն ենթադրում է.

1) բանկային ծառայությունների մշակման և մատուցման ընթացքում հաճախորդների կարիքների և շահերի դիտարկում,
2) հաճախորդի հետ պայմանագիրը կնքելուց առաջ և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդին պարզ, արժանահավատ, ժամանակին և հաճախորդի կարիքներին համարժեք տեղեկատվության տրամադրում,
3) հաճախորդի կարիքներին անհամապատասխան ծառայությունների մատուցումից խուսափում,
4) հաճախորդին տրված խորհրդատվության բարձր որակի ապահովում,
5) հաճախորդների դիմում-բողոքների և/կամ պահանջների արդարացի և ժամանակին քննում,
6) հաճախորդների վերաբերյալ բանկային գաղտնիք կազմող տեղեկատվության պահպանում,
7) հաճախորդների խելամիտ սպասումների արդարացում,
8) սահմանված ընդհանուր պայմաններից տարբերվող պայմաններով ծառայությունների մատուցում (առավել/նվազ բարենպաստ պայմաններով պայմանագրերի կնքում) բացառապես համապատասխան չափանիշների առկայության դեպքում:

190. Բանկի գործարար ծրագրով հաճախորդների նկատմամբ արդարացի վերաբերմունքի ցուցաբերումը պետք է սահմանվի որպես նպատակ, և այն պետք է հաշվի առնվի որոշումների կայացման գործընթացներում:

191. Բանկը պետք է ապահովի գործարար վարվելակերպի և սպառողների շահերի պաշտպանության առումով մշակված գործընթացների ու ընթացակարգերի, ինչպես նաև բարձր պրոֆեսիոնալիզմի և վարքագծի կանոնների պահպանումը բանկի աշխատակիցների կողմից:

192. Բանկն ապահովում է իր կողմից ծառայությունների մշակման և դրանց մատուցման գործընթացը սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից գնահատելու համապատասխան մեխանիզմների և այդ մեխանիզմների կիրառման արդյունքում ստացված գնահատականների վերաբերյալ գործադիր մարմնին և խորհրդին տեղեկացնելու ընթացակարգերի առկայություն:

*«Ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի թիվ 163-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին**

Նպատակ ունենալով ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող պահանջները համապատասխանեցնել Ապահովագրական վերահսկողների միջազգային ասոցիացիայի (IAIS) կողմից սահմանված սկզբունքներին,

հիմք ընդունելով «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» ՀՀ օրենքի 76-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը, 2-րդ մասի 5-րդ կետը, 3-րդ մասը և 153-րդ հոդվածը, ինչպես նաև ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» ՀՀ օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով, «Իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածով և 72-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հաստատել «Ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ը՝ համաձայն Հավելվածի (կցվում է):
2. Սույն որոշումն ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի հունիսի 2-ի «Ապահովագրական ընկերությունների ներքին աուդիտի գործունեության, ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները» կանոնակարգ 3/10-ը հաստատելու մասին» թիվ 163-Ն որոշումը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում 2014 թվականի հուլիսի 1-ին:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 ապրիլի 2013 թ., N 103-Ն

Հավելված
Հաստատված է
Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի խորհրդի
2013 թվականի ապրիլի 16-ի թիվ 103-Ն որոշմամբ

ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՆՎԱԶԱԳՈՒՅՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ 3/10

ԲԱԺԻՆ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգը սահմանում է ապահովագրական ընկերության ներքին հսկողության համակարգին ներկայացվող նվազագույն պահանջները:
2. Սույն կանոնակարգը տարածվում է Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների, ինչպես նաև օտարերկրյա ապահովագրական և վերաապահովագրական ընկերությունների՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղերի վրա այնքանով, որքանով կիրառելի է:

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. ապրիլի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.05.2013 թ. (ՀՀԳՏ N18 (462), 17.06.2013):

3. Սույն կանոնակարգի իմաստով հետևյալ հասկացություններն օգտագործվում են հետևյալ իմաստով.
   1) ***Կենտրոնական բանկ***՝Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկ,
   2) ***Ընկերություն***՝Հայաստանի Հանրապետության տարածքում գործող ապահովագրական և վերաապահովագրական ընկերություն, օտարերկրյա ապահովագրական և վերաապահովագրական ընկերության՝ Հայաստանի Հանրապետության տարածքում գործող մասնաճյուղ,
   3) ***Հաճախորդ***՝ապահովադիր, ապահովագրված անձ, շահառու՝ ներառյալ պոտենցիալ ապահովադիր, ապահովագրված անձ, շահառու,
   4) ***Օրենք***՝«Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենք,
   5) ***Ապահովագրական խարդախություն***՝ապահովագրության բնագավառում խաբեության կամ վստահությունը չարաշահելու եղանակով Ընկերությունից կամ իր հաճախորդից որոշակի օգուտներ ստանալու նպատակով անձի կողմից դիտավորյալ կատարված գործողություն կամ անգործություն,
   6) ***Անդերռայթինգի ռիսկ (underwriting risk)***՝հավանականություն, երբ հաշվարկված ապահովագրավճարները և տեխնիկական պահուստները բավարար չեն լինի ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունները կատարելու համար,
   7) ***Վարկային ռիսկ***՝ հավանականություն, որ գործարքի մյուս կողմը կխախտի Ընկերության հետ կնքած պայմանագրի պայմանները, ինչը բացասաբար կազդի Ընկերության շահույթի և/կամ կապիտալի վրա անկախ այն հանգամանքից՝ գործարքներն արտացոլվում են Ընկերության հաշվեկշռում, թե հանդես են գալիս որպես արտահաշվեկշռային հոդված,
   8) ***Շուկայական ռիսկ***՝հավանականություն, որ շուկայական գների (տոկոսադրույքներ, արտարժույթի փոխարժեքներ, բաժնային գործիքների գներ և այլն) տատանումը Ընկերության կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական ազդեցություն կունենա,
   9) ***Արտարժութային ռիսկ***՝հավանականություն, որ արժույթի փոխարժեքի տատանումը Ընկերության կապիտալի և/կամ շահույթի վրա բացասական ազդեցություն կունենա: Արտարժութային ռիսկը հանդիսանում է շուկայական ռիսկի տարատեսակ,
   10) ***Իրացվելիության ռիսկ***՝հավանականություն, որ Ընկերությունը բավարար իրացվելի միջոցներ չի ունենա պարտավորությունները ժամանակին մարելու համար,
   11) ***Գործառնական ռիսկ***՝հավանականություն, որ անբավարար կամ ձախողված ներքին գործընթացների, համակարգերի, մարդկային գործոնի կամ արտաքին գործոնների արդյունքում Ընկերությունը կարող է կորուստներ կրել, ինչը բացասական ազդեցություն կունենա Ընկերության կապիտալի և/կամ շահույթի վրա: Գործառնական ռիսկը ներառում է նաև իրավական ռիսկը (պայմանագրերի դրույթների, դատական գործերի, դատարանի որոշումների, վճիռների կամ այլ իրավական գործընթացների արդյունքում Ընկերության գործառնությունների ընդհատման կամ Ընկերության գործառնությունների վրա բացասական ազդեցություն ունենալու հավանականություն),
   12) ***Ռիսկի ախորժակ***՝ռիսկերի այն մասը, որը Ընկերությունը կարող է և ցանկանում է ստանձնել՝ չխաթարելով իր ֆինանսական կայունությունը և բնականոն գործունեությունը,
   13) ***Սեփական մասնակցության առավելագույն չափ***՝Ընկերության առանձին դասի (և/կամ ենթադասի) գծով կնքվող ապահովագրության պայմանագրերի (այդ թվում՝ համապապահովագրության պայմանագրերի և վերաապահովագրության ընդունած պայմանագրերի) գծով ռիսկի այն մասը (տոկոսային արտահայտությամբ կամ բացարձակ մեծությամբ), որը Ընկերությունը կարող է ստանձնել ինքնուրույն՝ չխաթարելով իր ֆինանսական կայունությունը և բնականոն գործունեությունը:

ԲԱԺԻՆ 2. ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ

Գլուխ 2. Ներքին հսկողության համակարգ

4. Ներքին հսկողության համակարգը Ընկերության ներքին կազմակերպական կառուցվածքի, գործարար գործընթացների, ռիսկերի կառավարման համակարգի, հաշվետվողականության, ինչպես նաև դրանց նկատմամբ հսկողության իրականացման միջոցառումների համալիր է: Ներքին հսկողության համակարգն ուղղված է Ընկերության ակտիվների պահպանմանը, Ընկերության գործունեության անընդհատության ապահովմանը, Ընկերության գործունեությանը ներհատուկ ռիսկերի ժամանակին բացահայտմանը, գնահատմանն ու շարունակական կառավարմանը, հաշվապահական հաշվառման և ֆինանսական հաշվետվությունների՝ գործող ստանդարտներին համապատասխանության ապահովմանը,

իրականացվող գործառնությունների արդյունավետության բարձրացմանը, Ընկերության գործունեության համապատասխանության ապահովմանը գործող օրենսդրությանը և Ընկերության ներքին իրավական ակտերին:

5. Ներքին հսկողության հիմնական նպատակներն են՝
   1) ապահովագրական գործունեությանը բնորոշ ռիսկերի բացահայտումը և կառավարումը, Ընկերության աշխատանքների արդյունավետ կազմակերպումը և անձնակազմի արդյունավետ կառավարումը (գործառնական նպատակ),
   2) Ընկերությունում որոշում կայացնելու համար անհրաժեշտ հաշվապահական, ֆինանսական և այլ հաշվետվությունների հուսալիության, ամբողջականության և ժամանակին ներկայացման, Ընկերության ներսում տեղեկատվության անհրաժեշտ հոսքերի ապահովումը (տեղեկատվական նպատակ),
   3) Ընկերության գործունեության համապատասխանության ապահովումը Հայաստանի Հանրապետության օրենքների, այլ նորմատիվ իրավական ակտերի, Ընկերության կառավարման իրավասու մարմինների կողմից հաստատված ներքին իրավական ակտերի (կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի, հրահանգների, ուղեցույցների և այլն) պահանջներին (իրավական համապատասխանության նպատակ):
6. Ներքին հսկողության համակարգը ներառում է Ընկերության գլխամասի և մասնաճյուղերի ներքին հսկողության համակարգերը, որոնք կազմում են տրամաբանական ամբողջություն և հիմնվում են միևնույն չափանիշների և սկզբունքների վրա:
7. Ընկերությունն ապահովում է, որպեսզի իր ներքին հսկողության համակարգը բավարարի առնվազն սույն կանոնակարգով սահմանված պահանջները: Եթե Ընկերության կողմից իրականացվող առանձին գործառնությունների բնույթը, ծավալը կամ այդ գործառնություններից ստացվող Ընկերության ֆինանսական արդյունքները էական չեն Ընկերության համար կամ Ընկերության համար չեն առաջացնում էական ռիսկեր, ապա Ընկերությունը կարող է չպահպանել այդ գործառնությունների գծով սույն կարգով սահմանված ներքին հսկողության պահանջները՝ Ընկերության խորհրդի որոշմամբ հաստատված հիմնավորմամբ:
8. Ընկերությունում պատշաճ ներքին հսկողության համակարգի ձևավորման, կենսագործունեության և արդյունավետության շարունակական մոնիթորինգի իրականացման համար պատասխանատու են Ընկերության խորհուրդը, գործադիր մարմինը, ներքին հսկողական գործառույթ իրականացնող անձինք, Ընկերության բոլոր աշխատակիցները՝ օրենքով և/կամ այլ իրավական ակտերով սահմանված իրենց պարտականությունների շրջանակներում: Սույն կանոնակարգի համաձայն՝ Ընկերության խորհրդի իրավասությանը վերապահվելիք պարտականությունները վերջինիս կողմից իրականացվում են Ընկերությունում ներքին հսկողության ստանդարտների սահմանման ներքո:
9. Ներքին հսկողության համակարգը նկարագրվում է Ընկերության ներքին իրավական ակտերում՝ կարգերի, կանոնակարգերի, ընթացակարգերի, հրահանգների, ուղեցույցների և այլ ակտերի տեսքով:
10. Ներքին հսկողության համակարգը, դրա առանձին տարրերը Ընկերության խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ, սակայն ոչ պակաս, քան տարին մեկ անգամ, իսկ միջավայրի փոփոխությունների, ինչպես նաև նոր կամ նախկինում հսկողությունից դուրս մնացած էական ռիսկերի, առկա համակարգի էական թերությունների ու բացթողումների հայտնաբերման դեպքում՝ ողջամիտ ժամկետում գնահատվում և անհրաժեշտության դեպքում վերանայվում են: Կատարված էական փոփոխությունները և փոփոխման հիմնավորումները, ինչպես նաև փոփոխության անհրաժեշտության բացակայության հիմնավորումները պատշաճ կարգով փաստաթղթավորվում են:
11. Միջավայրի փոփոխություններ են.
   1) Ընկերության բիզնես ռազմավարության փոփոխությունը,
   2) գործառնական միջավայրի էական նշանակություն ունեցող փոփոխությունները (ապահովագրական և վերաապահովագրական շուկաներում տեղի ունեցած էական նշանակություն ունեցող փոփոխությունները, ապահովագրական ընկերության գործընկեր վերաապահովագրական ընկերությունների, ապահովագրական միջնորդների էական նշանակություն ունեցող փոփոխությունը և այլն),
   3) անձնակազմի էական նշանակություն ունեցող փոփոխությունը,
   4) նոր կամ վերափոխված տեղեկատվական համակարգերի կիրառումը,
   5) նոր կամ վերափոխված տեխնոլոգիաների կիրառումը,
   6) նոր ծառայությունների մատուցումը, գործունեության նոր տեսակների իրականացումը,
   7) կազմակերպական կառուցվածքի փոփոխությունը,
   8) Ընկերության վերակազմակերպումը,

9) Ընկերության կողմից դուստր և (կամ) կախյալ և (կամ) հսկվող ընկերությունների ստեղծումը, դուստր կամ կախյալ ընկերություններին մասնակցությունը,
10) միջազգային գործառնությունների ընդլայնումը,
11) էական նշանակություն ունեցող փոփոխությունները տնտեսական, ֆինանսական և (կամ) ապահովագրական գործունեության կարգավորման բնագավառում,
12) Ընկերության գործունեության, ռիսկայնության մակարդակի վրա էական ազդեցություն ունեցող ներքին և արտաքին այլ հանգամանքների ի հայտ գալը և այլն:

12. Ներքին հսկողության համակարգն ապահովում է հուսալի և բնականոն ապահովագրական գործունեության իրականացումը՝ հաշվի առնելով տվյալ Ընկերության գործունեության բնույթը, ծավալը, առկա ու հնարավոր ռիսկերը, օրենքների և այլ իրավական ակտերի պահանջները, գործարար շրջանառության սովորույթները ու Ընկերության գործունեության միջավայրը:
13. Ընկերության գործադիր մարմնի, ներքին հսկողական գործառույթներ իրականացնող անձանց, Ընկերության աշխատակիցների կողմից հայտնաբերված ներքին հսկողության համակարգի թերությունները և բացթողումները Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանված կարգով և ժամկետներում ներկայացվում են Ընկերության խորհրդին:
14. Ընկերությունն ապահովում է ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերի հասանելիությունը Ընկերության անձնակազմին: Ընկերության գործադիր մարմինն ապահովում է Ընկերության անձնակազմի տեղեկացվածությունը ներքին հսկողության համակարգը նկարագրող ներքին իրավական ակտերի դրույթներին իրենց կողմից իրականացվող գործառույթների մասով:
15. Ընկերության յուրաքանչյուր էական գործարար գործընթացի համար Ընկերությունում պետք է ներդրվեն համապատասխան հսկողական մեխանիզմներ: Հսկողական մեխանիզմները կարող են լինել կանխարգելող (ուղղված անցանկալի արդյունքների կանխարգելմանը), բացահայտող (ուղղված անցանկալի գործառնությունների բացահայտմանը), ինչպես նաև անցանկալի հետևանքները վերացնող (ուղղված անցանկալի հետևանքների վերացմանը): Անցանկալի արդյունքների/գործառնությունների բացահայտման, կանխարգելման և վերացման հսկողական մեխանիզմներն են.
    1) Ընկերության գործունեության պարբերական ուսումնասիրությունը և գնահատումը Ընկերության կառավարման մարմինների կողմից (աշխատակիցներից կատարողականի վերաբերյալ հաշվետվությունների պահանջի, իրենց կատարած աշխատանքի վերաբերյալ աշխատակիցներին հարցերի տրման և նրանցից պատասխանների, պարզաբանումների և բացատրությունների ստացման և այլ միջոցներով),
    2) Ընկերությանը պատկանող գույքի և առավել կարևոր փաստաթղթերի (այդ թվում՝ ապահովագրության պայմանագրերի) ֆիզիկական պաշտպանվածության ապահովումը, ինչը ենթադրում է, որ Ընկերությանը պատկանող գույքը և առավել կարևոր փաստաթղթերը պաշտպանված են կորստից, չթույլատրված դուրսհանումից կամ օգտագործումից,
    3) ներքին սահմանաչափերի, դրանցից թույլատրելի շեղումների սահմանումը և պահպանումը (օրինակ՝ առանձին գործարքների, գործունեության ցուցանիշների նկատմամբ և այլն),
    4) որոշակի սահմանաչափերը գերազանցելու դեպքում որոշումների կայացումը, գործարքների հաստատումը և (կամ) թույլատրումը վերադաս իրավասու անձանց կողմից,
    5) աշխատանքային պարտականությունների պատշաճ տարանջատումը և աշխատակիցներին շահերի բախում չպարունակող պարտականությունների հանձնարարումը,
    6) գույքի և գրառումների համատեղ պահպանումը, երբ որոշակի գործընթացների համար հավասարապես հաշվետու են երկու կամ ավելի անձինք (օրինակ, երբ երկու կամ ավելի բանալիներից կամ գաղտնաբառերից յուրաքանչյուրը, որոնք պետք է օգտագործվեն դրամապահոց, արխիվ կամ այլ պահուստարան մուտքի իրավունք ստանալու համար, վստահվում են առանձին անհատների),
    7) կրկնակի ստուգումը,
    8) տվյալների և գրառումների համադրումը,
    9) պարբերական գույքագրումը,
    10) կրկնակի կամ բազմակի ստորագրությունների պահանջը,
    11) հայտնաբերված խախտումների, թերությունների, ինչպես նաև դրանց հետևանքով առաջացած անցանկալի երևույթների վերացման կապակցությամբ հանձնարարականներ տալը և դրանց պատշաճ ու ժամանակին կատարման նկատմամբ հսկողության իրականացումը, անհրաժեշտության դեպքում համապատասխան պատասխանատվության միջոցների կիրառումը,
    12) Ընկերության հայեցողությամբ՝ հսկողության այլ մեխանիզմներ:

ԲԱԺԻՆ 3. ԿԱԶՄԱԿԵՐՊԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔ, ԳՈՐԾԱՐԱՐ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐ, ԱՆՁՆԱԿԱԶՄԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գլուխ 3. Կազմակերպական կառուցվածք, գործարար գործընթացներ, անձնակազմի կառավարում

16. Ներքին հսկողության համակարգը Ընկերության **կազմակերպական կառուցվածքի** առումով նվազագույնը նախատեսում է.
    1) Ընկերության կազմակերպական կառուցվածքի մանրամասն նկարագիրը՝ սխեմատիկ և/կամ տեքստային ձևով,
    2) Ընկերության ստորաբաժանումների ու աշխատակիցների պատշաճ տարանջատված պարտականություններն ու լիազորությունները: Պարտականությունների և լիազորությունների տարանջատման ընթացքում նվազագույնը բացահայտվում ու վերահսկվում են շահերի բախման հնարավոր դեպքերն ու ոլորտները:
17. Ներքին հսկողության համակարգը Ընկերության ***գործարար գործընթացների*** առումով նվազագույնը նախատեսում է.
    1) Ընկերության կողմից իրականացվող գործարար գործընթացների նկարագիրը, որը ներառում է Ընկերության կողմից իրականացվող բոլոր առևտրային գործառնությունների և կառավարչական ընթացակարգերի մանրամասն նկարագիր՝ սխեմատիկ և/կամ տեքստային ձևով, այդ թվում՝
       ա. նկարագրվող գործարար գործընթացի իրականացման քայլերի հերթականությունը,
       բ. գործարար գործընթացի վերջնական արդյունքը՝ փաստաթղթի, գործարքի, տեղեկատվության կամ այլ տեսքով,
       գ. գործարար գործընթացի իրականացման ժամկետները՝ ըստ քայլերի,
       դ. կապը Ընկերության առանձին գործարար գործընթացների միջև,
       ե. անհրաժեշտ հղումներ գործընթացը կանոնակարգող օրենքներին, այլ իրավական ակտերին կամ այլ ներքին ակտերին,
    2) գործարար գործընթացի մեջ ներգրավված աշխատակիցների՝ սահմանված և տարանջատված պարտականություններն ու լիազորությունները,
    3) գործարար գործընթացների առանձին քայլերի իրականացմանն առնչվող ռիսկերի կանխարգելմանը կամ նվազեցմանը ուղղված ներքին հսկողության մեխանիզմները,
    4) գործարար գործընթացի անխափան և արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության ապահովման եղանակները և այդ տեղեկատվության հոսքերը Ընկերությունում (ստորաբաժանումների, ղեկավարների, աշխատակիցների միջև):
18. Ընկերության առանձին գործընթացների և գործառնության իրականացումը և հաշվառումը (ներառյալ՝ հետագա հսկողության (post control-ի ձևով) սկզբից մինչև վերջ չի դրվում միայն մեկ կամ փոխկապակցված անձանց վրա:
19. Ներքին հսկողության համակարգը ***անձնակազմի կառավարման քաղաքականության (կադրային քաղաքականության)*** առումով նվազագույնը նախատեսում է.
    1) աշխատակիցներին աշխատանքի ընդունելու և ազատելու կարգը,
    2) աշխատակիցների վերապատրաստման սկզբունքները,
    3) աշխատակիցների վարձատրության, պարգևատրման կամ այլ ձևի նյութական խրախուսման (այսուհետ՝ վարձատրության քաղաքականություն) և կարգապահական պատասխանատվության ենթարկելու քաղաքականությունն ու կարգը,
    4) աշխատակիցների առաջխաղացման, ռոտացիաների իրականացման կարգը,
    5) արձակուրդային քաղաքականության սկզբունքները,
    6) աշխատակիցների կատարած աշխատանքների գնահատման կարգը,
    7) մասնագիտական աշխատանք կատարող աշխատակիցների աշխատատեղերի նկարագրությունը,
    8) աշխատանքային էթիկայի կանոնները:
20. Ընկերության բոլոր աշխատակիցներն առնվազն գրավոր ձևով տեղեկացվում են իրենց աշխատանքային պարտականությունների կատարման հետ առնչվող ռիսկերի, ներքին հսկողության համակարգում իրենց դերի, աշխատանքի վայրում և դրանից դուրս իրենց վարքագծին ներկայացվող պահանջների, իրենց կողմից թույլ տրված չարաշահումների, բացթողումների հետևանքների մասին:
21. Ընկերության խորհրդի կողմից հաստատված վարձատրության քաղաքականությունն առնվազն բավարարում է հետևյալ պահանջները.
    1) չի խթանում Ընկերության աշխատակիցների կողմից չհիմնավորված ռիսկերի ստանձնումը, ինչպես նաև հաճախորդների նկատմամբ ոչ արդարացի վերաբերմունքի ցուցաբերումը,

2) համահունչ է Ընկերության խորհրդի կողմից հաստատված ռիսկի ախորժակին, Ընկերության երկարաժամկետ նպատակներին,
3) առնվազն վերաբերում է Ընկերության ղեկավարներին, ինչպես նաև բոլոր այն աշխատակիցներին, որոնց գործունեությունը կարող է էական ազդեցություն ունենալ Ընկերության ռիսկերի մակարդակի վրա,
4) վարձատրության քաղաքականության մշակման, կիրառման և մոնիթորինգի ժամանակ առնվազն բացահայտվում և վերահսկվում են շահերի բախման հնարավոր դեպքերն ու ոլորտները:

Ընդ որում, հսկողական գործառույթներում ընդգրկված աշխատակիցների արդյունավետ աշխատանքին խոչընդոտող շահերի բախման հնարավոր դեպքերը բացառելու նպատակով հսկողական գործառույթներում ընդգրկված աշխատակիցների վարձատրությունը սահմանելիս կարող են կիրառվել գործունեության արդյունքների վրա հիմնված փոփոխուն վարձատրության մեխանիզմներ: Հսկողական գործառույթներում ընդգրկված աշխատակիցների վարձատրությունը կարող է ածանցվել համապատասխան հսկողական գործառույթի նպատակներին հասնելու արդյունքներից:

5) վարձատրության փոփոխուն բաղադրիչների կիրառման դեպքում ապահովվում է վարձատրության հաստատուն և փոփոխուն բաղադրիչների արդյունավետ համադրությունը:

22. Գործունեության արդյունքների վրա հիմնված վարձատրության փոփոխուն բաղադրիչի սահմանման դեպքում.
1) ապահովվում է, որպեսզի գործունեության արդյունքների գնահատման չափանիշները լինեն հստակ և օբյեկտիվորեն գնահատելի,
2) գործունեության արդյունքների գնահատումը կարող է հիմնվել ինչպես ֆինանսական, այնպես էլ ոչ ֆինանսական չափանիշների վրա,
3) հաշվի են առնվում ոչ միայն անհատի գործունեության արդյունքները, այլ նաև համապատասխան բիզնես միավորի գործունեության արդյունքները, ինչպես նաև Ընկերության գործունեության ընդհանուր արդյունքները (կիրառելիության դեպքում),
4) գործունեության արդյունքների հիման վրա վարձատրության աճ իրականացնելիս հաշվի են առնվում նաև գործունեության հետ կապված ներկա և ապագա ռիսկերը: Հաշվի առնելով ժամանակի ընթացքում գործունեության արդյունքների և դրանց հետ կապված ռիսկերի փոփոխման հավանականությունը՝ գործունեության արդյունքների գնահատումը, կիրառելիության դեպքում, իրականացվում է երկարաժամկետ կտրվածքով:
5) սահմանվում են վարձատրության փոփոխուն բաղադրիչի սահմանաչափեր, որոնք համահունչ են Ընկերության կապիտալի կառավարման ռազմավարությանը և կապիտալի արդյունավետ մակարդակը պահպանելու Ընկերության ունակությանը՝ հաշվի առնելով կապիտալի ներքին թիրախները և օրենսդրական պահանջները:

ԲԱԺԻՆ 4. ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄ

Գլուխ 4. Ռիսկերի կառավարման համակարգ

23. Ռիսկերը, որոնց ենթարկված է կամ կարող է ենթարկվել Ընկերությունը, ներառում են ներքին և արտաքին հանգամանքներ, որոնք կարող են սպառնալ Ընկերության գործունեության անընդհատությանը կամ բացասական ազդեցություն ունենալ Ընկերության կապիտալի և/կամ շահույթի, ինչպես նաև գործարար համբավի վրա:
24. Ընկերությունն ապահովում է խորհրդի կողմից հաստատված ռիսկերի կառավարման արդյունավետ համակարգի առկայություն, որը համահունչ է Ընկերության գործունեությանը բնորոշ ռիսկերի բնույթին, իրականացվող գործարար գործընթացների ծավալին և բարդությանը:
25. Ընկերության ռիսկերի կառավարման համակարգն առնվազն ներառում է.
1) ռիսկերի կառավարման ռազմավարությունը, որով սահմանվում են ռիսկերի կառավարման առումով Ընկերության ընդհանուր մոտեցումները/նպատակները: Ընդ որում, ռիսկերի կառավարման ռազմավարության մշակման ժամանակ առնվազն հաշվի են առնվում Ընկերության խորհրդի կողմից հաստատված գործարար ծրագիրն ու Ընկերության կողմից իրականացվող գործարար գործընթացները՝ ներառյալ Ընկերության կողմից պատվիրակված գործընթացները,
2) Ընկերության ռիսկի ախորժակը՝ հաստատված Ընկերության խորհրդի կողմից,

3) առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները, որոնցով առնվազն սահմանվում են.
   ա. Ընկերության գործունեությանը ներհատուկ խելամտորեն կանխատեսելի և էական ռիսկերն ըստ տեսակների: Ընդ որում, Ընկերության կողմից առնվազն դիտարկվում են անդերռայթինգի, շուկայական, վարկային, իրացվելիության, գործառնական ռիսկերը, ինչպես նաև խմբի անդամ լինելու հետևանքով առաջացող լրացուցիչ ռիսկերը (կիրառելիության դեպքում),
   բ. ռիսկի յուրաքանչյուր տեսակի համար ռիսկի ընդունելի սահմանաչափերը, սահմանված սահմանաչափերից թույլատրելի շեղումների դեպքերն ու չափերը,
   գ. ռիսկերի նվազեցմանն ուղղված մեխանիզմների կիրառումը (օրինակ՝ վերաապահովագրություն, հեջավորում և այլն),
4) առանձին ռիսկերի ճանաչման, գնահատման, զսպման, մոնիթորինգի և հաշվետվողականության գործընթացները և գործիքները (ներառյալ՝ մոդելները (կիրառելիության դեպքում)),
5) ռիսկերի կառավարման գործընթացում Ընկերության առանձին կազմակերպական միավորների, ինչպես նաև աշխատակիցների պարտականություններն ու լիազորությունները,
6) Ընկերության կողմից սեփական ռիսկերի և վճարունակության գնահատման (ՍՌՎԳ) քաղաքականությունը՝ համաձայն սույն կանոնակարգի 65-րդ կետի:

26. Յուրաքանչյուր գործառնություն, որը կարող է հանգեցնել Ընկերության խորհրդի կողմից հաստատված ռիսկերի կառավարման ռազմավարությունից, ռիսկի ախորժակից և (կամ) ռիսկի սահմանաչափերից անթույլատրելի շեղման, հանգամանորեն քննարկվում և ներկայացվում է խորհրդի հաստատմանը:
27. Ընկերության կողմից նոր գործառնությունների կամ գործիքների ներդրման դեպքում Ընկերությունը գնահատում է դրանց հավանական ազդեցությունը Ընկերության գործունեության ռիսկայնության մակարդակի վրա՝ անհրաժեշտության դեպքում փոփոխություններ կատարելով ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգում:
28. Ընկերության խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ դիտարկվում և անհրաժեշտության դեպքում վերանայվում է ռիսկերի կառավարման գործընթացը, որպեսզի ապահովվեն գործընթացի արդիականությունը և հիմնավորվածությունը: Ռիսկերի կառավարման գործընթացի վերանայման անհրաժեշտության բացակայության հիմնավորումները պատշաճ կարգով փաստաթղթավորվում են: Դիտարկման/վերանայման ենթակա հիմնական ոլորտներն առնվազն ընդգրկում են.
   1) Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի համարժեքությունը Ընկերության կողմից իրականացվող գործառնությունների բնույթին, ծավալին և բարդությանը,
   2) խոշոր ռիսկերի և ռիսկերի կենտրոնացումների բացահայտումը,
   3) Ընկերության ռիսկայնության մակարդակի գնահատման ընթացքում օգտագործվող մուտքային տվյալների ճշգրտությունն ու ամբողջականությունը,
   4) Ընկերության ռիսկայնության մակարդակի գնահատման ընթացքում օգտագործվող մեթոդների, սցենարների, ենթադրությունների հիմնավորվածությունն ու արդյունավետությունը:
29. Ընկերության խորհուրդը պատասխանատու է ռիսկերի կառավարման համակարգի ձևավորման, կենսագործունեության և արդյունավետության շարունակական մոնիթորինգի ապահովման համար, իսկ գործադիր մարմինը՝ ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետ կիրառման, ինչպես նաև խորհրդի կողմից հաստատված քաղաքականությունների, ընթացակարգերի և այլ ներքին իրավական ակտերի՝ ամբողջ Ընկերությունում արդյունավետ շրջանառության ապահովման համար:

Գլուխ 5. Սեփական ռիսկերի և վճարունակության գնահատում (ՍՌՎԳ)

30. Որպես Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի բաղկացուցիչ մաս՝ Ընկերությունն առնվազն եռամսյակային պարբերականությամբ իրականացնում է սեփական ռիսկերի և վճարունակության գնահատում (ՍՌՎԳ), որը պետք է համահունչ լինի ընկերության գործունեությանը բնորոշ ռիսկերի բնույթին, ծավալին և բարդությանը:
31. Ընկերության խորհուրդը հաստատում է ՍՌՎԳ քաղաքականությունը, որն առնվազն ներառում է.
   1) ՍՌՎԳ իրականացման համար անհրաժեշտ գործընթացների և ընթացակարգերի նկարագրությունը: Ընդ որում, ՍՌՎԳ իրականացման գործընթացները պետք է համահունչ լինեն Ընկերության կազմակերպական կառուցվածքին և ռիսկերի կառավարման համակարգին,
   2) Ընկերության էական գործառնությունների (գործարար գործընթացների) առանձնացման, ինչպես նաև ռիսկերն էական համարելու չափանիշները, ռիսկերի գնահատման սկզբունքները, մեթոդաբանությունը, ինչպես նաև ռիսկերի կառավարման համակարգի գնահատման մեթոդները,

3) սթրես-թեստերի իրականացման սկզբունքները, մեթոդաբանությունը, սթրես-սցենարների որոշման ընթացակարգը, երևույթների տեղի ունենալու հավանականությունը գնահատելու մեթոդաբանությունը,
4) ՍՌՎԳ-ի ընթացքում իրականացվող հաշվարկների ժամանակ օգտագործվող տեղեկատվության հավաքագրման, պահպանման, արժանահավատության ստուգման ընթացակարգերը, ինչպես նաև կիրառվող տվյալների որակի (այդ թվում՝ տվյալների արժանահավատություն, ամբողջականություն և այլն) նկատմամբ Ընկերության պահանջները,
5) այն հանգամանքները, որոնց առկայության դեպքում պետք է արտահերթ ՍՌՎԳ իրականացվի,
6) հիմնական տնտեսական նորմատիվների հաշվարկման, սահմանաչափերի պահպանման ներքին ընթացակարգերը և հսկողության մեխանիզմները,
7) տեխնիկական պահուստների (տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի) հաշվարկման, իրավական ակտերով չնախատեսված այլ տեխնիկական պահուստների (տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի) ձևավորման անհրաժեշտության որոշման ներքին ընթացակարգերը, տեխնիկական պահուստների (տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի) հաշվարկման մեթոդների ընտրության չափանիշները և մեթոդները (Կենտրոնական բանկի համապատասխան նորմատիվ իրավական ակտով նման ընտրության հնարավորություն նախատեսված լինելու դեպքում),
8) ՍՌՎԳ իրականացման գործընթացի հիմնական պատասխանատուները,
9) կառավարչական որոշումների կայացման, ինչպես նաև ռիսկերի կառավարման գործընթացներում ՍՌՎԳ արդյունքների կիրառման եղանակները,
10) ՍՌՎԳ արդյունքները շահագրգիռ ստորաբաժանումներին հասանելի դարձնելու ընթացակարգերը:

32. ՍՌՎԳ առնվազն ենթադրում է հետևյալ քայլերի իրականացում.
1) Ընկերության բիզնես-մոդելի և կորպորատիվ նպատակների տեսանկյունից Ընկերության էական գործառնությունների առանձնացում: Էական գործառնություններն առանձնացնելիս հաշվի են առնվում ինչպես քանակական (օրինակ՝ գործառնության տեսակարար կշիռն ընկերության ակտիվների, եկամտի կամ կապիտալի մեջ, ազդեցությունը կորուստների վրա և այլն), այնպես էլ որակական գործոններ (օրինակ՝ ռազմավարական նշանակությունը, ռիսկայնությունը, պլանավորված աճը, ազդեցությունը հեղինակության վրա և այլն),
2) Ընկերության էական գործառնություններին ներհատուկ, կանխատեսելի և էական ռիսկերի գնահատում և ռիսկերի պատճառների բացահայտում: Ընդ որում, առնվազն գնահատվում են անդերռայթինգի, վարկային, շուկայական, գործառնական և իրացվելիության ռիսկերը, ինչպես նաև խմբի անդամ լինելու հետևանքով առաջացող լրացուցիչ ռիսկերը,
3) սույն կետի 2-րդ ենթակետի համաձայն գնահատված ռիսկերի կառավարման գնահատում, ինչը ներառում է ինչպես ռիսկը նվազեցնող գործիքների, այնպես էլ ռիսկի նվազեցմանն ուղղված հսկողական մեխանիզմների համարժեքության և արդյունավետության գնահատումը,
4) Ընկերության գործունեությանը և (կամ) առանձին էական գործառնությունների գծով մնացորդային (զուտ) ռիսկի գնահատում, որը որոշվում է Ընկերության գործառնություններին ներհատուկ ռիսկերի մակարդակի և դրանց կառավարման համարժեքության ու արդյունավետության գնահատման արդյունքում,
5) ապահովագրության պայմանագրերով ստանձնած պարտավորությունների պատշաճ կատարման տեսանկյունից տեխնիկական պահուստների համարժեքության գնահատումը,
6) Ընկերության մնացորդային ռիսկերը կլանելու տեսանկյունից Ընկերության կապիտալի համարժեքության գնահատում, Ընկերության ռիսկայնության նկարագրին և ռիսկերի կառավարման միջավայրին համարժեք կապիտալի նպատակային մակարդակի սահմանում, Ընկերության կապիտալի մակարդակը ստանձնած ռիսկերին համապատասխանեցնելու ծրագրերի մշակում և իրագործում:

33. Որպես ՍՌՎԳ բաղկացուցիչ մաս՝ Ընկերության կողմից իրականացվում է սթրես-թեստավորում, որն առնվազն բավարարում է հետևյալ պահանջները.
1) սթրես-թեստավորումն իրականացվում է անդերռայթինգի, վարկային, արտարժութային, իրացվելիության ռիսկերի գծով,
2) սթրես-թեստավորումն իրականացվում է առնվազն եռամսյակային կտրվածքով (առաջիկա մեկ տարվա ժամանակային հորիզոնով): Ընդ որում, յուրաքանչյուր ռիսկի գծով սթրես-թեստավորումն իրականացվում է՝ հիմք ընդունելով Ընկերության կանխատեսումների վրա հիմնված հիմնական սցենարը, որը ենթարկվում է շոկային ցնցումների՝ արտացոլելով ծայրահեղ, բայց հավանական իրավիճակների առնվազն երկու մակարդակներ (միջին և խիստ),

3) սթրես-թեստերը կարող են լինել պարզ՝ զգայունության վերլուծություն՝ կախված կոնկրետ ռիսկի գործոնի փոփոխությունից, և բարդ, որոնք հաշվի են առնում տարբեր ռիսկային գործոնների, այդ թվում՝ համակարգային, փոխազդեցության արդյունքները: Եթե Ընկերության կողմից որոշակի ռիսկի գծով սթրես-թեստավորման գործընթացում դիտարկվող իրավիճակը կարող է ազդեցություն ունենալ Ընկերության գործունեությանն առնչվող այլ ռիսկերի վրա, ապա Ընկերությունը պետք է գնահատի ինչպես յուրաքանչյուր ռիսկի գծով ազդեցություններն առանձին-առանձին, այնպես էլ համընդհանուր ազդեցությունը,
4) անհրաժեշտության դեպքում Ընկերությունն իրականացնում է նաև միանգամյա սթրես-թեստեր,
5) սթրես-թեստավորման համակարգը կազմում է Ընկերության ռիսկերի կառավարման գործընթացի մի մասը, նպաստում է ռիսկերի կառավարման որակի բարելավմանը, ապահովում է ռիսկերի կառավարման լրացուցիչ գործիքներ: Սթրես-թեստերի համար օգտագործվող սցենարները ապագային միտված են, ծայրահեղ, բայց հավանական և թույլ են տալիս գնահատել Ընկերության զգայունությունը շոկային իրավիճակների նկատմամբ,
6) սթրես-թեստերի օգտագործումը պարտադիր է այն առկա կամ պոտենցիալ ռիսկերը բացահայտելու համար, որոնք չեն բացահայտվի միայն պատմական շարքերի վրա հիմնված ռիսկերի կառավարման վիճակագրական գործիքների օգտագործման դեպքում, երբ պատմական տվյալները չեն ընդգրկում սթրեսային ժամանակահատվածներ: Մասնավորապես, համապատասխան սթրես-թեստավորման պետք է ենթարկվի նոր ներդրվող գործիքների կամ գործառնությունների ռիսկայնությունը,
7) իրականացված սթրես-թեստերի արդյունքների (ազդեցությունը տնտեսական նորմատիվների մեծության վրա և (կամ) գնահատված վնասի մեծությունը) հիման վրա Ընկերությունը մշակում է սթրեսային (արտակարգ) իրավիճակների ի հայտ գալու դեպքում Ընկերության կողմից իրականացվելիք միջոցառումների ծրագրեր: Սթրեսային (արտակարգ) իրավիճակների ծրագրերը պարբերաբար թարմացվում և փորձարկվում են՝ պարզելու համար դրանց արդյունավետությունը: Սթրեսային իրավիճակների ծրագրերում Ընկերությունն արտացոլում է, թե որքան ժամանակ կպահանջվի սթրեսային (արտակարգ) իրավիճակներում դիրքերը հեջավորելու կամ այլ կերպ ռիսկերը կառավարելու համար:

34. ՍՌՎԳ արդյունքները, հաշվարկները, այդ թվում՝ ՍՌՎԳ հիմքում ընկած հիմնական ենթադրությունները, հիմնական սցենարները, սթրես-թեստերի ազդեցության գնահատման համար օգտագործվող հիմնական դատողությունները փաստաթղթավորվում են և ներկայացվում են Ընկերության խորհրդին և գործադիր մարմնին, շրջանառվում են գործընթացի համար պատասխանատու անձանց, ինչպես նաև Ընկերության շահագրգիռ ստորաբաժանումների միջև:
35. ՍՌՎԳ արդյունքներն ունեն կիրառական նշանակություն, այսինքն՝ ազդում են Ընկերության ղեկավարների և կառավարման մարմինների որոշումների՝ ներառյալ Ընկերության խորհրդի և գործադիր մարմնի կողմից կայացվող ռազմավարական որոշումների կայացման վրա: Մասնավորապես՝ ՍՌՎԳ արդյունքներն օգտագործվում են Ընկերության ռիսկի ախորժակը որոշելու կամ առանձին ռիսկերի գծով սահմանաչափեր սահմանելու համար: ՍՌՎԳ արդյունքները կիրառվում են նաև երկարաժամկետ գործարար ծրագրերի կազմման, ինչպես նաև կապիտալի և իրացվելիության պլանավորման ժամանակ:
36. Ընկերության խորհուրդը պատասխանատու է ՍՌՎԳ արդյունավետ գործընթացի իրականացման համար անհրաժեշտ պայմանների ապահովման համար, իսկ գործադիր մարմինը՝ ՍՌՎԳ-ի հետևողական իրականացման համար:

ԲԱԺԻՆ 5. ՆԵՐՔԻՆ ՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՅԼ ՏԱՐՐԵՐ

Գլուխ 6. Ապահովագրական ռիսկերի ստանձնման գործընթաց և սակագնային քաղաքականություն, ապահովագրական հայտերի կարգավորում

37. Ներքին հսկողության համակարգը ապահովագրական ***ռիսկերի ստանձնման գործընթացի և սակագնային քաղաքականության (անդերռայթինգի գործընթաց)*** առումով նվազագույնը նախատեսում է.
1) Ընկերության նպատակային շուկաները, ապահովագրական պորտֆելի նպատակային (բենչմարք) կառուցվածքը,
2) ապահովագրական պորտֆելի բազմազանեցման (դիվերսիֆիկացման) սկզբունքները, կենտրոնացումների սահմանաչափերն ըստ ապահովագրության դասերի և/կամ ենթադասերի, Ընկերության հայեցողությամբ՝ նաև ըստ այլ չափանիշների,

3) ապահովագրական սակագների (այդ թվում՝ միջնորդավճարների ու այլ վճարների) հաշվարկման, կիրառման և դրանց նկատմամբ հսկողության իրականացման կարգը,
4) ապահովագրական սակագների հաշվարկման ժամանակ օգտագործվող տեղեկատվության հավաքագրման, պահպանման, արժանահավատության ստուգման ընթացակարգերը, ինչպես նաև կիրառվող տվյալների որակի նկատմամբ Ընկերության պահանջները,
5) ապահովագրության պայմանագրերի գծով զեղչերի կիրառման քաղաքականությունը,
6) ապահովագրության պայմանագիր կնքելուց առաջ ապահովագրության օբյեկտի նախնական զննություն իրականացնելու կարգը,
7) ապահովագրության օբյեկտների փոխկապակցվածությունը որոշելու չափանիշները և ընթացակարգերը,
8) ապահովագրական ռիսկը գնահատելու համար հաճախորդներից պահանջվող նվազագույն փաստաթղթերը և տեղեկատվությունը: Ընդ որում, հաճախորդից պահանջվող տեղեկատվությունը պետք է լինի գրավոր,
9) ապահովագրության պայմանագրեր կնքելու, ապահովագրական ռիսկը գնահատելու և կոնկրետ ապահովագրական սակագին կիրառելու իրավասություն ունեցող անձանց, նրանց իրավունքներն ու պարտականությունները,
10) Ընկերության հետ կապված անձանց հետ ապահովագրության պայմանագրերի կնքման, սակագների կիրառման կարգը, սահմանաչափերը,
11) Ընկերության կողմից ստանձնված ապահովագրական ռիսկերի, կնքված ապահովագրության պայմանագրերի վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանում պահվող տեղեկատվության նվազագույն ցանկը:

38. Սույն կանոնակարգի 37-րդ կետի դրույթները տարածվում են նաև Ընկերության կողմից համապահովագրության և վերապահովագրության պայմանագրերով ռիսկերի ստանձնման գործընթացների նկատմամբ:
39. Ներքին հսկողության համակարգը ***ապահովագրական հատուցումների գծով ներկայացված հայտերի (այսուհետ՝ նաև ապահովագրական հայտերի)*** կարգավորման գործընթացի առումով նվազագույնը նախատեսում է.
    1) ապահովագրական հայտերի ընդունման, գրանցման և հաշվառման կարգը,
    2) ապահովագրական հայտերի կարգավորման, այդ թվում՝ ապահովագրական հատուցում վճարելու կամ այն մերժելու վերաբերյալ եզրակացությունների տրամադրման, ապահովագրական հատուցումների վճարման կարգը, ժամկետները, ինչպես նաև այդ գործընթացների նկատմամբ հսկողության իրականացման մեխանիզմները: Ընդ որում, ապահովագրական հայտը մերժելու կամ մասնակի մերժելու վերաբերյալ եզրակացությունը նվազագույնը ներառում է հայտը մերժելու կամ մասնակի մերժելու պատճառներն ու հիմքերը,
    3) ապահովագրական հայտերի վերաբերյալ էլեկտրոնային գրանցամատյանում պահվող տեղեկատվության նվազագույն ցանկը,
    4) ապահովագրական հայտերը կարգավորող հանձնաժողովի կազմը, քանակը, հանձնաժողովի իրավասությունները և պարտականությունները, գործունեության կարգը, իսկ նման հանձնաժողովի բացակայության դեպքում՝ ապահովագրական հայտերի կարգավորման համար պատասխանատու անձի/ անձանց պարտականությունները և լիազորությունները,
    5) ապահովագրական հայտերի կարգավորման համար պահանջվող, ինչպես նաև հայտերի գործերում պահվող նվազագույն փաստաթղթերը և տեղեկատվությունը,
    6) Ընկերության կողմից մերժված ապահովագրական հայտերի վերաբերյալ տեղեկատվության պահպանման և մերժումների հիմնավորվածության փաստաթղթավորման պահանջը,
    7) ապահովագրական հայտերի գծով վնասի գնահատում, ապահովագրական պատահարի պատճառների փորձաքննություն իրականացնող աշխատակիցների ընտրության և վերջիններիս աշխատանքի վերահսկման սկզբունքները,
    8) վնասը գնահատող անկախ ընկերությունների ընտրության սկզբունքները և նրանց հետ համագործակցության կարգը:
40. Ընկերության ներքին ընթացակարգերով նախատեսվում է, որ նախապես որոշված գումարը գերազանցող հայտերի/ապահովագրական հատուցումների գծով Ընկերության կողմից տրված եզրակացությունները վավերացվում են նաև համապատասխան վերադաս իրավասու անձի/անձանց կողմից:
41. Հնարավորության դեպքում Ընկերությունն ապահովում է, որ միևնույն պատահարի դեպքում պատահարի վայր ժամանումը, փորձաքննության իրականացումը և այդ հայցը կարգավորող համապատասխան որոշման կայացումը իրականացվի տարբեր անձանց կողմից:

42. Անդերռայթինգի գործընթացի և ապահովագրական հայտերի վերաբերյալ Ընկերության խորհրդին և գործադիր մարմնին ներկայացվող հաշվետվությունները ներառում են.
   1) ապահովագրական պորտֆելի կառուցվածքը, ապահովագրական պորտֆելի նպատակային (բենչմարք) կառուցվածքից շեղումների առկայության դեպքում՝ շեղման պատճառների վերլուծությունները,
   2) ապահովագրական պորտֆելի կենտրոնացումները (օրինակ՝ ըստ ապահովագրության առանձին դասերի, ըստ ապահովագրական պատահարների և այլն), փոփոխման միտումները,
   3) ապահովագրության առանձին դասերի և/կամ ենթադասերի մասով կիրառված ապահովագրական սակագները,
   4) ապահովագրության պայմանագրերի գծով կիրառված զեղչերը, այդ զեղչերի կիրառման արդյունավետության վերլուծությունները,
   5) ապահովագրության առանձին դասերի գծով ներկայացված, ինչպես նաև կարգավորված (այդ թվում՝ մերժված) հայտերի քանակը, մեծությունը, խոշոր ապահովագրական հայտերը,
   6) ապահովագրության առանձին դասերի և/կամ ենթադասերի մասով վնասաբերության մակարդակը, փոփոխման միտումները:

Գլուխ 7. Վերաապահովագրություն

43. Ներքին հսկողության համակարգն Ընկերության կողմից վերաապահովագրության փոխանցված ռիսկերի առումով նվազագույնը նախատեսում է վերաապահովագրության տարեկան ծրագրի հաստատում, որն առնվազն նախատեսում է.
   1) վերաապահովագրության ռազմավարությունը, որով սահմանվում են վերաապահովագրության առումով Ընկերության ընդհանուր մոտեցումները,
   2) յուրաքանչյուր դասի (և/կամ ենթադասի) գծով սեփական մասնակցության առավելագույն չափի հաշվարկը՝ մանրամասն մեթոդաբանությամբ, ինչպես նաև հաշվարկման ժամանակ կիրառված վիճակագրական տվյալների աղբյուրները: Սույն ենթակետով նախատեսված հաշվարկները կատարելիս Ընկերությունը հաշվի է առնում Օրենքի 76-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված պահանջները: Բացի այդ, սույն ենթակետում ներկայացված հաշվարկներն առնվազն բավարարում են հետևյալ սկզբունքները.
      ա. հաշվարկները կատարվում են ակտուարական մեթոդներին համապատասխան,
      բ. հաշվարկի ժամանակ կատարված ենթադրությունները, շեղումներով պայմանավորված ճշգրտումները հիմնվում են խելամիտ և հիմնավոր դատողությունների վրա,
      գ. հաշվարկի ժամանակ կիրառված վիճակագրական տվյալներն արժանահավատ են,
      դ. հաշվարկի արդյունքում ստացված սեփական մասնակցության առավելագույն չափերի արդյունքում Ընկերությունը հաշվետու տարում չի խախտում հիմնական տնտեսական նորմատիվների սահմանաչափերը, ինչպես նաև Ընկերության խորհրդի կողմից հաստատված այլ ներքին սահմանաչափերը (առկայության դեպքում),
   3) ապահովագրական առանձին ռիսկերի (ապահովագրական պատահարների) գծով վնասի առաջացման հավանականության գնահատման չափանիշներն ու կարգը,
   4) վերաապահովագրության ձևերի, տեսակների, ենթատեսակների ընտրության չափանիշները և/կամ մեթոդները, ինչպես նաև հաշվետու տարվա համար կատարված ընտրության արդյունքները,
   5) Ընկերության կողմից վերաապահովագրողների ընտրության չափանիշները, ինչպես նաև վերաապահովագրողների ֆինանսական վիճակի (հուսալիության) գնահատման մեթոդները,
   6) առավելագույն ծածկույթի աղյուսակը, որը ներառում է սույն գլխում սահմանված հաշվարկների հիման վրա ապահովագրության յուրաքանչյուր դասի (և/կամ ենթադասի) գծով կազմված սեփական մասնակցության առավելագույն չափերը՝ հստակ նշելով, թե սեփական մասնակցության առավելագույն չափերից յուրաքանչյուրն ինչ ցուցանիշի նկատմամբ է հաշվարկված (օրինակ՝ ապահովագրական գումար, ապահովագրական հատուցում, վնասաբերության ցուցանիշ և այլն):
44. Վերաապահովագրության տարեկան ծրագիրը համահունչ է Ընկերության գործունեությանը բնորոշ ռիսկերի բնույթին, ծավալին և բարդությանը: Այն հանդիսանում է Ընկերության ռիսկերի և կապիտալի կառավարման ռազմավարության բաղկացուցիչ մասը, որի մշակման ընթացքում առնվազն հաշվի են առնվում Ընկերության ռիսկի ախորժակը, վերաապահովագրության իրականացման արդյունքում առաջացող նոր ռիսկերը (վարկային ռիսկ, գործառնական ռիսկ, արտարժութային ռիսկ, ըստ վերաապահովագրողի կենտրոնացման ռիսկ, իրավական ռիսկ և այլն), դրանց համար Ընկերության ռիսկերի քաղաքականությամբ սահմանված սահմանաչափերը, ինչպես նաև անդերռայթինգի կանխատեսումները:

45. Վերաապահովագրության տարեկան ծրագիրն Ընկերության խորհրդի կողմից հաստատվում է յուրաքանչյուր ֆինանսական տարվա համար մինչև հաշվետու տարվա փետրվարի 1-ը:
46. Յուրաքանչյուր գործառնություն, որը կարող է հանգեցնել Ընկերության խորհրդի կողմից հաստատված վերաապահովագրության տարեկան ծրագրից չթույլատրելի շեղմանը, հանգամանորեն քննարկվում և ներկայացվում է խորհրդի հաստատմանը:
47. Ներքին հսկողության համակարգն Ընկերության կողմից վերաապահովագրության փոխանցած ռիսկերի առումով առնվազն նախատեսում է նաև՝
    1) վերաապահովագրության տարեկան ծրագրի կազմման ընթացակարգը, ժամկետները,
    2) վերաապահովագրության տարեկան ծրագրի մշակման համար պատասխանատու անձանց, նրանց պարտականությունների շրջանակները,
    3) վերաապահովագրության տարեկան ծրագրի հաշվարկների իրականացման համար անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրման, պահպանման կարգը, դրա համար պատասխանատու անձանց,
    4) վերաապահովագրության իրականացման արդյունքում առաջացող ռիսկերի բացահայտման, գնահատման և կանխարգելման ընթացակարգերը,
    5) ընթացակարգերի նկարագրությունը, որոնք ապահովում են վերաապահովագրողին փոխանցվող և վերաապահովագրողից ստացվող տեղեկատվական հոսքերի համապատասխանությունը վերաապահովագրության պայմանագրերի պահանջներին,
    6) ընթացակարգերի նկարագրությունը, որոնք ապահովում են ապահովագրության պայմանագրերի և դրանց վերաապահովագրության պայմանագրերի պայմանների, այդ թվում՝ ապահովագրված և վերաապահովագրված ռիսկերի համադրումը՝ չնախատեսված հնարավոր տարբերությունները բացահայտելու նպատակով:
48. Վերաապահովագրության վերաբերյալ Ընկերության խորհրդին և գործադիր մարմնին ներկայացվող հաշվետվություններն առնվազն ներառում են.
    1) վերաապահովագրության փոխանցված ռիսկերի, վերաապահովագրավճարների, վերաապահովագրողներից ստացված հատուցումների մեծությունները,
    2) կիրառված վերաապահովագրության ձևերի, տեսակների, ենթատեսակների արդյունավետության վերլուծությունները,
    3) վերաապահովագրողների ֆինանսական վիճակի (հուսալիության) գնահատման արդյունքները,
    4) կենտրոնացումներն ըստ վերաապահովագրողների/վերաապահովագրական շուկաների,
    5) ապահովագրության առանձին դասի (և/կամ ենթադասի) գծով սեփական մասնակցության առավելագույն չափերի շեղումները (առկայության դեպքում), պատճառների վերլուծություններն ու բացատրությունները:

Գլուխ 8. Ներդրումային գործունեություն, հիմնական միջոցների կառավարում, դրամարկղային գործառնություններ

49. Ներքին հսկողության համակարգը ներդրումային գործունեության առումով նվազագույնը նախատեսում է.
    1) ներդրումային քաղաքականությունը,
    2) ներդրումային պորտֆելի (ներդրումային գործիքների առանձին խմբերի) նպատակային (բենչմարք) կառուցվածքը, եկամտաբերությունը և ժամկետայնությունը,
    3) ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման ներքին ընթացակարգերը, ներդրումների վերաբերյալ որոշումների կայացման համար անհրաժեշտ նվազագույն տեղեկատվությունը,
    4) ներդրումային հանձնաժողովի կամ այլ պատասխանատու ստորաբաժանման կազմը, պարտականությունները և լիազորությունները, իսկ նման ստորաբաժանման բացակայության դեպքում՝ ներդրումների համար պատասխանատու անձի պարտականությունները և լիազորությունները,
    5) ներդրումային սահմանափակումները (օրինակ՝ ըստ փոխառուների կամ ֆինանսական գործիքների վարկանիշների),
    6) թույլատրելի կենտրոնացումների սահմանաչափերը (օրինակ՝ ըստ ներդրումային գործիքների, ըստ գործընկերների/արժեթուղթ թողարկողների/փոխառուների, ըստ տնտեսության ճյուղերի, ըստ Ընկերության հետ կապված անձանց և այլն),
    7) ներդրումների բազմազանեցման (դիվերսիֆիկացման) սկզբունքները,
    8) փոխառության ապահովվածության ընդունելի տեսակները,

9) ածանցյալ գործիքներով գործառնությունների իրականացման քաղաքականությունը, դրա իրականացման ներքին ընթացակարգերը, այդ թվում՝
   ա. ածանցյալ գործիքներով գործառնություններից բխող ռիսկերի ճանաչման, գնահատման և կառավարման արդյունավետ համակարգի առկայությունը,
   բ. արտաբորսայական ածանցյալ գործիքներով գործառնություններ իրականացնելու դեպքում ածանցյալների արժեքի գնահատման մեթոդները,
10) ձեռք բերված արժեթղթերի թողարկողների և փոխառուների՝ վարկունակության գնահատման պահանջը, այդ գնահատումներն իրականացնելու կարգը, ժամկետներն ու պարբերականությունը, դրանց համար պատասխանատու անձանց և նրանց պարտականությունները,
11) Ընկերության ներդրումների դասակարգման, չաշխատող ակտիվների գծով հնարավոր կորուստների պահուստի ձևավորման սկզբունքները, ընթացակարգերը, դրանց հաշվարկման և պարբերական մոնիթորինգի իրականացման համար պատասխանատու անձանց, նրանց պարտականությունների շրջանակները, ինչպես նաև Ընկերության ժամկետանց ակտիվների հետստացման ընթացակարգերը,
12) Ընկերության պարտավորությունների կառուցվածքին և բնույթին Ընկերության ներդրումային գործունեության համապատասխանությունն ապահովելու, ինչպես նաև առկա անհամապատասխանությունների արդյունքում առաջացող ռիսկերը կառավարելու ընթացակարգերը: Ընդ որում, Ընկերությունը պետք է ունենա նաև Ընկերության ակտիվների և պարտավորությունների կառավարման քաղաքականություն, համապատասխան ընթացակարգեր:

50. Ընկերության ներդրումային գործունեության վերաբերյալ Ընկերության խորհրդին և գործադիր մարմնին ներկայացվող հաշվետվություններն առնվազն ներառում են.
    1) ներդրումների կառուցվածքը,
    2) մարումների ժամանակացույցը,
    3) ներդրումների եկամտաբերությունը,
    4) ներդրումների որակի վերլուծությունները,
    5) խնդրահարույց ներդրումները և դրանց հետստացման ուղղությամբ իրականացված միջոցառումները,
    6) գրավադրված ներդրումներն ինչպես գումարային արտահայտությամբ, այնպես էլ որպես տոկոս ներդրումային պորտֆելից,
    7) իրականացված ածանցյալ գործառնությունները:
51. Ներքին հսկողության համակարգը **հիմնական միջոցների կառավարման** առումով նվազագույնը ներառում է.
    1) հիմնական միջոցների ձեռքբերման, օտարման և դուրսգրման կանոնները,
    2) հիմնական միջոցների ձեռքբերման/օտարման նպատակահարմարության որոշման չափանիշները,
    3) սուբրոգացիայի արդյունքում կամ այլ հիմքով Ընկերության սեփականությունը դարձած հիմնական միջոցների օտարման կամ օգտագործման սկզբունքները, ժամկետներն ու ընթացակարգերը,
    4) հիմնական միջոցների պահպանման, հաշվառման ներքին ընթացակարգերը,
    5) գույքագրման պարբերականությունը և ներքին ընթացակարգերը,
    6) հիմնական միջոցների վերագնահատման պարբերականությունը, կարգը, վերագնահատման անհրաժեշտության որոշման սկզբունքները:
52. Ներքին հսկողության համակարգը *դրամարկղային գործառնությունների առումով* նվազագույնը ներառում է.
    1) գանձապահների տնօրինության տակ գտնվող կանխիկ միջոցների առավելագույն սահմանաչափերը,
    2) կանխիկ միջոցներով գործառնությունների իրականացման ներքին ընթացակարգերը, հսկողության մեխանիզմները,
    3) կանխիկ միջոցների պահպանման և տեղափոխման անվտանգությունն ապահովող մեխանիզմները,
    4) կանխիկ միջոցների գույքագրման պարբերականությունը:

Գլուխ 9. Գործարար գործընթացների անընդհատության կառավարում

53. Ընկերությունը բացահայտում, գնահատում, կառավարում և նվազեցնում է գործարար գործընթացների անընդհատությունը (շարունակականությունը) վտանգող ռիսկերը:
54. Գործարար գործընթացների անընդհատության կառավարման նպատակն է նվազեցնել կամ կանխարգելել արտակարգ իրավիճակ տեղի ունենալու դեպքում հնարավոր բացասական ազդեցությունն Ընկերության գործառնությունների, համբավի, շահութաբերության, հաճախորդների և այլ պարտատերերի, ֆինանսական համակարգի և (կամ) այլ շահագրգիռ անձանց վրա:

55. Այն գործառնությունները, որոնք անմիջականորեն չեն իրականացվում Ընկերության կողմից և պատվիրակվել են այլ անձանց, նույնպես ընդգրկվում են գործարար գործընթացների անընդհատության կառավարման համակարգում:
56. Գործարար գործընթացների անընդհատության կառավարումը (այսուհետ՝ նաև ԳԳԱԿ) իրենից ներկայացնում է համալիր և ամբողջական գործընթաց, որը ներառում է այն բոլոր միջոցառումները և գործողությունները, որոնք ուղղված են արտակարգ իրավիճակի դեպքում կարևոր նշանակություն ունեցող գործարար գործընթացների անընդհատության ապահովմանը և (կամ) վերականգնմանը նախապես սահմանված ժամկետներում և ծավալով:
57. Սույն գլխի իմաստով արտակարգ իրավիճակն այն իրավիճակն է, որի առաջացումը հնարավոր է, սակայն դժվար կանխատեսելի (ցածր հավանականություն ունեցող), և որը առաջացնում է կամ կարող է առաջացնել զգալի նյութական վնասներ կամ այլ բացասական հետևանքներ Ընկերության, նրա հաճախորդների կամ այլ պարտատերերի համար: Արտակարգ իրավիճակները ներառում են ինչպես արտաքին աղետները (օրինակ՝ բնական աղետներ, տեխնիկական վթարներ, պատերազմ (ռազմական գործողություններ), ավազակային հարձակումներ, զանգվածային անկարգություններ, համաճարակներ, դիվերսիաներ, զանգվածային գործադուլ), այնպես էլ ներքին աղետները, որոնք առաջանում են Ընկերության աշխատակիցների դիտավորյալ (չարամիտ) կամ անզգույշ (անփույթ, չմտածված) գործողությունների կամ անգործության, այդ թվում՝ անվտանգության ապահովման համակարգերի ստեղծման և շահագործման ընթացքում ոչ մասնագիտական կամ սխալ որոշումների ընդունման հետևանքով:
58. Սույն գլխի իմաստով կարևոր նշանակություն ունեցող գործընթացներն Ընկերության այն գործառնությունները, գործընթացները, ռեսուրսները և ենթակառուցվածքներն են, որոնց խափանումը, ընդհատումը կամ բացակայությունը (այսուհետ՝ խափանումը) էական բացասական ազդեցություն կունենան Ընկերության գործառնությունների, համբավի, շահութաբերության, հաճախորդների և այլ պարտատերերի վրա և/կամ որոնք այդպիսին են ճանաչվել Կենտրոնական բանկի խորհրդի կողմից:
59. Ընկերության գործարար գործընթացների անընդհատության կառավարման համակարգը նվազագույնը նախատեսում է.
    1) Ընկերության գործարար գործընթացների անընդհատության կառավարման քաղաքականությունը՝ հաստատված Ընկերության խորհրդի կողմից,
    2) Ընկերության գործարար գործընթացների վերլուծությունը, այդ թվում՝ ռիսկերի գնահատումը,
    3) գործարար գործընթացների վերականգնման նպատակները և ռազմավարությունը,
    4) գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագիրը, այդ թվում՝ արտակարգ իրավիճակների կառավարման և վերականգնման ծրագիրը,
    5) Ընկերության աշխատակիցների համար սեմինարների անցկացման և իրազեկվածության մակարդակի բարձրացման ծրագիրը,
    6) գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի պարբերական թեստավորման և վերանայման ծրագիրը:
60. Ընկերության գործարար գործընթացների անընդհատության կառավարման համակարգը հարմարեցվում է Ընկերության գործունեության բնույթին, չափին և բարդությանը:
61. Ընկերության գործարար գործընթացների անընդհատության կառավարման քաղաքականությամբ սահմանվում են համակարգի ներդրման սկզբունքները և ուղղությունը, որոնք պետք է պարունակեն.
    1) ԳԳԱԿ նպատակները, խնդիրները և ԳԳԱԿ համակարգի ներդրման Ընկերության որդեգրած մոտեցումը,
    2) ԳԳԱԿ ներդրման համար պատասխանատու անձանց, թիմերի և (կամ) կոմիտեների ցանկը, նրանց հստակ իրավունքները, պարտականությունները և լիազորությունները:
62. Ընկերության գործարար գործընթացների վերլուծության նպատակն է՝ բացահայտել այն բոլոր գործարար գործընթացները, որոնք ունեն կարևոր նշանակություն, գնահատել դրանց խափանման ազդեցությունն Ընկերության վրա և որոշել վերականգնման առաջնահերթությունները:
63. Գործարար գործընթացների վերլուծության ժամանակ հաշվի է առնվում հետևյալը.
    1) հավանական արտակարգ իրավիճակները (սցենարները),
    2) գործարար գործընթացի խափանման հնարավոր բացասական ազդեցությունն Ընկերության հաճախորդների կամ այլ պարտատերերի վրա, ինչպես նաև ազդեցության գնահատումը ֆինանսական, իրավական կամ համբավի տեսանկյունից,
    3) գործարար գործընթացների խափանման առավելագույն թույլատրելի ժամանակը:

64. Ռիսկերի գնահատման ժամանակ բացահայտվում են այն հնարավոր ռիսկերը (պատճառները), որոնք կարող են հանգեցնել կարևոր նշանակություն ունեցող գործարար գործընթացների խափանմանը: Այդ ռիսկերի գծով հաշվի են առնվում տեղի ունենալու հավանականությունը և տեղի ունենալու դեպքում հնարավոր ազդեցությունը:
65. Վերականգնման նպատակները Ընկերության կարևոր գործարար գործընթացների իրականացման նախապես սահմանված մակարդակներն (ծավալներն) են, ըստ որի պետք է վերականգնվեն այդ գործարար գործընթացներն արտակարգ իրավիճակ տեղի ունենալուց հետո՝ նախապես սահմանված վերականգնման ժամկետում:
66. Ընկերությունը սահմանում և փաստաթղթավորում է գործարար գործընթացների վերականգնման նպատակները և դրան հասնելու ռազմավարությունը՝ հիմք ընդունելով Ընկերության գործարար գործընթացների վերլուծության արդյունքները, Ընկերության գործունեության բնույթը, չափը և բարդությունը:
67. Ընկերությունն ապահովում է գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի համապատասխանությունն Ընկերության գործարար գործընթացների անընդհատության կառավարման քաղաքականությանը:
68. Գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրում նշվում են բոլոր այն միջոցառումները և պահանջվող տեղեկատվությունը, որոնք հնարավորություն կտան Ընկերությանը արդյունավետ կերպով կառավարելու արտակարգ իրավիճակը սկզբնական փուլում, ինչպես նաև հետագայում վերականգնելու կարևոր նշանակություն ունեցող գործարար գործընթացները:
69. Գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագիրն առնվազն պարունակում է.
    1) կարևոր նշանակություն ունեցող գործարար գործընթացների ցանկը,
    2) յուրաքանչյուր կարևոր գործարար գործընթացի վերականգնման մակարդակը և վերականգնման ժամկետը,
    3) յուրաքանչյուր կարևոր գործարար գործընթացի վերականգնման ռազմավարությունը և պահանջվող միջոցառումներն ու դրանց հաջորդականությունը,
    4) գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների համար պահանջվող ռեսուրսների և ենթակառուցվածքների նկարագրությունը,
    5) արտակարգ իրավիճակի պայմաններում և դրանից հետո Ընկերության աշխատակիցների և թիմերի իրավունքները, պարտականությունները և լիազորությունները,
    6) հաղորդակցման ծրագրերը:
70. Ընկերության գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագիրը թեստավորվում է առնվազն տարին մեկ անգամ կամ ավելի հաճախ՝ գործարար գործընթացների կազմի, կառուցվածքի կամ բնույթի հետ կապված էական փոփոխությունների դեպքում: Գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի թեստավորման արդյունքները փաստաթղթավորվում և ներկայացվում են Ընկերության խորհրդին:
71. Ընկերության տեղեկատվական համակարգերի անընդհատության ապահովման և կառավարման հետ կապված առանձնահատկությունները սահմանվում են Կենտրոնական բանկի նորմատիվ իրավական այլ ակտով:

Գլուխ 10. Ընկերության հետ կապված անձինք

72. Ներքին հսկողության համակարգը նախատեսում է Ընկերության հետ կապված անձանց մասին տեղեկատվության հավաքագրման, պահպանման (արխիվացման) և մշտապես թարմացման արդյունավետ ընթացակարգերի, ինչպես նաև Ընկերության հետ կապված անձանց հետ գործարքների կնքման արդյունավետ ընթացակարգերի առկայություն:
73. Ընկերության հետ կապված անձանց հետ գործարքների կնքման ընթացակարգերը նվազագույնը բացահայտում և վերահսկում են շահերի բախման հնարավոր դեպքերն ու ոլորտները:
74. Ընկերությունն ապահովում է Ընկերությունում նշանակալից մասնակցություն ունեցող իրավաբանական անձանց, Ընկերության հետ փոխկապակցված անձանց, ինչպես նաև Ընկերության հետ փոխկապակցված անձանց հետ փոխկապակցված անձանց վերաբերյալ Կենտրոնական բանկի խորհրդի 2007 թվականի հոկտեմբերի 10-ի թիվ 344-Ն որոշմամբ հաստատված «Ապահովագրության ոլորտում լիցենզավորման, գրանցման, համաձայնության, թույլտվության տրամադրման, մասնագիտական համապատասխանության ստուգման և որակավորման կարգը» կանոնակարգ 3/01-ի համաձայն Կենտրոնական բանկ պարբերաբար ներկայացվող հաշվետվությունների (տեղեկությունների) ստացումն ու ուսումնասիրությունը:

75. Ընկերության հետ կապված անձանց մասին տեղեկատվությունը նվազագույնը ներառում է.
   1) անձի անունը և բնակության վայրը (իրավաբանական անձի դեպքում՝ անվանումը և գտնվելու վայրը),
   2) զբաղմունքը (իրավաբանական անձի դեպքում՝ գործունեության տեսակը),
   3) կապվածության ձևը,
   4) Ընկերության (իսկ հնարավորության դեպքում՝ նաև այլ Ընկերությունների) հետ կնքված գործարքները (կնքված ապահովագրության պայմանագրեր, Ընկերությանը տրված, ինչպես նաև վերջինիս կողմից տրամադրված փոխառություններ, ստացվելիք այլ գումարներ և այլն):

Գլուխ 11. Գործարար վարվելակերպ, սպառողների շահերի պաշտպանություն

76. Ներքին հսկողության համակարգը գործարար վարվելակերպի և սպառողների շահերի պաշտպանության առումով նվազագույնը նախատեսում է.
   1) Ընկերության կողմից ապահովագրության յուրաքանչյուր դասի և/կամ ենթադասի գծով մատուցվող ծառայության մանրամասն նկարագրությունը, այդ թվում՝ ապահովագրության կանոնները, ապահովագրության պայմանագրերի/վկայագրերի օրինակելի ձևերը և դրանցում ներառվող տեղեկատվությունը, չհատուցվող գումարի, բոնուսների և զեղչերի կիրառման պայմանները, մատուցվող ծառայությունների սակագները, դրանք փոփոխելու պայմաններն ու կարգը, որոնք պետք է լինեն պարզ և հասկանալի, չպետք է պարունակեն ապակողմնորոշող և մոլորության մեջ գցող դրույթներ և չպետք է խախտեն հաճախորդների շահերը,
   2) ծառայություններ մատուցելու համար հաճախորդներից պահանջվող փաստաթղթերի ցանկը (տեղեկությունները),
   3) հիմնական ծառայությունների հետ լրացուցիչ ծառայություններ մատուցելու քաղաքականությունը,
   4) հաճախորդի համար Ընկերության կողմից մատուցվող ծառայության հասանելիությունը սահմանափակող բոլոր պայմանները,
   5) Ընկերության կողմից գործարքները մերժելու (ծառայությունը մատուցելուց հրաժարվելու) չափանիշները և ընթացակարգերը,
   6) ծառայություն մատուցելու ընթացքում թույլ տրված սխալները շտկելու ընթացակարգերը,
   7) Ընկերության նախաձեռնությամբ ինչպես կոնկրետ հաճախորդի, այնպես էլ ընդհանրապես Ընկերության կողմից ծառայությունների մատուցումն ընդհատելու ընթացակարգերը,
   8) սահմանված ընդհանուր պայմաններից տարբերվող պայմաններով ծառայություններ մատուցելու (առավել/նվազ բարենպաստ պայմաններով պայմանագրեր կնքելու) ընթացակարգերը, այդ թվում՝ այն չափանիշները, որոնց հիման վրա Ընկերության իրավասու մարմնի կողմից կընդունվեն նմանատիպ որոշումներ:
   9) հաճախորդների սպասարկման ընթացքում շահերի հնարավոր բախման դեպքերի բացահայտմանն ու բացառմանն ուղղված ընթացակարգերը,
   10) հաճախորդների դիմում-բողոքների և/կամ պահանջների (գրավոր, բանավոր) ընդունման, քննարկման, դրանց արդյունքում որոշումների կայացման, դիմում-բողոք և/կամ պահանջ ներկայացրած անձին դիմում-բողոքի և/կամ պահանջի քննության ընթացիկ կարգավիճակի մասին տեղեկատվության տրամադրման (համապատասխան պահանջի առկայության դեպքում), ինչպես նաև նշված գործընթացների նկատմամբ մոնիթորինգի իրականացման ընթացակարգերը: Ընդ որում, հաճախորդների դիմում-բողոքների և/կամ պահանջների (գրավոր, բանավոր) ընդունման և քննման գործառույթը չի կարող իրականացվել այն աշխատակցի կողմից, ով իրականացնում է ապահովագրական հատուցումների գծով հայտերի կարգավորման, ապահովագրության պայմանագրերի կնքման գործառույթ կամ այլ կերպ անմիջականորեն ներգրավված է հաճախորդներին ծառայությունների մատուցման գործում:
   11) Ընկերության կողմից գովազդի իրականացման գործընթացը նկարագրող ընթացակարգերը, գովազդային և այլ հրապարակվող նյութերը սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից գնահատելու կարգը,
   12) Ընկերության և Ընկերության կողմից մատուցվող ծառայությունների վերաբերյալ հրապարակման ենթակա տեղեկատվության ցանկը, տեղեկությունները հաճախորդների համար հասանելի դարձնելու ձևերի, միջոցների, ընթացակարգերի (մամուլ, ինտերնետ, տեղեկատվական ամփոփաթերթեր, թերթոններ, բրոշյուրներ, գրքույկներ և այլն) նկարագրությունը, տարբեր ձևերով հրապարակվող տեղեկատվության ժամանակին թարմացումը, արժանահավատությունը և համահունչությունն ապահովող ներքին ընթացակարգերը,

13) Ընկերության և հաճախորդի միջև հաղորդակցման սկզբունքները, կարգը, ձևերը,
14) ապահովագրության պայմանագիրը կնքելուց առաջ, պայմանագրի կնքման ընթացքում և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդներին տրամադրվող տեղեկատվության ցանկը (այդ թվում՝ բանավոր տեղեկատվության մասով նվազագույն տեղեկատվության ցանկը), այդ տեղեկատվության տրամադրման և հաճախորդների սպասարկման կարգը,
15) Ընկերության՝ հաճախորդներին սպասարկող անձնակազմի, ապահովագրական գործակալների, հաճախորդներին անմիջական խորհրդատվություն տվող աշխատակիցների վարվելակերպի կանոնները,
16) Ընկերության անունից ապահովագրական գործակալի գործառույթներ իրականացնող ֆիզիկական անձանց, Ընկերության՝ հաճախորդներին սպասարկող անձնակազմի, հաճախորդներին անմիջական խորհրդատվություն տվող աշխատակիցների գիտելիքների և հմտությունների ստուգման, նրանց մասնագիտական որակի բարձրացման մեխանիզմները՝ ներառյալ տեղեկություններ այն անձանց վերաբերյալ, որոնց կողմից կազմակերպված դասընթացների և/կամ քննությունների վրա է հիմնվում Ընկերության կողմից ապահովագրական գործակալների և համապատասխան աշխատակիցների գիտելիքների և հմտությունների ստուգման գործընթացը (նման դասընթացներ կամ քննություններ կազմակերպվելու դեպքում), ինչպես նաև ապահովագրական գործակալին հաշվառման վկայականի տրամադրման և ապահովագրական գործակալի հետ պայմանագրի դադարեցման դեպքում հաշվառման վկայականի վերադարձման գործընթացները նկարագրող կարգը,
17) ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկատվության հավաքագրման, պահպանման, օրենսդրությամբ նախատեսված իրավասու անձանց տրամադրման ներքին ընթացակարգերը:

77. Գործարար վարվելակերպի և սպառողների շահերի պաշտպանության առումով Ընկերության կողմից մշակված գործընթացներն ու ընթացակարգերը ապահովում են հաճախորդների նկատմամբ արդարացի վերաբերմունքը, որն առնվազն ենթադրում է.
1) ապահովագրական պրոդուկտների մշակման և իրականացման ընթացքում հաճախորդների կարիքների և շահերի դիտարկում,
2) ապահովագրության պայմանագիրը կնքելուց առաջ և պայմանագրի գործողության ընթացքում հաճախորդին պարզ, արժանահավատ, ժամանակին և հաճախորդի կարիքներին համարժեք տեղեկատվության տրամադրում,
3) հաճախորդի կարիքներին անհամապատասխան ծառայությունների մատուցումից խուսափում,
4) հաճախորդին տրված խորհրդատվության բարձր որակի ապահովում,
5) հաճախորդների դիմում-բողոքների և/կամ պահանջների արդարացի և ժամանակին քննում,
6) հաճախորդների վերաբերյալ ապահովագրական գաղտնիք կազմող տեղեկատվության պահպանում,
7) հաճախորդների խելամիտ սպասումների արդարացում,
8) սահմանված ընդհանուր պայմաններից տարբերվող պայմաններով ծառայությունների մատուցում (առավել/նվազ բարենպաստ պայմաններով պայմանագրերի կնքում) բացառապես համապատասխան չափանիշների առկայության դեպքում:

78. Ընկերության գործարար ծրագրով հաճախորդների նկատմամբ արդարացի վերաբերմունքի ցուցաբերումը պետք է սահմանվի որպես նպատակ և պետք է հաշվի առնվի որոշումների կայացման գործընթացներում:

79. Ընկերությունը պետք է ապահովի գործարար վարվելակերպի և սպառողների շահերի պաշտպանության առումով մշակված գործընթացների ու ընթացակարգերի, ինչպես նաև բարձր պրոֆեսիոնալիզմի և վարքագծի կանոնների պահպանումն ինչպես Ընկերության աշխատակիցների, այնպես էլ Ընկերության ապահովագրական գործակալների կողմից:

80. Ընկերությունն ապահովում է իր կողմից ծառայությունների մշակման և դրանց մատուցման գործընթացը սպառողների շահերի պաշտպանության տեսանկյունից գնահատելու համապատասխան մեխանիզմների և այդ մեխանիզմների կիրառման արդյունքում ստացված գնահատականների վերաբերյալ գործադիր մարմնին և խորհրդին տեղեկացնելու ընթացակարգերի առկայությունը:

Գլուխ 12. Փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքար

81. Ներքին հսկողության համակարգը փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման դեմ պայքարի առումով նվազագույնը նախատեսում է.
1) այն պարտադիր ընթացակարգերը, որոնք Ընկերության կողմից պետք է պահպանվեն հաճախորդների, պարտատերերի և այլ անձանց հետ ֆինանսական և (կամ) այլ գործառնություններ կատարելիս,

2) ֆինանսական կամ այլ գործառնությունների կատարման ընթացքում Ընկերության կողմից պահանջվող փաստաթղթերը (տեղեկությունները),
3) իրական շահառուի վերաբերյալ նվազագույն տեղեկությունների հավաքագրումը և հաճախորդների նույնականացման համար անհրաժեշտ նվազագույն ընթացակարգերը,
4) գործարքները կասկածելի համարելու չափանիշները,
5) հաճախորդների վերաբերյալ տեղեկությունների գրանցման և պահպանման, ինչպես նաև կասկածելի գործարքների վերաբերյալ տեղեկությունների հավաքագրման, հաշվառման և պահպանման կարգը,
6) կասկածելի գործարքների հայտնաբերման դեպքում Ընկերության համապատասխան աշխատակիցների միջև տեղեկատվության փոխանցման ընթացակարգերը, կասկածելի գործարքների մասին ընկերության ղեկավարությանը և Կենտրոնական բանկին հայտնելու ընթացակարգերը,
7) աշխատակիցների կողմից պարտադիր իրականացվող գործընթացները՝ ֆինանսական կամ այլ գործառնություններ իրականացնելիս կասկածելի գործարքներ հայտնաբերելու դեպքում,
8) փողերի լվացման և ահաբեկչության ֆինանսավորման կանխարգելմանն ուղղված օրենսդրական պահանջների և Ընկերության ներքին ընթացակարգերի նկատմամբ վերահսկողության իրականացման կարգն ու պայմանները:

Գլուխ 13. Ապահովագրական խարդախության դեմ պայքար

82. Ներքին հսկողության համակարգը ապահովագրական խարդախությունների դեմ պայքարի առումով նվազագույնը նախատեսում է.
1) ապահովագրական խարդախությունների բացահայտման, զսպման, կանխարգելման և հաշվետվողականության քաղաքականությունը,
2) ապահովագրական խարդախությունների բացահայտմանը, զսպմանն ու կանխարգելմանն ուղղված ընթացակարգերը,
3) ապահովագրական խարդախությունների դեմ պայքարի համար պատասխանատու անձանց, նրանց իրավասություններն ու պարտականությունները,
4) ապահովագրական խարդախության տեսանկյունից ապահովագրական հայտերը, գործարքները և այլ իրադարձությունները կասկածելի համարելու չափանիշները, այսինքն՝ այն նախանշանները, որոնց առկայությունը կարող է վկայել ապահովագրական խարդախության հնարավոր դեպքերի մասին, ինչպես նաև խարդախությունների տիպաբանությունները,
5) ապահովագրական խարդախության տեսանկյունից կասկածելի դեպքեր հայտնաբերելու դեպքում պարտադիր իրականացման ենթակա գործընթացները,
6) ապահովագրական խարդախության տեսանկյունից կասկածելի դեպքեր հայտնաբերելիս Ընկերության համապատասխան աշխատակիցների միջև տեղեկատվության փոխանցման ընթացակարգերը, կասկածելի դեպքերի մասին ապահովագրական խարդախությունների դեմ պայքարի համար պատասխանատու անձին, ընկերության ղեկավարությանը հայտնելու ընթացակարգերը,
7) ապահովագրական խարդախության մեջ ներգրավված անձանց վերաբերյալ տեղեկատվության գրանցման և պահպանման, ինչպես նաև կասկածելի ապահովագրական դեպքերի վերաբերյալ տեղեկատվության հավաքագրման, հաշվառման և պահպանման կարգը,
8) ապահովագրական խարդախությունների կանխարգելմանն ուղղված օրենսդրական պահանջների և Ընկերության ներքին ընթացակարգերի նկատմամբ վերահսկողության իրականացման կարգն ու պայմանները,
9) այլ Ընկերությունների և մարմինների հետ համագործակցության կարգը:
83. Ապահովագրական խարդախությունների դեմ պայքարի առումով Ընկերության կողմից մշակված գործընթացներն ու ընթացակարգերը հնարավորինս պետք է ապահովեն հետևյալ անձանց կողմից իրականացվող ապահովագրական խարդախությունների բացահայտումը, զսպումն ու կանխարգելումը.
1) հաճախորդներ և երրորդ անձինք (փորձագետներ, վերանորոգող կազմակերպության ղեկավար կամ աշխատակիցներ, բժիշկներ կամ այլ մասնագետներ, ապահովագրական հատուցման գործընթացում ներգրավված այլ անձինք),
2) ապահովագրական միջնորդներ,
3) Ընկերության աշխատակիցներ (ներառյալ՝ ղեկավարներ):
84. Ընկերությունները ապահովագրական հատուցում ստանալու, ապահովագրության պայմանագիր կնքելու դիմումի ձևերում (անկախ ներկայացման ձևից), ինչպես նաև ապահովագրության պայմանա-

գրերում ներառում են ապահովագրական խարդախությունների պատժելիության վերաբերյալ նախազգուշացնող դրույթ:

85. Ապահովագրական խարդախության դեմ պայքարի վերաբերյալ Ընկերության խորհրդին և գործադիր մարմնին ներկայացվող հաշվետվություններն առնվազն ներառում են.
    1) կասկածելի դեպքերի քանակը, համառոտ նկարագրությունը,
    2) կասկածելի դեպքերի վերաբերյալ իրականացված վերլուծությունները,
    3) ապահովագրական խարդախության բացահայտված դեպքերի քանակը, համառոտ նկարագրությունը, բացահայտված խարդախությունների գծով իրականացված միջոցառումները:

ԲԱԺԻՆ 6. ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՎ ՀԱՇՎԵՏՎՈՂԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Գլուխ 14. Տեղեկատվական և հաշվետվողականության համակարգեր

86. Ներքին հսկողության համակարգը նախատեսում է Ընկերությունում հուսալի և արդյունավետ տեղեկատվական և հաշվետվողականության համակարգերի առկայություն:
87. Ընկերության հաշվապահական և այլ գրառումները, Ընկերության ներսում օգտագործվող տեղեկատվությունը պետք է լինեն արժանահավատ, ամբողջական, ներկայացվեն ժամանակին և պաշտպանված լինեն չարտոնված առնչություններից:
88. Ընկերության ներսում տեղեկատվական հոսքերն օգտագործվում են կառավարման բոլոր մակարդակներում ապահովագրական տարբեր գործառույթների/գործընթացների իրականացման և դրանց նկատմամբ մոնիթորինգ իրականացնելու համար:
89. Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանվում են Ընկերության խորհրդին ու գործադիր մարմնին ներկայացվող հաշվետվությունների ձևերը, ներկայացման կարգը և պարբերականությունը, հաշվետվությունների ներկայացման համար պատասխանատու ստորաբաժանումը/անձը: Ընկերության խորհրդին և գործադիր մարմնին առնվազն ներկայացվում են սույն կանոնակարգի 4-րդ և 5-րդ բաժիններում նշված ոլորտների վերաբերյալ հաշվետվություններ, որոնք պետք է բավարարեն սույն կանոնակարգով սահմանված նվազագույն պահանջները և հնարավորություն տան Ընկերության խորհրդին և գործադիր մարմնին.
    1) գնահատելու համապատասխան ոլորտի առկա վիճակը, փոփոխման միտումները, դրանց ազդեցությունն Ընկերության գործունեության, ռիսկայնության մակարդակի վրա,
    2) ժամանակին և համարժեքորեն արձագանքելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու տվյալ ոլորտում բացահայտված խնդիրների լուծման ուղղությամբ,
    3) գնահատելու տվյալ ոլորտների համար պատասխանատու ստորաբաժանումների/անձանց կողմից կատարված աշխատանքի որակը, նրանց գործունեության արդյունավետությունը,
    4) բարձրացնելու խորհրդի և գործադիր մարմնի կողմից որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունը՝ խորհրդին և գործադիր մարմնին որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման միջոցով:
90. Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանվում են որոշումներ ընդունելու համար անհրաժեշտ տեղեկատվությունը (հաշվետվություն, տեղեկանք, այլ), այդ տեղեկատվության տրամադրման կարգը և պարբերականությունը:
91. Ընկերությունն ապահովում է տեղեկատվության պահպանման և մշակման էլեկտրոնային համակարգերի անվտանգությունը և դրանց աշխատանքի անընդհատությունը:
92. Ընկերությունում հստակ կանոնակարգվում են Ընկերության համապատասխան ստորաբաժանումներից, Ընկերության մասնաճյուղերից տեղեկատվության ստացման, հաշվապահական հաշվառման, հաշվետվությունների կազմման և Կենտրոնական բանկ ներկայացման ընթացակարգերը:
93. Ընկերության յուրաքանչյուր մասնաճյուղի վերաբերյալ Ընկերության խորհրդին և գործադիր մարմնին խորհրդի կողմից սահմանված պարբերականությամբ ներկայացվող տեղեկատվությունը նվազագույնը ներառում է.
    1) մասնաճյուղի գործունեության վերլուծությունը, այդ թվում՝
        ա. մասնաճյուղի ապահովագրական պորտֆելի կառուցվածքը, կենտրոնացումները, փոփոխման միտումները,
        բ. մասնաճյուղի ապահովագրական պորտֆելում ընդգրկված ապահովագրության առանձին դասերի և/կամ ենթադասերի մասով վնասաբերության մակարդակը, փոփոխման միտումները,
    2) մասնաճյուղի կողմից սպասարկվող տարածաշրջանի տնտեսական վերլուծությունը,

3) հաճախորդների կողմից ներկայացված դիմում-բողոքները,
4) հաճախորդների թվաքանակի փոփոխությունների դինամիկան:

94. Ընկերությունը նախատեսում է այնպիսի ընթացակարգեր, որոնք հնարավորություն կտան ապահովելու Կենտրոնական բանկ ներկայացվող հաշվետվությունների արժանահավատությունը: Նման ընթացակարգերն առնվազն ներառում են.
1) մինչև Ընկերության գործարքների հաշվապահական ձևակերպումների կատարումը առկա տվյալների ստուգումն այն անձի կողմից, ով չի կնքել այդ գործարքները, որոշում չի կայացրել դրանք կնքելու վերաբերյալ և որևէ այլ ձևով չի մասնակցել գործարքների կնքման գործընթացին,
2) մինչև Կենտրոնական բանկ ներկայացնելը հաշվետվությունների ստուգումն այն անձի կողմից, ով չի կազմել այդ հաշվետվությունները, ինչպես նաև չի կնքել այդ գործարքները, որոշում չի կայացրել դրանք կնքելու վերաբերյալ և որևէ այլ ձևով չի մասնակցել գործարքների կնքման գործընթացին,
3) նման ստուգման արդյունքում հայտնաբերված տարբերությունների գրանցումը և դրանց առաջացման պատճառների ուսումնասիրումը և ապագայում նման դեպքերը բացառելուն ուղղված միջոցառումների առաջարկումն ու իրականացումը:

95. Ներքին հաշվետվողական համակարգի մաս կազմող հաշվետվական փաստաթղթերում արտացոլված տեղեկատվության ճշտությունը հաստատվում, իսկ հնարավորության դեպքում նաև ստուգվում է հաշվետվություն տրամադրող ստորաբաժանման ղեկավարի կողմից, իսկ նման ստորաբաժանման բացակայության դեպքում՝ հաշվետվության ներկայացման համար պատասխանատու աշխատակցի կողմից:

96. Ընկերությունն ապահովում է Ընկերության առավել կարևոր փաստաթղթերի (ապահովագրության պայմանագրեր, ներդրումներին, ապահովագրական հատուցումներին առնչվող կարևոր փաստաթղթեր և այլն) պահպանության արդյունավետ համակարգի առկայություն: Այն հնարավորություն է տալիս ապահովելու այդ փաստաթղթերի պաշտպանությունը կորստից, չթույլատրված դուրսհանումից կամ օգտագործումից: Ընկերության ներքին իրավական ակտերով սահմանվում են նաև Ընկերության առավել կարևոր փաստաթղթերի պահպանման (արխիվացման) ձևը, ժամկետները և ընթացակարգերը:

ԲԱԺԻՆ 7. ՀՍԿՈՂԱԿԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ

Գլուխ 15. Ընդհանուր դրույթներ

97. Որպես ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համակարգի տարր՝ Ընկերությունը պետք է ունենա առնվազն հետևյալ հսկողական գործառույթները.
1) ռիսկերի կառավարման գործառույթ,
2) համապատասխանության ապահովման գործառույթ,
3) ակտուարական գործառույթ,
4) ներքին աուդիտի գործառույթ:

98. Հսկողական գործառույթների (բացառությամբ՝ ներքին աուդիտի և ակտուարական գործառույթների) իրականացման համար պատասխանատու անձանց նշանակումը, նրանց լիազորությունների վաղաժամկետ դադարեցումը, վարձատրության պայմանների հաստատումը, գործունեության պարբերական գնահատումը, խրախուսման և կարգապահական պատասխանատվության միջոցների կիրառումն իրականացվում է Ընկերության գործադիր մարմնի կողմից՝ խորհրդի համաձայնությամբ:

99. Հսկողական գործառույթների առկայությունը չի ազատում Ընկերության խորհրդին կամ գործադիր մարմնին իրենց պարտականությունների կատարումից:

100. Ընկերությունը հսկողական գործառույթները և դրանց հետ առնչվող հաշվետվողականության համակարգը ներդնում է Ընկերության կազմակերպական կառուցվածքում այնպես, որ հնարավորություն տրվի նշված գործառույթներն իրականացնելու արդյունավետորեն:

101. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի/անձանց լիազորություններն ու պարտականությունները սահմանվում են խորհրդի կողմից: Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը պարբերաբար ուսումնասիրում է այդ փաստաթղթերը և անհրաժեշտության դեպքում գործադիր մարմնին և խորհրդին է ներկայացնում դրանք փոփոխելու հետ կապված իր առաջարկությունները:

102. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի համար պետք է նվազագույնի հասցվեն շահերի բախման հնարավոր դեպքերը: Եթե, այնուամենայնիվ, առկա է շահերի բախման որևէ դեպք, որը չի կարող կարգավորվել Ընկերության գործադիր մարմնի կողմից, ապա խնդիրը պետք է ներկայացվի Ընկերության խորհրդի քննարկմանն ու լուծմանը:
103. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի համար Ընկերությունն ապահովում է բավարար լիազորություններ, անկախություն և ռեսուրսներ՝ տվյալ գործառույթի համար սահմանված պարտականությունները արդյունավետորեն կատարելու և նպատակներին հասնելու համար:
104. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը պետք է՝
    1) հնարավորություն ունենա անկախ և օբյեկտիվ կարծիք հայտնելու պատասխանատվության իր ոլորտի խնդիրների, փաստացի ու հնարավոր խախտումների վերաբերյալ,
    2) հնարավորություն ունենա անհրաժեշտության դեպքում հսկողություն իրականացնելու ձեռնարկված ուղղիչ միջոցառումների և տրված առաջարկությունների իրականացման նկատմամբ,
    3) հնարավորություն ունենա իր նախաձեռնությամբ խոսելու յուրաքանչյուր աշխատակցի հետ, ստանալու իր պարտականությունները կատարելու համար անհրաժեշտ փաստաթղթերը և տեղեկությունները,
    4) հնարավորություն ունենա անմիջապես խոսելու և պարբերաբար հանդիպելու (առանց գործադիր տնօրենի ներկայության) խորհրդի նախագահի հետ,
    5) հնարավորություն ունենա ներգրավելու իր գործառույթը պատշաճ իրականացնելու համար անհրաժեշտ որակավորում և գիտելիքներ ունեցող աշխատակիցներ,
    6) հնարավորություն ունենա արդյունավետորեն օգտագործելու համապատասխան տեղեկատվական տեխնոլոգիաները, ինչպես նաև կառավարչական տեղեկատվական համակարգերը (MIS):
105. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձն Ընկերության գործադիր տնօրենի հետ պարբերաբար քննարկում է տվյալ գործառույթի ռեսուրսների համարժեքությունը և անհրաժեշտության դեպքում պահանջում ճշգրտումներ: Եթե գործառույթի իրականացման համար պատասխանատու անձն անհրաժեշտ ռեսուրսների վերաբերյալ համաձայնության չի գալիս գործադիր տնօրենի հետ, ապա այդ հարցը ներկայացվում է խորհրդի քննարկմանն ու լուծմանը:
106. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը պարբերաբար գնահատում է տվյալ գործառույթի արդյունավետությունը, անհրաժեշտության դեպքում նախաձեռնում անհրաժեշտ բարեփոխումներ և դրանց նկատմամբ մոնիթորինգ իրականացնում: Նշված գնահատման արդյունքները խորհրդի կողմից սահմանված կարգով ներկայացվում են խորհրդին:
107. Յուրաքանչյուր հսկողական գործառույթի իրականացման արդյունավետությունը պարբերաբար գնահատվում է Ընկերության խորհրդի կողմից՝ խորհրդի կողմից սահմանված չափանիշներին համապատասխան: Գնահատման իրականացման նպատակով Ընկերության խորհուրդը սահմանում է հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց կողմից խորհրդին ներկայացվող հաշվետվությունների բովանդակությունը, ֆորմատը, հաճախականությունը: Հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց կողմից խորհուրդ ներկայացվող հաշվետվություններն առնվազն հնարավորություն են տալիս խորհրդին՝
    1) գնահատելու հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց պատասխանատվության ոլորտների առկա վիճակը, փոփոխման միտումները, դրանց ազդեցությունը Ընկերության գործունեության, ռիսկայնության մակարդակի վրա,
    2) ժամանակին և համարժեքորեն արձագանքելու և անհրաժեշտության դեպքում համապատասխան միջոցառումներ ձեռնարկելու հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց կողմից բացահայտված խնդիրների լուծման ուղղությամբ,
    3) գնահատելու հսկողական գործառույթների իրականացման համար պատասխանատու անձանց կողմից կատարված աշխատանքի որակը, նրանց գործունեության արդյունավետությունը՝ հսկողական գործառույթների համար սահմանված նպատակներին հասնելու տեսանկյունից,
    4) բարձրացնելու խորհրդի կողմից որոշումների կայացման գործընթացի արդյունավետությունը՝ խորհրդին որոշումների կայացման համար անհրաժեշտ տեղեկատվության տրամադրման միջոցով:

Գլուխ 16. Ռիսկերի կառավարման գործառույթ

108. Ընկերությունը պետք է ունենա ռիսկերի կառավարման արդյունավետ գործառույթ, որը պետք է օժանդակի Ընկերությանը իր ռիսկերի ժամանակին բացահայտման, չափման, հսկողության, մոնիթորինգի և հաղորդակցման գործընթացում:

109. Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը/անձինք.
1) մասնագիտական վերլուծությունների, ռիսկերի դիտարկումների իրականացման և այլ միջոցներով օժանդակում են Ընկերության խորհրդին և գործադիր մարմնին իրենց պարտականությունների կատարման գործընթացում,
2) բացահայտում են Ընկերության գործունեությանը ներհատուկ ռիսկերը,
3) գնահատում, մոնիթորինգ են իրականացնում, օգնում են արդյունավետորեն կառավարելու բացահայտված ռիսկերը: Վերջինս ներառում է ռիսկերը կլանելու Ընկերության ունակության գնահատումը՝ հաշվի առնելով ռիսկերի բնույթը, տեղի ունենալու հավանականությունը, կոռելյացիան և հնարավոր բացասական ազդեցության աստիճանը,
4) տալիս են ապահովագրողի ռիսկի ընդհանուր նկարագիրը ինչպես ընկերության, այնպես էլ խմբի մակարդակով, եթե Ընկերությունը խմբի անդամ է հանդիսանում,
5) պոտենցիալ ռիսկերի վաղ բացահայտման և գնահատման նպատակով պարբերաբար գնահատում են ներքին և արտաքին միջավայրը,
6) դիտարկում են Ընկերության վարձատրության քաղաքականության արդյունքում առաջացող ռիսկերը, խորհրդին պարբերաբար ազդակներ են փոխանցում Ընկերության վարձատրության քաղաքականության արդյունքում ստեղծված խթանների, ինչպես նաև ռիսկերի ստանձնման վարքագծի վրա վարձատրության քաղաքականության ազդեցության վերաբերյալ,
7) մշակում են Ընկերության խորհրդի կողմից հաստատվող ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ախորժակը, ինչպես նաև առանձին ռիսկերի կառավարման քաղաքականությունները,
8) խորհրդի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն իրենց գործառույթների մասով մասնակցում են ՍՈՎԳ գործընթացին, պարբերաբար իրականացնում են սթրես-թեստեր՝ սույն կանոնակարգի 33-րդ կետի պահանջներին համապատասխան,
9) պարբերաբար խորհրդին, գործադիր մարմնին, անհրաժեշտության դեպքում նաև հսկողական գործառույթներ իրականացնող անձանց հաշվետվություններ են ներկայացնում Ընկերության ռիսկերի նկարագրի և ռիսկերի կառավարման գործընթացների վերաբերյալ,
10) փաստաթղթավորում և խորհրդին են ներկայացնում էական փոփոխությունները, որոնք ազդել են կամ կարող են ազդել Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի վրա՝ ներկայացնելով ռիսկերի կառավարման համակարգի արդյունավետության պահպանմանն ու բարելավմանն ուղղված առաջարկություններ:

110. Առնվազն եռամսյակային պարբերականությամբ ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը խորհրդին է ներկայացնում հաշվետվություններ նվազագույնը հետևյալի վերաբերյալ.
1) Ընկերության ռիսկերի գնահատումը և ռիսկերի կառավարման նպատակով ձեռնարկված քայլերը,
2) Ընկերության ռիսկերի նկարագրի փոփոխությունների գնահատումը,
3) նախապես սահմանված ռիսկի սահմանաչափերի գնահատումը (կիրառելիության դեպքում),
4) ռիսկերի կառավարման հետ կապված խնդիրները՝ կապված խոշոր ծրագրերի և ներդրումների հետ (կիրառելիության դեպքում),
5) ռիսկային իրադարձությունների գնահատումը և անհրաժեշտ կանխարգելիչ/ուղղիչ միջոցառումների ձեռնարկումը:

111. Ռիսկերի կառավարման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը ժամանակին պատշաճ կարգով խորհրդին, գործադիր մարմնին տեղեկացնում է այն բոլոր հանգամանքների մասին, որոնք կարող են էական բացասական ազդեցություն ունենալ Ընկերության ռիսկերի կառավարման համակարգի վրա:

Գլուխ 17. Համապատասխանության ապահովման գործառույթ

112. Ընկերությունն ապահովում է համապատասխանության ապահովման արդյունավետ գործառույթի առկայությունը, որը պետք է օժանդակի Ընկերությանը գործելու օրենսդրության պահանջների համապատասխան, ինչպես նաև խրախուսի և պահպանի համապատասխանության ապահովման կորպորատիվ մշակույթը:

113. Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը/անձինք առնվազն իրականացնում են.
1) Ընկերությունում էթիկական կորպորատիվ մշակույթի ձևավորման խրախուսում ու աջակցում, որն արժեքավորում է պատասխանատու վարվելակերպը և աշխատակիցների գործունեության համա-

պատասխանությունը օրենքների և այլ իրավական ակտերի, ներառյալ Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին: Այն ներառում է Ընկերության կորպորատիվ արժեքները ներկայացնող վարքագծի կանոնների վերաբերյալ սեմինարների և քննարկումների պարբերաբար կազմակերպումը՝ նպատակ ունենալով խրախուսել բարձր պրոֆեսիոնալիզմը և սահմանել աշխատակիցներից սպասվող վարքագիծը,

2) հիմնական իրավական և վերահսկողական պահանջների և դրանց՝ Ընկերության գործունեության համապատասխանության ապահովման հետ կապված ռիսկերի բացահայտում, գնահատում, կառավարում և համապատասխան շրջանառության ապահովում,
3) Ընկերության գործունեության վրա իրավական համակարգի հնարավոր փոփոխությունների ազդեցության և դրա հետ կապված հնարավոր ռիսկերի գնահատում,
4) իրավական, վերահսկողական և էթիկական պարտավորությունների հիմնական ոլորտներում պատշաճ քաղաքականության, գործընթացների ու հսկողության մեխանիզմների առկայության ապահովում և պատշաճ մոնիթորինգի իրականացում,
5) մեծ պատասխանատվություն կրող, ինչպես նաև բարձր ռիսկային գործունեությամբ զբաղվող աշխատակիցների համար հիմնական իրավական և վերահսկողական պարտավորությունների վերաբերյալ սեմինարների պարբերաբար կազմակերպում,
6) Ընկերության գործունեության համապատասխանության առումով թերությունների ու խախտումների բացահայտում, անհրաժեշտության դեպքում կանխարգելիչ միջոցառումների կիրառում:

114. Համապատասխանության ապահովման գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը/անձինք առնվազն եռամսյակային պարբերականությամբ խորհրդին է ներկայացնում հաշվետվություններ, որոնք նվազագույնը ներառում են.
1) Ընկերության գործունեության համապատասխանության հետ կապված ռիսկերի գնահատումը և ռիսկերի կառավարման նպատակով ձեռնարկված քայլերը,
2) Ընկերության տարբեր միավորների (բաժիններ, բիզնես միավորներ և այլն) գործունեության համապատասխանության գնահատումը ներքին ստանդարտներին և նպատակներին հետևելու տեսանկյունից,
3) ղեկավարների և Ընկերությունում այլ պատասխանատու աշխատանք իրականացնող անձանց հետ առնչվող համապատասխանության հետ կապված ցանկացած խնդիր, դրանց հետ կապված հետազոտությունների արդյունքները և նախաձեռնված քայլերը,
4) Ընկերության այլ աշխատակիցների կամ կազմակերպական միավորների հետ առնչվող համապատասխանության հետ կապված էական խախտումներն ու խնդիրները, դրանց հետ կապված հետազոտությունների արդյունքները և նախաձեռնված քայլերը,
5) Ընկերության կամ ցանկացած աշխատակցի նկատմամբ որևէ կարգավորող կամ վերահսկող մարմնի կողմից կիրառված տուգանքները կամ այլ պատասխանատվության միջոցները:

115. Համապատասխանության գործառույթի իրականացման համար պատասխանատու անձը պետք է ունենա լիազորություն և պարտականություն պատշաճ կարգով անմիջապես խորհրդի նախագահին տեղեկացնել Ընկերության ղեկավարների կողմից էական անհամապատասխանության դեպքերի, ինչպես նաև Ընկերության պարտավորությունների մասով Ընկերության էական անհամապատասխանության դեպքերի վերաբերյալ:

Գլուխ 18. Ակտուարական գործառույթ

116. Ընկերությունը պետք է ունենա արդյունավետ ակտուարական գործառույթ, որը պետք է օժանդակի Ընկերությանը տեխնիկական պահուստների (տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի), ապահովագրավճարների հաշվարկման և դրանց հետ կապված օրենսդրական պահանջների համապատասխանության ապահովման և օրենքով սահմանված այլ գործընթացում: Ակտուարական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձ է հանդիսանում Ընկերության պատասխանատու ակտուարը:

117. Ակտուարական գործառույթն իրականացնում է Օրենքի 36-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված գործառույթները, այդ թվում՝
1) ապահովում է ապահովագրավճարների հաշվարկման և տեխնիկական պահուստների (տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի) ձևավորման համապատասխանությունն իրավական ակտերի պահանջներին,
2) գնահատում է հաշվարկված ապահովագրավճարների և ձևավորված պահուստների (տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի) համարժեքությունն ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորություններին,

3) գնահատում է տեխնիկական պահուստների (տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի) հաշվարկման ժամանակ օգտագործվող տեղեկատվության համարժեքությունը և որակը,
4) ապահովում է Ընկերության հիմնական տնտեսական նորմատիվների, վերաապահովագրության տարեկան ծրագրի, ներդրումային գործունեության համապատասխանությունը օրենքների և այլ իրավական ակտերի պահանջներին, գնահատում է դրանց համարժեքությունը՝ Ընկերության կողմից ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումն ապահովելու տեսանկյունից,
5) ապահովում է Օրենքով և իրավական այլ ակտերով պահանջվող այլ ակտուարական հաշվարկների պատշաճ իրականացումը,
6) խորհրդի կողմից հաստատված ընթացակարգի համաձայն իր գործառույթների մասով մասնակցում է ՍՌՎԳ գործընթացին,
7) Ընկերության խորհրդի կողմից վերաապահովագրության տարեկան ծրագրի հաստատման կամ փոփոխության դեպքում ներկայացնում է իր գրավոր դիրքորոշումը վերաապահովագրության տարեկան ծրագրի կամ դրա փոփոխության վերաբերյալ,
8) գրավոր կարծիք է հայտնում Ընկերության ընդհանուր անդերռայթինգի քաղաքականության վերաբերյալ:

118. Առնվազն եռամսյակային պարբերականությամբ ակտուարական գործառույթի իրականացման համար պատասխանատու անձի կողմից խորհուրդ են ներկայացվում հաշվետվություններ հետևյալի վերաբերյալ.
1) հաշվարկված ապահովագրավճարների և ձևավորված պահուստների (տեխնիկական պահուստներում վերաապահովագրողի մասնաբաժնի) համարժեքության և իրավական համապատասխանության գնահատումը,
2) Ընկերության տնտեսական նորմատիվների, վերաապահովագրության տարեկան ծրագրի, ներդրումային գործունեության համարժեքության և իրավական համապատասխանության գնահատումը,
3) հաշվարկված ապահովագրական սակագներից շեղումների, ինչպես նաև ապահովագրության պայմանագրերի կնքման ժամանակ կիրառված զեղչերի հիմնավորվածության գնահատումը,
4) պատասխանատու ակտուարի եզրակացությունը Ընկերության ընդհանուր անդերռայթինգի և վերաապահովագրական քաղաքականության վերաբերյալ,
5) ակտուարական հաշվարկների տեսանկյունից բոլոր այն հանգամանքները, որոնք կարող են վտանգել Ընկերության կողմից ապահովագրության պայմանագրերից բխող պարտավորությունների կատարումը:

Գլուխ 19. Ներքին աուդիտի գործառույթ

119. Ընկերությունը պետք է ունենա ներքին աուդիտի արդյունավետ գործառույթ, որն առնվազն ենթադրում է անկախ և անկողմնակալ հավաստման (assurance) գործունեության իրականացում՝ ուղղված Ընկերության կառավարման, ներքին հսկողության և ռիսկերի կառավարման համակարգերի և գործընթացների արդյունավետության բարձրացմանը և նպատակայնության ապահովմանը:

120. Ներքին հսկողության համակարգը ներքին աուդիտի գործունեության առումով նվազագույնը ներառում է.
1) ներքին աուդիտի նպատակը, դերը, լիազորություններն ու պարտականությունները, գործունեության սկզբունքները,
2) ներքին աուդիտի ղեկավարի և անդամների ընտրության և նշանակման կարգը,
3) ներքին աուդիտի գործունեության շրջանակները, ներքին աուդիտի կողմից մատուցվող հավաստման ծառայությունների բնույթը,
4) ներքին աուդիտի աշխատանքների երկարաժամկետ պլանավորման գործընթացը, տարեկան աշխատանքային ծրագրի մշակման կարգը և ժամկետները, պլանավորման ժամանակ իրականացվող ռիսկերի գնահատման մեթոդաբանությունը,
5) ներքին աուդիտի կողմից իրականացման ենթակա նվազագույն աշխատանքները,
6) ներքին աուդիտի իրականացման և աուդիտորական հաշվետվությունների պատրաստման և ներկայացման կարգը և ժամկետները:

121. Ընկերությունն ապահովում է, որ ներքին աուդիտի ղեկավարը և անդամները իրենց գործառույթների իրականացման ընթացքում առաջնորդվեն հետևյալ սկզբունքներով.

1) ***Անկախության սկզբունք***, որն ապահովելու համար, ի թիվս օրենսդրությամբ սահմանված այլ պահանջների, ներքին աուդիտի ղեկավարը և անդամները՝
   ա. աուդիտորական աշխատանքի պլանավորման, իրականացման, արդյունքների ամփոփման և շրջանառության հարցերում զերծ են երրորդ անձանց միջամտությունից,
   բ. զերծ են մնում այնպիսի գործառույթների գնահատումից, որոնց իրականացման համար հանդիսացել են պատասխանատու անձ աուդիտին նախորդող տարվա ընթացքում,
   գ. իրենց աշխատանքների իրականացման ընթացքում բացառում են շահերի բախման այլ դեպքերը (շահերի բախում կարող է առաջանալ օրինակ Ընկերության խոշոր հաճախորդ լինելու կամ աուդիտի ենթակա ոլորտի վերաբերյալ խորհրդատվական ծառայություն մատուցելու արդյունքում):
2) ***Ազնվության սկզբունք***, որն ապահովելու համար ներքին աուդիտի ղեկավարը և անդամները՝
   ա. իրականացնում են իրենց գործառույթները՝ ցուցաբերելով ազնվություն, հոգատարություն և բարձր պատասխանատվություն աշխատանքի նկատմամբ,
   բ. չեն ներգրավվում անօրինական գործունեության մեջ կամ չեն դառնում այնպիսի գործողությունների մասնակից, որոնք վարկաբեկում են աուդիտորի մասնագիտությունը կամ Ընկերությանը,
3) ***Օբյեկտիվության սկզբունք***, որը ենթադրում է, որ ուսումնասիրվող գործունեության կամ գործընթացի վերաբերյալ տեղեկատվություն հավաքագրելիս, գնահատելիս և շրջանառելիս ներքին աուդիտի ղեկավարը և անդամները կիրառում են բարձր մասնագիտական օբյեկտիվություն (անկողմնակալություն): Ներքին աուդիտի ղեկավարը և անդամները իրականացնում են բոլոր էական հանգամանքների հավասարակշռված գնահատում և դատողություններ իրականացնելիս չեն առաջնորդվում սեփական կամ այլ անձանց շահերով: Օբյեկտիվության սկզբունքն ապահովելու համար ներքին աուդիտի ղեկավարը և անդամները՝
   ա. չեն ներգրավվում ցանկացած գործունեության, գործողություն կամ հարաբերության մեջ, որը կարող է վտանգել նրանց անկողմնակալ գնահատումները՝ հանգեցնելով Ընկերության շահերի ոտնահարմանը և (կամ) աուդիտորների մասնագիտական դատողությունների որակի նվազմանը,
   բ. բացահայտում են իրենց հայտնի դարձած բոլոր էական փաստերը, որոնք չբացահայտվելու դեպքում կաղավաղվեն աուդիտի ենթակա գործունեությանն առնչվող հաշվետվությունները,
4) ***Գաղտնիության սկզբունք***, որը ենթադրում է, որ ներքին աուդիտի ղեկավարը և անդամները ապահովում են իրենց կողմից ստացված տեղեկատվության գաղտնիությունը և չեն բացահայտում առանց համապատասխան իրավասության առկայության՝ պայմանավորված բացահայտում կատարելու իրավական կամ մասնագիտական պարտավորությամբ (եթե առկա չէ գաղտնիք համարվող տեղեկատվության տրամադրման օրենսդրական արգելք): Գաղտնիության սկզբունքն ապահովելու համար ներքին աուդիտի ղեկավարը և անդամները՝
   ա. զգուշավորություն են ցուցաբերում իրենց պարտականությունների իրականացման ընթացքում ձեռքբերված տեղեկատվության օգտագործման և պահպանման հարցում,
   բ. չեն օգտագործում տեղեկատվությունը անձնական շահի համար կամ ցանկացած այլ կերպ, որը կհակասի օրենքներին կամ Ընկերության սահմանված նպատակներին և էթիկայի նորմերին (եթե առկա չէ գաղտնիք համարվող տեղեկատվության տրամադրման օրենսդրական պահանջ):
5) ***Կոմպետենտության սկզբունք***, որը ենթադրում է, որ ներքին աուդիտի ղեկավարը և անդամները տիրապետում են համապատասխան գիտելիքների, հմտությունների և փորձառության, որոնք անհրաժեշտ են ներքին աուդիտի գործառույթն արդյունավետորեն իրականացնելու համար: Կոմպետենտության սկզբունքն ապահովելու համար ներքին աուդիտի ղեկավարը և անդամները՝
   ա. ներգրավվում են միայն այնպիսի ոլորտներում, որոնց համար ունեն անհրաժեշտ գիտելիքներ, հմտություններ և փորձառություն,
   բ. շարունակաբար կատարելագործում են իրենց ունակությունները և իրենց կատարած աշխատանքի արդյունավետությունն ու որակը:

122. Ներքին աուդիտի աշխատանքների պլանավորումը կատարվում է ռիսկերի գնահատման հիման վրա, որոնց արդյունքները պատշաճ կարգով փաստաթղթավորվում են: Ներքին աուդիտի ղեկավարը պատասխանատու է ռիսկերի վրա հիմնված աուդիտորական աշխատանքների երկարաժամկետ պլանավորման, ինչպես նաև ռիսկերի վրա հիմնված տարեկան աշխատանքային ծրագրի մշակման համար: Ներքին աուդիտի ղեկավարը պարբերաբար գնահատում և անհրաժեշտության դեպքում վերանայում է աշխատանքների երկարաժամկետ պլանավորման արդյունքները, ինչպես նաև տարեկան աշխատանքային ծրագիրը: Յուրաքանչյուր վերանայում (այդ թվում՝ վերանայման հիմնավորումները) պատշաճ կարգով փաստաթղթավորվում են:

123. Ներքին աուդիտի աշխատանքների պլանավորման ժամանակ աշխատանքների առաջնահերթությունները որոշելիս նվազագույնը հաշվի են առնվում.
   1) Ընկերության ռիսկերի կառավարման համակարգը, այդ թվում՝ ռիսկերի կառավարման ռազմավարությունը, ռիսկի ախորժակը, ռիսկերի առանձին տեսակների կառավարման քաղաքականությունները,
   2) Ընկերության գործառնությունների և գործընթացների ռիսկայնության գնահատման արդյունքները,
   3) Ընկերության գործառնությունների և գործընթացների կարևորությունը Ընկերության նպատակներին հասնելու տեսանկյունից, բարդությունը, ծավալները, այդ ոլորտի աշխատակիցների մասնագիտական պատրաստվածության (կոմպետենտության) աստիճանը,
   4) նախկինում իրականացված համանման աուդիտի արդյունքները:
124. Ներքին աուդիտի տարեկան աշխատանքային ծրագիրը ներառում է Օրենքի 35-րդ հոդվածի 5-րդ մասով սահմանված տեղեկությունները, ինչպես նաև աուդիտի իրականացման ժամանակացույցը:
125. Ներքին աուդիտի աշխատանքները նվազագույնը ներառում են.
   1) Ընկերության քաղաքականության, գործընթացների, դրանց փաստաթղթավորման և հսկողական մեխանիզմների կիրառման համարժեքության և արդյունավետության դիտարկումը և գնահատումը ընկերության, խմբի (եթե ընկերությունը խմբի անդամ է հանդիսանում), ընկերության մասնաճյուղերի (առկայության դեպքում), բիզնես միավորի, բիզնես ոլորտի, ինչպես նաև բաժնի կամ այլ կազմակերպական միավորի կտրվածքով,
   2) ռիսկերի կառավարման, համապատասխանության ապահովման և ակտուարական գործառույթների արդյունավետության պարբերական գնահատումը,
   3) Ընկերության կառավարման և տարբեր մակարդակներում որոշումների կայացման գործընթացների գնահատումը, որոշումների կայացման գործընթացում օգտագործվող տեղեկատվության արժանահավատության գնահատումը,
   4) ռիսկերի բացահայտման և այդ ռիսկերի կառավարման ուղղված արդյունավետ և ժամանակին քայլերի ձեռնարկման գնահատումը,
   5) աշխատանքային փաստաթղթերի և գրանցումների ամբողջականության և համարժեքության, ինչպես նաև գործարքների համապատասխան և պատշաճ հաշվառման գնահատումը,
   6) Ընկերության ֆինանսական հաշվետվություններում ակտիվների պատշաճ ներկայացման, իսկ անհրաժեշտության դեպքում՝ ակտիվների ֆիզիկապես առկայության և ակտիվների պահպանման եղանակների գնահատումը (օրինակ՝ կանխիկ դրամ) և պարտավորությունների լիովին բացահայտված և պատճառաբանված լինելու գնահատումը,
   7) Ընկերության և Ընկերության ղեկավարների կողմից իրականացվող գործունեության համապատասխանության գնահատումը գործող օրենքների, նորմատիվ և այլ իրավական ակտերի պահանջներին, այդ թվում՝ Ընկերության կարգերին (կանոնակարգերին, ընթացակարգերին, հրահանգներին, ուղեցույցներին և այլն),
   8) Ընկերության աշխատակիցների և կազմակերպական միավորների կողմից Ընկերության ներքին քաղաքականություններին և կարգերին (կանոնակարգերին, ընթացակարգերին, հրահանգներին, ուղեցույցներին) համապատասխան գործելու գնահատումը,
   9) եկամուտների հաշվառման և իրականացված ծախսերի հիմնավորվածության գնահատում՝ օրենսդրության և ընկերության ներքին կանոնակարգերի համապատասխանության տեսանկյունից (օրինակ՝ ապահովագրավճարների համար կիրառված զեղչերի, վճարումների ուշացումների համար տույժերի, ծառայությունների դիմաց վճարումների օրինականության ստուգում),
   10) յուրաքանչյուր աշխատակցի կողմից իր իրավասությունների շրջանակներում ներքին հսկողության համակարգում իր գործառույթների իրականացման գնահատումը,
   11) ներքին հսկողության համակարգի արդյունավետության և Ընկերության ռիսկերին համարժեք լինելու գնահատումը,
   12) Ընկերության աշխատակիցներին տրված լիազորությունների (օրինակ՝ պայմանագրերի կնքում, լիազորագրերի տրամադրում, իրավական կամ հաշվապահական փաստաթղթերի ստորագրում) ուսումնասիրումը և գնահատումը՝ հնարավոր խախտումները և չարաշահումները բացառելու նպատակով,
   13) Ընկերության ներքին տեղեկատվական և հաշվետվողականության համակարգի գնահատումը,
   14) ՍՈՎԳ գործընթացի իրականացման արդյունավետության ուսումնասիրումը և գնահատումը,
   15) Ընկերությունում ներդրված ԳԳԱԿ համակարգի արդյունավետության և համարժեքության գնահատումը, գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի

համապատասխանության գնահատումը Ընկերության գործարար գործընթացների անընդհատության կառավարման քաղաքականությանը, գործարար գործընթացների անընդհատության ապահովման միջոցառումների ծրագրի թեստավորման և վերանայման արդյունավետության գնահատումը,

16) Ընկերության կողմից պատվիրակված գործառույթների արդյունավետության գնահատումը:

126. Ներքին աուդիտի գործառույթն ապահովում է, որ Ընկերության բոլոր էական ռիսկային ոլորտները և պարտավորությունները ողջամիտ ժամանակահատվածում և պարբերականությամբ ենթարկվեն աուդիտի:
127. Յուրաքանչյուր աուդիտի համար ներքին աուդիտորները մշակում են ծրագիր, որով սահմանվում են տվյալ աուդիտի նպատակը, շրջանակը, տևողությունը, ռեսուրսների բաշխումը, ինչպես նաև անհրաժեշտ այլ մանրամասներ:
128. Աուդիտի պլանավորման ժամանակ ներքին աուդիտորները հաշվի են առնում.
    1) աուդիտի ենթակա գործառույթների նպատակները, այդ գործառույթների իրականացման հսկողական մեխանիզմները,
    2) աուդիտի ենթակա գործառույթների, նպատակների, ռեսուրսների, գործառնությունների հետ կապված էական ռիսկերը և այն միջոցները, որոնք օգտագործվում են ռիսկերի հնարավոր ազդեցությունը թույլատրելի մակարդակի վրա պահելու համար,
    3) աուդիտի ենթակա գործառույթների կառավարման, ռիսկերի կառավարման և ներքին հսկողության համարժեքությունն ու արդյունավետությունը,
    4) աուդիտի ենթակա գործառույթների կառավարման, ռիսկերի կառավարման և հսկողության համակարգերի էական բարելավման հնարավորությունները:
129. Աուդիտի պլանավորման ժամանակ ներքին աուդիտորներն իրականացնում են աուդիտի ենթակա գործառույթին բնորոշ ռիսկերի նախնական գնահատում, ինչպես նաև տվյալ գործառույթի գծով էական սխալների, խարդախությունների, անհամապատասխանությունների և այլ ռիսկային գործոնների ի հայտ գալու հավանականությունների գնահատում: Աուդիտի նպատակները պետք է համահունչ լինեն այդ գնահատման արդյունքներին:
130. Աուդիտի շրջանակները պետք է լինեն բավարար՝ աուդիտի նպատակներին հասնելու համար:
131. Ներքին աուդիտորները պետք է իրականացնեն ռեսուրսների արդյունավետ բաշխում աուդիտի սահմանված նպատակներին հասնելու համար՝ հաշվի առնելով աուդիտի ենթակա գործառույթների բնույթը, բարդությունը, ժամանակային սահմանափակումները, առկա ռեսուրսները:
132. Ներքին աուդիտը մերժում է Ընկերության գործադիր մարմնի կողմից աուդիտի կամ այլ գործողությունների իրականացման պահանջը, եթե այն չի համապատասխանում ընկերության խորհրդի կողմից հաստատված ներքին աուդիտի գործառույթի նպատակներին կամ կարող է խոչընդոտել աուդիտի տարեկան ծրագրի արդյունավետ իրականացմանը:
133. Աուդիտի պլանավորման ժամանակ ներքին աուդիտորները մշակում են նաև աշխատանքների իրականացման ծրագիր՝ սահմանելով տեղեկատվության բացահայտման, վերլուծության, գնահատման և փաստաթղթավորման ընթացակարգերը: Աշխատանքային ծրագիրը հաստատվում է նախքան աուդիտի սկիզբը, իսկ դրանում կատարվող ցանկացած փոփոխություն հաստատվում է ողջամիտ ժամկետում:
134. Ներքին աուդիտորները բացահայտում, վերլուծում, գնահատում և փաստաթղթավորում են բավարար տեղեկատվություն աուդիտի նպատակներին հասնելու համար:
135. Ներքին աուդիտի աշխատակիցներին տրվում են բավարար լիազորություններ իրենց պարտականությունները կատարելու համար: Նրանք պետք է իրավասու լինեն ստանալու բոլոր անհրաժեշտ փաստաթղթերը (տեղեկությունները) և մուտք գործելու ստուգվող ստորաբաժանում ու այլ տարածքներ, որտեղ պահվում են փաստաթղթեր (արխիվներ), կանխիկ դրամ, այլ արժեքներ (դրամապահոցներ), տվյալների համակարգչային մշակումներ՝ ստուգվող ստորաբաժանման ղեկավարի կամ նրա կողմից լիազորված աշխատակցի պարտադիր ներգրավմամբ:
136. Ներքին աուդիտորները Ընկերությունում իրականացված յուրաքանչյուր աուդիտի արդյունքներն ամփոփում են Օրենքի 35-րդ հոդվածով սահմանված հաշվետվությամբ: Նշված հաշվետվությունը տրամադրվում է աուդիտի ենթարկված միավորի ղեկավարին: Վերջինս հաշվետվության վերաբերյալ տալիս է գրավոր կարծիք՝ արտահայտելով իր համաձայնությունը կամ անհամաձայնությունը՝ համապատասխան հիմնավորումներով, որը ստորագրվում է աուդիտի ենթարկված միավորի ղեկավարի կողմից և կազմում է հաշվետվության անբաժան մասը:
137. Ներքին աուդիտը նվազագույնը կատարում է հետստուգումային հսկողություն Ընկերությունների ստորաբաժանումների կողմից այն միջոցառումների իրականացման նկատմամբ, որոնք առաջարկ-

վել են ներքին և արտաքին աուդիտի արդյունքում և հաստատվել են Ընկերության խորհրդի կողմից կամ առաջարկվել են Կենտրոնական բանկի ստուգումների արդյունքում:

138. Հետստուգումային հսկողության արդյունքների հիման վրա, սահմանված ժամկետում, իսկ այդպիսին սահմանված չլինելու դեպքում՝ առնվազն եռամսյակը մեկ, համապատասխան պատասխանատու անձանց կողմից կազմվում և Ընկերության խորհրդին են ներկայացվում հաշվետվություններ՝ ներքին և արտաքին աուդիտի, ինչպես նաև Կենտրոնական բանկի ստուգումների արդյունքներով կատարված առաջարկությունների և/կամ հանձնարարականների իրականացման վերաբերյալ: Խորհրդին ներկայացվող հաշվետվությունները նկարագրում են Ընկերությունում առկա նշանակալից ռիսկերը, հսկողության միջոցառումները, կորպորատիվ կառավարման խնդիրները (եթե դրանք կան):
139. Ներքին աուդիտը պատշաճ կարգով փաստաթղթավորում և պահպանում է իր կողմից իրականացված աուդիտի հետ կապված բոլոր հիմնական փաստաթղթերը, այդ թվում՝ ներքին աուդիտի եզրահանգումները հիմնավորող դիտարկումների, վերլուծությունների արդյունքները, աուդիտի ընտրանքի մեթոդաբանությունը, տվյալ մեթոդաբանության ընտրության հիմնավորումը: Ներքին աուդիտի աշխատանքային փաստաթղթերը պարունակում են տեղեկատվություն ներքին աուդիտի բոլոր փուլերի և գործընթացների վերաբերյալ՝ ներառյալ աուդիտի աշխատանքների պլանավորում, իրականացում, արդյունքների ամփոփում, հետագա հսկողության իրականացում:

ԲԱԺԻՆ 8. ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԻ ՊԱՏՎԻՐԱԿՈՒՄ

Գլուխ 20. Գործառույթների պատվիրակում

140. Ներքին հսկողության համակարգը Ընկերության կողմից գործառույթների պատվիրակման առումով նվազագույնը նախատեսում է.
    1) Ընկերության կողմից գործառույթների պատվիրակման վերաբերյալ որոշումների կայացման ներքին ընթացակարգը,
    2) գործող օրենսդրության և Ընկերության ներքին իրավական ակտերի պահանջներին կոնտրագենտների համապատասխանությունը գնահատելու ներքին ընթացակարգերը,
    3) պատվիրակված գործառույթների մասով տեղեկատվության ստացման և հսկողության իրականացման ներքին ընթացակարգերը,
    4) պատվիրակման արդյունքում ծագող ռիսկերի բացահայտման և կառավարման առումով ներքին ընթացակարգերը:
141. Ընկերության կողմից պատվիրակված գործառույթների առկայությունը չպետք է թուլացնի Ներքին հսկողության համակարգը: Պատվիրակված գործառույթների մասով Ընկերությունը պետք է առնվազն պահպանի հսկողության և ռիսկերի կառավարման նույն մակարդակը, ինչը կկիրառվեր չպատվիրակված գործառույթների նկատմամբ:
142. Հսկողական գործառույթների պատվիրակման դեպքում կոնտրագենտի հետ կնքվող պայմանագրով սահմանված վարձատրության պայմանները պետք է համադրելի լինեն Ընկերության վարձատրության քաղաքականության նպատակների և չափանիշների հետ:

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 116-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Նպատակ ունենալով ստեղծել նպաստավոր պայմաններ ներդրումային ֆոնդերի կառավարման ադմինիստրատիվ գործառույթների արդյունավետության բարձրացման և ծախսատարության նվազման համար,

հաշվի առնելով, որ այդ նպատակով Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի կողմից 2012 թվականի դեկտեմբերի 25-ին ընդունվել էր պաշտոնական պարզաբանում, ըստ որի այն ուժի մեջ է մինչև Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի կողմից համապատասխան կանոնակարգի ընդունումը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 53-րդ հոդվածի 5-րդ մասը, 54-րդ հոդվածի 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ մասերը, 55-րդ հոդվածի 3-րդ մասը, 56-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 57-րդ հոդվածի 2-րդ մասը, 58-րդ հոդվածի 1-ին մասի 10-րդ կետը, 3-րդ և 4-րդ մասերը, 60-րդ հոդվածի 2-րդ մասը, 61-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետը և 4-րդ մասը, 62-րդ հոդվածը, 66-րդ հոդվածի 1-ին մասը, և

ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով, 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը հաստատելու մասին» թիվ 116-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարիչների և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի գրանցումն ու լիցենզավորումը, ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի, ինչպես նաև ներդրումային ֆոնդի կառավարչի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի ներկայացուցչությունների գրանցումը, ներդրումային ընկերությունների վերագրանցումը և վերալիցենզավորումը՝ որպես ներդրումային ֆոնդի կառավարիչ, ներդրումային ֆոնդի կառավարչի կանոնադրական կապիտալում նշանակալից մասնակցություն ձեռք բերելը, ներդրումային ֆոնդի կառավարիչների, դրանց մասնաճյուղերի և օտարերկրյա ներդրումային ֆոնդի կառավարչի մասնաճյուղերի կողմից գործարար ծրագրի, դրա փոփոխությունների և դրա իրականացման վերաբերյալ հաշվետվությունների ներկայացման կարգը, ձևը և ժամկետները» կանոնակարգ 10/01-ը (այսուհետ՝ Կանոնակարգ) լրացնել 2.8-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«2.8. Կառավարիչը կարող է միաժամանակ իրականացնել իր կողմից կառավարվող ֆոնդերի (բացառությամբ պարտադիր կենսաթոշակային ֆոնդերի) թողարկած արժեթղթերի պահառություն, որի համար Օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված թույլտվությունը համարվում է բոլոր կառավարիչներին տրված: Օրենքի 52-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ կետով նախատեսված լրացուցիչ ծառայության վերաբերյալ սույն կանոնակարգով սահմանված դրույթները կիրառվում են այլ անձանց կողմից կառավարվող ֆոնդերի փայերի կամ բաժնետոմսերի՝ կառավարչի կողմից պահառության իրականացման նկատմամբ:»:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀՀ կենտրոնական բանկի նախագահ Ա. ՋԱՎԱԴՅԱՆ
18 ապրիլի 2013 թ., N 104-Ն

* *Ոչ պաշտոնական հրատարակություն:*
Ընդունված է ՀՀ ԿԲ խորհրդի կողմից 2013 թ. ապրիլի 16-ին:
Գրանցված է ՀՀ արդարադատության նախարարության կողմից 29.05.2013 թ. (ՀՀՊՏ N18 (462), 17.06.2013):

*Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի մայիսի 2-ի թիվ 119-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին**

Հաշվի առնելով «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին Հայաստանի Հանրապետության 2012 թվականի նոյեմբերի 12-ի թիվ ՀՕ-207-Ն օրենքի 14-րդ հոդվածով կատարված լրացումը,

նպատակ ունենալով մեղմացնել պարտադիր կենսաթոշակային ֆոնդի կառավարիչների նկատմամբ սահմանված ծանրաբեռնող կարգավորման պահանջները՝ միաժամանակ բացառելով տվյալ պահանջների մեղմացման հետևանքով ֆոնդի մասնակիցների շահերի վտանգումը,

հիմք ընդունելով «Ներդրումային ֆոնդերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 59-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետը, 67-րդ հոդվածի 1-ին, 2-րդ և 4-րդ մասերը և «Կուտակային կենսաթոշակների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 30-րդ հոդվածը ու 42-րդ հոդվածի 3-րդ մասը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 20-րդ հոդվածի «ե» կետով և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածով և 70-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը ո ր ո շ ու մ է .

1. Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2009 թվականի մայիսի 2-ի ««Ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը (ներառյալ՝ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ներդրումային ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափը), տնտեսական նորմատիվների խախտումների՝ ներդրումային ֆոնդի կառավարչի լիցենզիան (թույլտվությունը) ուժը կորցրած ճանաչելու հիմք համարվող նվազագույն չափը» կանոնակարգ 10/02-ը հաստատելու մասին» թիվ 119-Ն որոշմամբ հաստատված «Ներդրումային ֆոնդի կառավարչի գործունեության հիմնական տնտեսական նորմատիվները, դրանց սահմանաչափերը (ներառյալ՝ ներդրումային ֆոնդի կառավարչի կողմից կառավարվող յուրաքանչյուր ներդրումային ֆոնդում կառավարչի պարտադիր մասնակցության նվազագույն չափը), տնտեսական նորմատիվների խախտումների՝ ներդրումային ֆոնդի կառավարչի լիցենզիան (թույլտվությունը) ուժը կորցրած ճանաչելու հիմք համարվող նվազագույն չափը» կանոնակարգ 10/02-ը լրացնել 21.1-րդ կետով՝ հետևյալ բովանդակությամբ.

